ԷՍՊԻՏԵՐ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

X

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Մեր թարգմանիչ վարդապետները	3
Երջանկաճիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի կենսագրությունը	8
ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ.— Նոր ծրագիր Վարագա երկրագործության	16
ՇԱՀԱՆ-ՍԻՄՈՆ.— Կոմիտաս վարդապետ	25
Վարդան Կաֆայեցու չափածո տոմարը	29
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ.— Հաղարծին վանքը և նրա վիմագիր արձանագրությունները	38
ՄԱՏՐ ԱԹՈՌՈՒՄ	44
ՃԵՄԱՐԱՆԱՍԵՐ.— Սրբոց Թարգմանչաց տոնը Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում	46
Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Հնդկաստանի կուլտուրայի և արվեստի գործիչների պատվիրակությունը Երևանում	48
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	53
Գեորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի մանվան քառասունքը երուսաղեմի մեջ	57
Հոգեճանգիստ և հիշատակի երեկո Ամենայն Հայոց Հայրապետի վախճանման առթիվ	58
Հոգեճանգիստ երջանկաճիշատակ Գեորգ Զ. Հայրապետի Քառասունքի առթիվ	59
Գերաշնորհ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆյան Մարսիլիոն մեջ	59
Ռումանահայ թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոսի ելույթները Սոֆիայի մեջ	59
Ա. Հ.— «Ավետարանի պատգամները», Սիոն եպիսկոպոս	61

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1954 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ազգային-եկեղեցական տոների շարքում միշտ էլ առանձնահատուկ հանդիսությամբ և կարևորությամբ նշվել է մեր հռամեծ թարգմանիչ վարդապետների՝ ՄԵՍՐՈՊԻ, ԵՂԻՇԵԻ, ՄՈՎՍԵՍ ՔԵՐԹՈՂԻ, ԳԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ, ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ և ՆԵՐՍԵՍ ԿԼԱՅԵՑՈՒ (ՇՆՈՐՀԱԼՈՒ) պանծալի տոնը, որովհետև անմոռանալի և մեծ է եղել նրանց երախտիքը հայ գրականության և հայ ինքնուրույն մշակույթի ստեղծման և զարգացման բնագավառում:

Մեր թարգմանիչ վարդապետների տոնը պանծացումն է առավելապես հայ գրի և դպրության, հայ մշակույթի ընդհանրապես:

Հայ ժողովուրդը որպես աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը, անցել է մշակույթի երկար ճանապարհ: Այդ ճանապարհի վրա մեր թարգմանիչ վարդապետները մի անկրկնելի գանձ ժառանգություն են թողել հայ ժողովրդին: Թարգմանիչները անհուն սիրով սիրել են իրենց ժողովրդին, Հայրենիքին, Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն, և իրենց ստեղծագործություններում արտացոլել են հայ ժողովրդի հավատի և հոգու մեծությունը, նրա հերոսական պայքարը, նրա բաղձանքներն ու երազները: Մեր թարգմանիչ վարդապետների գրական, փիլիսոփայական հայրենաշունչ երկերը ոգեվորել ու դաստիարակել են սերունդներին: Նրանք երգ ու երազ են տվել հայ ժողովրդին նրա պատմության մռայլ և անարև օրերին. նրանք հերոսական շունչ են դրել հայության սրտի և հոգու մեջ, և դարձրել նրան անպարտելի, տոկուն և արի զալիք բոլոր չրհեղեղների և փոթորիկների առաջ: Մեր թարգմանիչ վարդապետների երգն ու աղոթքը իրենց շրթներին, նրանց ստեղծած հայրենասիրական վառ կերպարները իրենց հոգում, հայ սերունդները իջել են մարտի դաշտ՝ պաշտպանելու Հայրենիքն ու նրա սրբությունները, կռվել, սիրել, աշխատել ու ստեղծագործել են նրանց վառ տեսիլքներով ու գաղափարով: Թարգմանիչների ստեղծած գրականությունը մի կազմակերպող, ոգեշնչող ուժ է հանդիսացել հայ ժողովրդի կյանքում, որը հանուն Հայրենիքի և նրա սրբությունների, հանուն հոգևոր արժեքների մղել է հայ ժողովրդին դեպի հերոսական մարտիրոսություն:

Գրի ու դպրության, ընդհանրապես լուսավորության և մշակույթի նկատմամբ բաց է եղել հայ ժողովրդի ազատատենչ և լուսաբաթախ հոգին հազարամյակների ընթացքում. անա թե ինչո՛ւ մեր ժողովրդի զգաց-

մանրքերի և հավատի առաջ սրբերի շարքն են դասվել նաև հայ ժողովրդի լուսավորության գործին նվիրված գրչի մշակները ու մտքի մեծ վաստակավորները:

5-րդ դարը մեր գրականության պատմության մեջ վերին ասպիճանի մի նշանակալից երևույթ է հանդիսանում: Այդ դարում մեր երկիրն ու մեր ժողովուրդը գտնվում էին երկու քարի, երկու կրակի միջև: Հայ գիրն ու գրականությունը ստեղծվում են պատմական այնպիսի իրադրության մեջ, երբ օրակարգի էր դրված հայ պետականության ինքնուրույնությունն ու անկախությունը, և երբ հայ մշակույթը եղծվելու վտանգի առաջ էր կանգնած՝ հունա-ասորական մշակույթների ներթափանցող ազդեցությամբ: Մեր ԵՐԿՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆՆ ու ԺՈՂՈՎՐԴԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ բաժանված էին երկու թշնամի ու գիշատիչ պետությունների՝ Բյուզանդիոնի և Տիգրանի միջև: Երկրի պառակտվածությունը լուրջ վտանգ էր ներկայացնում հայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար: Այդ ճգնաժամային օրերին ժամանակի առաջավոր ու հայրենասեր մարդկանց համար օրվա առաջնահերթ խնդիրն էր ստեղծել մի այնպիսի ամուր ՊԱՏՎԱՆԴԱՆ, ՄԻ ԱՅՆՊԻՍԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՁԵՎՔ, որը հնարավորություն տար Հայաստանի երկու մասերի միջև ստեղծելու ազգային-մշակութային հոգևոր կապ: Միակ արմատական միջոցը այդ անել կացությունից դուրս գալու— այդ սեփական գիր և գրականություն ունենալու ճարն էր. միա՛յն ու միա՛յն ինքնուրույն ազգային գրականության և մշակույթի ստեղծումով կարելի էր մի զորավոր գաղափարական պատնեշ կանգնեցնել ընդդեմ Իրանի և Հռոմի: Անա թե ինչո՛ւ 5-րդ դարի սկզբներում հայ ժողովրդի համար ստեղծված քաղաքական այդ ծանր իրադարձությունը անհրաժեշտություն դարձրեց դիմելու վճռական միջոցների:

Արդարև, 5-րդ դարում ստեղծված հայ գիրն ու դպրությունը, հայ ազգային կուլտուրան ի նպաստ դրվեցին հայության երկու մասերի համար էլ. Ս. Մեսրոպը սկսեց «երագապէս վարդապետիլ զարևմտեայսն որպէս զարևելեայսն» (Խորենացի): ԵՐԿՈՒ ՄԱՍԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԷՐ ՏԵՍՆՈՒՄ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԶՈՐ ԱԶԴԱԿՆԵՐԻՑ ՄԵԿԸ: «Յայնմ ժամանակի Լրանելի և ցանկալի աշխարհն Հայոց անպայման սքանչելի լինէր» (Կորյուն), որովհետև ստեղծվել էին հայ գիրն ու գրականությունը, որոնք ի սպաս դրվեցին հայության, դրանցով մշակվեց հայ ժողովրդի մեջ ազգային ամուր գաղափարախոսություն, զարթնեց հայ ժողովրդի հոգում ազգային ինքնագիտակցությունը և նա ազատագրական պայքարի դուրս եկավ Բյուզանդիոնի և Տիգրանի դեմ:

5-րդ դարը հայ ժողովրդի ինքնագիտակցության և հերոսական գոյամարտերի դարաշրջանն էր. հայ ժողովուրդը կռվում էր սրով և գրչով հույների և Քաղկեդոնի դեմ, պարսիկների և զրադաշտական կրոնի դեմ, կռվում էր հավասար առելությամբ և կրքոտությամբ, հանուն ազգային անկախության, հանուն ինքնուրույն հայ մշակույթի, հանուն վառ ապագայի: Քաղաքական անկախությունը կորցնելուց հետո, այդ ազատագրական, գաղափարական պայքարը, ժամանակի առաջավոր մտավորականության գլուխ կանգնած, ղեկավարում էին մեր բարգմանիչ վարդապետները:

Հայ գիրն ու գրականությունը, հայոց լեզուն, հայ ժողովրդի ազգային գոյության պահպանման և ամրապնդման գործում պատմական մեծ նշանակություն ունեցան անցյալում: Եվ առաջին մարդը, որի հոգում հասունացել էր սեփական գիր ու գրականություն ունենալու գաղափարը՝ դա Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑՆ էր, մեր բարգմանիչ վարդապետների պարագլուխը, անմահ Օրականցին՝ «գերազանցեալ Ք՚ան զամենայն, տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւ պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծատոր, ուսուցանելով անձանձրոյթ» (Խորենացի): Ս. Մեսրոպը՝ նոր Մովսեսը, որ բերեց «զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ», որով լուսավորվեց «թոռգոմայ ազգ»ը, «Ճայրական չափուն ծնեալ զծնունդս նորոգ և սքանչելի Ս. Աչովն իւրով, զնշանագիրս հայերէն լեզուի...»: Օրականի մեծ սուրբը հանդիսացավ հայության առաջին մեծ ուսուցի-

չը, որի ծնկների առաջ, առաջին անգամ, հայ ուսումնատենչ երիտասարդները սովորեցին մեր մեծասքանչ լեզվի տառերը:

Ովքե՞ր էին մեր մյուս թարգմանիչ վարդապետները:

Անա ԵՂԻՇԵՆ՝ Ավարայրի բլբուլը, զգայուն բանաստեղծ, մեծ հայրենասեր, որը անմահ գրչով նկարագրել է հայ ժողովրդի առաջին ամենամեծ հերոսական ազատագրական պայքարը՝ Վարդանանց հերոսամարտը պարսիկ բռնակալության դեմ. «Ոչ յօժարիմք զբշուառութիւն ազգիս մերոյ ողբալ...»: Եղիշեի Վարդանանց պատմությունը մի դյուցազներգություն է հանուն հայ հոգու, հավատի, հողի ազատության և անձեռնմխելիության: Շարժվում է ժողովրդական գեղը դեպի Ավարայր «Վասն Յիսուսի, վասն Հայրենեաց»: Ճակատներ պարսիկ փղերի դեմ. «ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, շինականաց և ազատաց, զքահանայից և զմենակեցաց, երևեցան ամենեքեան զինեալք և սպառազինեալք, սուր ընդ մէջ և վանան ի ձեռին»: Ավարայրը փառքն է հայ ժողովրդի արիության և ազատասիրության. «Վարդանանց հերոսամարտը եղել է, կա և կմնա առնավետ ազգապանծ էջը հայոց պատմության, որ դարեր անընդհատ ոգեշընչել և մխիթարել է հայազգ սերունդներին, ազգային քաղաքական առաքինության ուղիներ պատգամել Հայրենիքին, Ազգին, Եկեղեցուն» (Գեորգ Զ. Կաթողիկոս):

5-րդ դարում, հայ երկնակամարի վրա փայլում է մի ուրիշ լուսատու աստղ ևս՝ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ, հայոց քերթողահայր և պատմահայր անմահ Խորենացին, որի «Հայոց պատմությունը» երկրորդ ավետարանն է եղել հայ ժողովրդի համար: Նա ապրում է «ցաժան և վատ ժամանակներում», երբ, «Ողբ»ի բառերով ասած, «վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն, դրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ շարափառութիւն, մարտք ի ներքուստ և մարտք ներքուստ»: Ընդհանուր հուսալքումի, նահանջի այդ օրերին, Խորենացին բարձրացնում է իր հայրենասիրական հզոր ձայնը, խրախուսանքի, քաջալերանքի վառ խոսքեր է ասում հայ ժողովրդին, հիշեցնում է նրանց Հայկի, Արամի, մեր ազատատենչ և հերոս նախնիների սխրագործությունները և բելադրում է ընթանալ նրանց նանապարհով, որ «բէպէտ և եմք ածու փոքր և թուով յոյժ ընդ փոքու սանմանեալ... սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի»: Խորենացու «Ողբ»ը— հայրենասերի ողբ է, ոչ հուսահատական ողբ, այլ արիացնող: Նրա «Ողբ»ը ծնեց Վանանյանց շարժումը: Խորենացին անմահ է, ինչպես իրը՝ հայ ժողովուրդը:

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՆ դրսևորում է հայ փիլիսոփայական մտքի խորությունը, բռիչքը, և գերազանցությունը իր ժամանակակիցների վրա. «Բազում դպրութեան ազգաց հմուտ, պարծանք Արեւելեցւոց... ևս առաւել Հայոց աշխարհին»: Եվ ոչ միայն այդքան. ուսմամբ և գիտությամբ գերազանցել է նա բոլորին, գիտությամբ՝ անհաղթ, եռամեծ փիլիսոփա, որ ժամանակի կուլտուրական կենտրոններում շատ բարձր է պահել հայ փիլիսոփայական մտքի գերազանությունը, և իր կուտ տրամաբանությամբ, փիլիսոփայական խորացմամբ և ընդգրկումով «Անհաղթ» փիլիսոփա է կոչվել. «յարեաւ յաղթող և քաջ սպառազէնն Դաւիթ, եկաց յոտին առաջի բազմութեան՝ որպէս զամուր լեառն երկաթի...»:

5-րդ դարում ստեղծված հայ գիրն ու գրականությունը ծաղկում են հետագա դարերում. հայ ժողովուրդը վարում է դարերի դիմաց իր գոյության հավերժական խաղը, խորացնում է իր սերը դեպի գիրն ու լեզուն, ստեղծում է իր հրաշալի հարատևությունը, իր բազմաբովանդակ և հարուստ մշակույթը, հոխացնում է իր մեծասքանչ լեզուն:

10-րդ դարում անա, հայ գրական հորիզոնի վրա ծագում է մի նոր աստղ, որը մի գլուխ բարձրացնում է հայ բանաստեղծությունը, և նոր շունչ ու թարմություն է բերում հայ գրականության. դա հրեշտակական Գրիգոր Նարեկացին է, մի հրաշք երևույթ մեր գրականության պատմության մեջ: Նարեկացու «Մատեան ողբերգութեան»ը համաշխարհային միստիկ գրականության

անգնահատելի գոհարներից մեկն է: Այդ անվանի գագաթ է նաև մեր հին մատենագրության մեջ իր բանաստեղծություն, իր ձևի ու բովանդակության կատարելությամբ, իր լեզվական բարձր կուլտուրայով, ներքին կրակով, հնչեղությամբ, արտահայտչական ձևերի բազմազանությամբ և հոխությամբ: Նարեկացին հարազատ ծնունդն է իր ժամանակին: Մեր երկիրը 10-րդ դարում ծածկվել է հայ հարտարապետության նմուշ հանդիսացող հոյակապ տաճարներով, որոնք մեկ-մեկ քարեղին երկնասլաց աղոթքներ են, դեպի երկինք իրենց հոգևոր հափշտակության մեջ արձանացած... Դրանց մեջ պետք է հրնչեր կենդանի աղոթքը. և Նարեկացին հայ հավատավոր հոգու երկնասլաց աղոթքն է, աղերսանքն է, ձգտումը դեպի կատարելություն, դեպի սրբություն, դեպի Աստված: Պետք է սթափվել «ի ննջմանէ ծանրութեան, ամենազգաստ արթնութեամբ, հոգենորոգ զուարթութեամբ»:

Նարեկացու միստիցիզմը, «աստվածախանդ» ձգտումը վառ արտահայտությունն են իր ժամանակի հայ ժողովրդի քաղաքական, հասարակական, հոգևոր-մշակութային պայմանների: Հենց դրա համար էլ նրա հոգու խորքից, խռովահույզ սրտից ժայթքում է նրա խոսքը Աստծուն, իր հառաչանքի ձայն, սրտի հեծություն, ողբ, աղաղակ: Նարեկացու տաղերը հայ քնարերգության տմենաչքնաղ զարդերն են կազմում:

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ գրական վաստակով ամբողջանում է լուսապսակը մեր բարգմանիչ վարդապետների: Շնորհալին Հայաստանյայց Առաքելական եկեղեցու քաղցրաձայն քնարն է, քաղցրախոս սոխակը, ուղղափառության պաշտպանը և մեծ հայրենասերը. նա բողել է մեզ հարուստ, բազմաժանր գրական վաստակ, որի յուրաքանչյուր տողի և բառի մեջ դրել է իր մեծ սիրտը, իր հոգու գեղեցկությունը, մարդասիրությունը, հայրենասիրությունը: Նա հոխացրել է մեր շարականոցն ու ժամագիրքը սքանչելի շարականներով, երգերով, աղոթքներով, որոնք զարդն են կազմում մեր ժամերգությանց:

Շնորհալու «Եղեսիոյ ողբ»ը հայ ժողովրդի վերքի երգն է, հայրենասերի ողբը, որի մեջ նա հառաչում է Հայաստանի և հայ ժողովրդի համար, որոնում է հայ ժողովրդի անցած հին փառքը, մեր կորած քաղաքական ազատությունը և ցանկանում է տեսնել այն հին երկիրը, որ «նման էր փրքեալ ծաղկի, պայծառացած ի՝ գոյն վարդի», ցանկալի և երազելի բոլոր հայերի համար: Եվ անա լուսո մեծ երգիչ Շնորհալին իր «Արևագալ»ի հրաշալի երգերի մեջ, վերանալով լուսո առավոտյան միստիկական աշխարհը, լո՜՛ւյս, կյա՜՛նք, խաղաղությո՜՛ւն է հայցում, աղերսում իր ժողովրդի, իր երկրի համար, որպեսզի լուսո արարիչ Աստվածը «պարապեալ պահեսցէ զժողովուրդս իւր աստուածային զօրութեամբն»:

Մեր բարգմանիչ վարդապետները պատվով և սրբությամբ կատարեցին իրենց պարտքը հայ ժողովրդի, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և Հայրենիքի հանդեպ, և ավանդ թողեցին մեզ մի անկրկնելի հոգևոր կուլտուրա: Հայ հավատացյալ ժողովուրդը աչքի լույսի պես պահել ու պահպանել է այդ մշակույթը ու հասցրել մեր օրերին:

Այսօր էլ խոսում են մեզ հետ մեր անմոռանալի բարգմանիչ վարդապետները դարերի միջից, անցյալի մշուշից և մեզ հաղորդում են իրենց մտքի և սրտի սրտառուչ պատգամները: Նրանց երգը, սիրտը, միտքը մեր դարերից, հայ ժողովրդի սրտերից հասել է մեր օրերին: Այսօր էլ նրանց ապրած հողի վրա, նրանց երազած կապույտ երկնքի տակ փայլում է «թրի պես հայոց լեզուն և զրնգում արևի տակ»:

Դարեր շարունակ հայոց մեծասքանչ լեզուն, մեր հարուստ և բովանդակալից գրականությունը, քաղաքականապես անջատ և օտար միջավայրում ապրող հայ ժողովրդի պանդուխտ բեկորների համար հանդիսացել են համազգային միության, ընդհանրության ամենամեծ գործոնները:

Հայոց լեզուն, հայ գրականությունը, այսօր էլ մեծ նշանակություն ունեն հայ ժողովրդի ազգային գոյության պահպանման և ամրապնդման գործում, մանավանդ Սփյուռքի հայության համար: Մեր բարգմանիչ վարդապետների հիշատակի մեծարումն ու ոգեկոչումը, այսօր մանավանդ,

սրբազան պարտք են դնում յուրաքանչյուր ճշմարտապես հայրենասեր հայ մարդու վրա, և առաջին հերթին Սփյուռքի մեր թեմական առաջնորդների, կրոնական խորհուրդների, եկեղեցական հոգաբարձությունների և մեր մտավորականության վրա՝ աչքի լույսի պես պահպանելու հայոց լեզուն մեր եկեղեցիներում, ընտանիքներում, հավաքույթներում, և պայքարելու օտար լեզուների և դպրոցների ապազգայնացնող ազդեցությունների դեմ, դաստիարակելով նոր սերունդը մեր բարգմանիչ վարդապետների ոգով ու շնչով:

ՄԻԱՅՆ ՈՒ ՄԻԱՅՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՑՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ, ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՄԱՄԲ ԿԱՐԵԼԻ ԿԼԻՆԻ ԶՈՐԱՎՈՐ ՊԱՏՆԵՇ ԿԱՆԳՆԵՑՆԵԼ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԻ ԴԵՄ:

Այն ժամանակ, երբ Մայր Հայրենիքում, հայրենի կառավարության հոգատար ձեռքի տակ, տասնյակ բարձր ուսումնական հաստատություններում և հազարավոր դպրոցներում հայեցի դաստիարակվում է մեր մատաղ սերունդը, երբ հայրենի երկրում ծաղկում, փթթում է հայ կուլտուրան, սփյուռքի մեր հայությունը ապրում է փոքրության ծանր մի շրջան: Սփյուռքի հայության քաղաքական անապատնով վիճակը, մութ ուժերի լարած պառակտիչ քաղաքականությունը լուրջ վտանգ են ներկայացնում այնտեղ ապաստանած հայ համայնքների համար: Սփյուռքի մեր թեմական առաջնորդների, մտավորականության պատվի խնդիրն է ամեն ջանք ի գործ դնել՝ ամրապնդելու ազգային-մշակութային կապը Մայր Հայրենիքի, Ս. Էջմիածնի հետ: Անցել գնացել են մեր բարգմանիչ վարդապետները, բայց մնացել է նրանց գործը: Այդ գործը շարունակելու են կոչված մեր թեմական առաջնորդները, մեր բարձրաստիճան ու հայրենասեր հոգևորականությունը, բարգմանչաց ոգով, շնչով, օրինակով և ուղիով, այն պարզ գիտակցությամբ, որ լեզվի մոռացումը, հայրենի հնավանդ ավանդություններից հրաժարվելը հակառակորդական կարող են լինել Սփյուռքի հայության համար. «Մեկ ազգի պահողը, իրար միացնողը ԼԵԶՈՒՆ ա ու ՀԱՎԱՏՆ»,— գրել է հայ ժողովրդի անմահ զավակ, մեծ լուսավորիչ ու հայրենասեր Խաչատուր Աբովյանը:

Մեր բարգմանիչ վարդապետների հիշատակը անբառամ և լավագույնս պահելու միջոցն է՝ սիրել ու տարածել հայոց լեզուն, հայ գիրն ու գրականությունը այնպես, ինչպես նրանք էին սիրում: Մեր նախնիքներից մեզ ժառանգ է մնացել մի հոյակապ հոգևոր գանձ— այդ հայոց լեզուն է և նրանով գրված հայ գրականությունը: Աշխատենք աչքի լույսի պես պահել մեր մշակութային արժեքները, որոնք ձեռք են բերված մեր նախնիքների արյունով, քրտինքով ու կյանքով:

Մեր բարգմանիչ վարդապետների պայծառ հիշատակը թող միշտ վառ ու կենդանի մնա հայ հավատացյալ ժողովրդի հոգում:



ԵՐՋԱՆԿԱՀԻԾԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Նոր-Նախիջևանի հայ համայնքը, ինչպես երևում է մի շարք նամակներից, պաշտոնական գրություններից և ուղերձներից, ցասով է բաժանվել իր սիրելի առաջնորդից, որը Նոր-Նախիջևանում, իր պաշտոնավարած տարիներին, ո՛չ միայն հմտորեն ղեկավարել է թեմի կրոնական-եկեղեցական կյանքը, այլև հասարակական-կազմակերպչական բեղուն աշխատանք է ծավալել։ Նա միաժամանակ հանդիսացել է օրինակելի և բարխիզմ մանկավարժ և մեծ աղդեցություն է թողել իր դաստիարակած սերնդի վրա։

Գեորգ վարդապետը Նոր-Նախիջևանում պաշտոնավարությունը թողնելու կապակցությամբ, տեղի դպրոցական, եկեղեցական և հասարակական կազմակերպություններից ստացել է մի շարք ուղերձներ, որոնք դրվատում են նրա արժանիքները և իրենց երախտագիտական շնորհակալությունները հայտնում։ Այսպես, Նոր-Նախիջևանի աչքի ընկնող հասարակական մի խումբ գործիչներ, իրենց 1916 թվականի հունիսի 28-ին կազմած ուղերձում հետևյալն են գրել.

«Երկար տարիներ Նոր-Նախիջևանը ճանաչում էր Ձեզ իբրև հմուտ ուսուցիչ-խմբապետ և եռանդուն գործիչ զանազան հիմնարկությունների մեջ. Ձեր այս եռամյա պաշտոնավարությունը, իբրև առաջնորդական փոխանորդ, ցույց տվեց մեզ, որ Դուք ընդունակ կառավարիչ եք և հավիվ՝ պաշտպան Եկեղեցու և Ազգի շահերին։

Ձեր ունեցած սերը դեպի Մայր Եկեղեցին և նրա հնավանդ արարողություններն ու կարգերը հարգել տվեց հայ վարդապետի անունը, իսկ օտարների հետ Ձեր ունեցած հարաբերությունը բարձրացրեց փոխանորդ վարդապետի պատիվն ու հարգանքը և լսելի արավ նրա ձայնն ու դիմումը։

Փա՜ռք և պատի՜վ Ձեր եռանդին, Ձեր անդուլ աշխատանքին։

Հուսով ենք և հավատում ենք, Հայր Սուրբ, որ Դուք, որտեղ և լինեք, ինչ բարձրաստիճան պաշտոն և վարեք, երբե՛ք չեք մոռանա, որ Նոր-Նախիջևանի զավակ եք, կսիրեք Նախիջևանն և նրա հիմնարկությունները։

Բարի երթ մաղթելով Ձեզ, ի բոլոր սրտե ցանկանում ենք Ձեզ կատարյալ առողջություն, անդուլ եռանդ և անխոնջ աշխատանք՝ ի փառս Հայ Եկեղեցվո և Հայ Ազգիս։

Ուշադրության արժանի է առանձնապես Գեորգ վարդապետի ջանքերով տարիներ առաջ կազմակերպված Նոր-Նախիջևանի և Ռոստովի հիվանդանոցներում աշխատող մի խումբ հայուհիների 1916 թվականի հունիսի 14-ին գրված պարզ և զգացմունքով ուղերձը։

«Գեղջուկ հայությունը,— գրում են նրանք,— համերաշխ ու բուռն հարգանքի զգացմունք է արտահայտում դեպի Ձեզ։ Նոր-Նախիջևանի և Ռոստովի հայկական լազարեթում (այսինքն՝ հիվանդանոցում։— Խմբ.) աշխատող հայուհիներիս խումբը ևս պարտականություն է համարում միացնել իր համեստ ձայնը ընդհանուր մեծարանքներին։

* Շարունակված ամսագրի 1954 թվականի № VII—VIII-ից։

Համաշխարհային ահեղ պատերազմի առաջին օրերին իսկ՝ Դուք զորեղ լեզվով կոչ արիք գաղութիս հայ հասարակության՝ կատարել մեր քաղաքացիական ու մարդասիրական պարտականությունը պետության հանդեպ՝ խնամելով ընդհանուր Հայրենիքի պաշտպանության համար կռվող վիրավոր զինվորներին։

Ձեր այդ հեղինակավոր ու աղնիվ կոչի արդյունքն է այն հայկական լազարեթը, որի մեջ աշխատելու քաղցր պարտականությունը վիճակվեց մեզ։

Լազարեթի հիմնադրության օրերից մինչև այսօր Դուք միշտ եղաք մեզ հետ և մեզ ղեկավար, առանց երբեք խնայելու Ձեր ուժն ու եռանդը, ժամանակն ու հանգիստը։

Ձերդ Բարձրապատվության բարի խորհուրդներին և անմիջական ղեկավարության ենք պարտական, որ հնարավոր եղավ հայկական լազարեթը հասցնել այն բարեկեցիկ վիճակին, որ միշտ արժանացել է իշխանության ու հասարակության գովասանքին։

Այսօր, երբ Դուք հեռանում եք մեր գաղթավայրից և մեկնում Ձեր նոր գործունեության սրբազան վայրը, Նոր-Նախիջևանի և Ռոստովի հայկական լազարեթում աշխատող հայուհիներիս խումբը իր սրտից բխած հրաժեշտի ողջույնը տալով՝ խնդրում է Ձեզ ընդունել այս համեստ ուղերձը, որպես անկեղծ արտահայտություն այն հարգանքի և համակրանքի, որ մենք տածում ենք դեպի Ձեզ։

Հավատացեք, Հայր Սուրբ, որ աղնիվ աշխատանքի մեջ անցկացրած ընդհանուր ժամերը կմնան մեր հիշողության մեջ թարմ և միշտ քաղցր։

Զայնակցելով գաղութիս հայության՝ մենք ևս բարի ճանապարհ ենք մաղթում Ձեզ և ցանկանում երկար ու արդյունավետ գործունեություն Ձեր նոր բարձր կոչման մեջ, ի փառս մայրենի Սուրբ Եկեղեցվո և ի մխիթարություն տանջված Հայ Ազգիս։

Ի դեպ, Գեորգ վարդապետ Զորեքչյանը Նոր-Նախիջևանում իր պաշտոնավարած տարիներին երկու անգամ արժանացել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Ե-ի ուշադրությանը և պարգևատրվել։ Առաջին անգամ նա 1913 թվականի նոյեմբերի 1-ին № 1692 կոնդակով պարգևատրվել է ծաղկյա մեծաքայլ կապույտ փիլոնով, իսկ 1914 թվականի մարտի 26-ին՝ № 443 կոնդակով՝ վարդապետական լանջախաչով։ Երկրորդ պարգևատրության կապակցությամբ Վեհափառ Հայրապետի տված կոնդակում ասվում է.

«Ի նկատ առեալ Մեր զներկայ պաշտօն և զերկարամեայ սպասաւորութիւն Ձեր ի Տաճարի Տեառն, այսու հայրապետական կոնդակաւ Մերով շնորհեմք Ձեզ իրաւունք կրելոյ ի կուրծսդ զականակուռ վարդապետական լանջախաչ, որ լիցի Ձեզ տիրաւանդ նշան մշտայուշ առ ի կատարել սրբութեամբ զամենայն պարտիս Ձեր։

Հաւատամք, եթէ վարձատրութիւնս այս լիցի Ձեզ ի խրախոյս՝ կալ և մնալ հանապազ հաւատարմութեամբ առ Մայր Աթոռս և ծառայել ամենայն արիաջանութեամբ յօգուտ հայ ժողովրդեան և ի փառս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ։

Գեորգ հայր սուրբը պարգևատրվել է նաև Նոր-Նախիջևանում իր կատարած մանկավարժական աշխատանքի համար։ Գոգոնի գիմնազիայի վարչության Գեորգ վարդապետին տված 1914 թվականի դեկտեմբերի 30-ի վկայականից երևում է, որ նա իր օրինակելի մանկավարժական աշխատանքի համար երկու անգամ պարգևատրվել է շքանշանով՝ «առաջին անգամ 1905 թվականի հունիսի 10-ին՝ Սուրբ Ստանիսլավի երրորդ աստիճանի շքանշանով, իսկ երկրորդ անգամ՝ 1913 թվականի ապրիլի 4-ին՝ Սուրբ Աննայի երրորդ աստիճանի շքանշանով։

Գեորգ վարդապետը շատ գոհ է եղել նաև Նոր-Նախիջևանի և Բեսարաբիո թեմական հոգևոր դպրոցի վարչությունը։ Դպրոցի հոգաբարձության փոխ-նախագահ Վահան վարդապետը 1913 թվականի օգոստոսի 28-ին իր տված վկայականում նշել է հետևյալը.

«Սույն վկայությունը տրված է Նոր-Նախիջևանի և Բեսարաբիո թեմական հոգևոր դպրոցի հոգաբարձության կողմից բարեշնորհ Տ. Գեորգ վարդապետ Զորեքչյանին առ այն, որ նա, 1895/96 ուս. տարվանից մինչև 1913/14 ուս. տարին, այսինքն շարունակ 18 տարի, լինելով դպրանոցիս եռեցողության ուսուցիչ և խմբապետ, իսկ 1907/8 ուս. տարվանից նաև աստվածաբանության, եկեղեցական պատմության և կրոնի դասատու, յուր ստանձնած այս պաշտոնները վարել է հմտությամբ և բարեխղճությամբ։

Տեղափոխվելով Էջմիածին, Գեորգ վարդապետը, որպես փորձառու և պատրաստված հոգևորական, արժանանում է Վեհափառ Հայրապետի վստահությանը, որը շատ պատասխանատու հանձնարարություններ է տալիս նրան։ Բավական է հիշել Վեհափառի մի շարք հանձնարարությունները Գեորգ վարդապետին՝ խորհրդակցելու Թբիլիսիի հայ բարձր մտավորականության հետ և նախապատրաստելու նրանք Վեհափառի հավա-

նությանը ներկայացնելու համար։ Անհրաժեշտ ենք համարում բերել ստորև Ամենայն Հայոց Կաթողիկոսության դիվանապետ Տիրայր ծայրագույն վարդապետի 1916 թվականի նոյեմբերի 14-ի № 2469 գրությունը Գեորգ վարդապետին, ուր ամփոփ թվարկված են այդ հարցերը.

«Ի նկատի ունենալով, որ մոտ օրերս պիտի Տփխիս մեկնեք, Նորին Սրբությունը բարեհաճեց հրամայել դիվանիս՝ հանձնարարել Ձեզ Տփխիս եղած ժամանակ կարևոր խորհրդակցություններ ունենալ հետևյալ խնդիրների մասին և արդյունքը զեկուցանել Նորին Սրբության.

ա) Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի կողմից կազմած համախորհրդի զբաղմունքների ծրագիրը կարդալ, քննության առնել և լրացնել, եթե կարիք զգացվի, որպեսզի վերջնական կազմվածը ներկայացվի Նորին Սրբության ի հավանություն.

բ) Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցի աշակերտներին համալսարան ընդունելու առթիվ նախարարության կողմից պաշտոնական առաջարկ-հարցերը ի՞նչպես հասկանալ և ի պահանջել հարկին հնարավո՞ր է որևէ զիջում անել և ի՞նչ չափով, առանց հոգևոր իշխանության իրավասության խնդիրն աղարտելու և դպրոցի ոգուն վնասելու.

գ) Խորհրդածության խնդիր դարձնել պետական ամեն կարգի դպրոցներում կրոնն ու հայոց լեզուն պարտադիր դարձնելու հարցը. ի՞նչ աշխատանքներ են կատարված Տփխիսի ծնողական ժողովների կողմից, ի՞նչ հետևանքներ են ունեցած վրաց հարանման դիմումները.—ուրվագծել դիմումի խնդիրը նախարարության.

դ) Բեսարաբիայի ամբողջ թեմի և մասամբ Աստրախանի թեմի հայ եկեղեցական-ծխական դպրոցները գտնվելով ամբողջապես Լուսավորության նախարարության հրամանատարության տակ, խորհրդակցել թե ի՞նչ ելդանակով հնար կլինի, ըստ առաջնության, այդ թեմերի դպրոցները հոգևոր իշխանության հսկողության ենթարկել կրկին։

Ամենայն Հայոց Հայրապետությունը Գեորգ վարդապետին նշանակում է ծնողբայրական օգնության Կենտրոնական կոմիտեի նախագահ։ Համաշխարհային առաջին պատերազմի այս ծանր տարիներին, երբ Արևմտյան Հայաստանից եկած տասնյակ հազարավոր հայ գաղթականներ ապաստան էին փնտրում Երևանում, Էջմիածնում և նրա մոտիկ շրջաններում, Գեորգ վարդապետը ցուցաբերում է բացառիկ ուշադրություն և հոգատարություն իր տնավեր հարազատ եղբայրներին, տեղավորում է նրանց, սնունդ է հայթայթում, դպրոցներ է բաց անում գաղթականների երեխաների համար, նոր որբանոցներ է բաց անում և այլն։ Իր գրություններից մեկի մեջ, Գեորգ վարդապետն անդրադառնալով այդ տարիներին գաղթականության համար կատարած իր աշխատանքներին, նշում է, որ «գաղթականներն այնքան սիրեցին ինձ, որ չէին ցանկանում ինձնից բաժանվել։ Մեկ տարի հետո, երբ ես այնքան թուլացա և հյուծվեցի, որ հարկադրված եղա հրաժարական տալ՝ մեկ ամսով բուժման դնալու համար, գաղթականները չէին ուզում բաժանվել ինձնից։ Վերադառնալիս իրենք, գաղթականները դիմեցին Կաթողիկոսին և պահանջեցին, որ ինձ նորից նշանակի Եղբայրական օգնության նախագահ։

Իր անձնվեր և օգտաշատ աշխատանքը պատշաճ ձևով գնահատում է Գեորգ Ե. Կաթողիկոսը՝ ձեռնադրում նրան եպիսկոպոս։ Ստորև բերում ենք եպիսկոպոսական ձեռնադրության առթիվ նրան տրված կոնդակը.

«ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՏԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵՒԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Գերապատիւ Տ. Գէորգ Եռապսակ Եպիսկոպոսի, Ճարտարապետ Մայր Աթոռոյս և շնորհաւորեալ Մերոյ ողջոյն և օրհնութիւն յԱթոռակալէս Ս. Առաքելոց և Նախկին Լուսաւորչացն Հայաստան աշխարհիս Թադէոսի և Բարթուղիմէոսի և Հօրն Մերոյ Գրիգորի առաքելապատուհան Հայրապետի

Աւանդեմք Քեզ աւասիկ զայս կոնդակ հաւատարիմ վկայութեան և միանգամայն ազդարարող վսեմական պարտուցդ բարձու աստիճանի եպիսկոպոսութեան յոր ամբարձաք զՔեզ ի Տաճարի աստ Ս. Էջմիածնի... (ամսաթիվը բաց է թողնված.— խմբ.) ամսեանս ապրիլի ի ներկայութեան համագումար միաբանութեան և յոգնախուռն ժողովրդեան։

Նախ՝ հարկ անձին զգամք յուշ առնել Քեզ, զի կաչումդ, զոր ընկալար ի տուրքենէ Հոգւոյն Սրբոյ Մերով իսկ ձեռնադրութեամբ արկ զՔեզ ընդ ծանր պարտաւորութեամբ հովուելոյ զհօտ Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի և անձանձիր աշխատելոյ, զի եկեղեցի Աստուծոյ լիցի ի շինութեան և ի բարեկարգ պայծառութեան, վասն որոյ պարտ է Քեզ յուշ առնուլ յար և միշտ զայն ամենայն, զոր բանիւ և օրհնութեամբ աւանդեցաք Քեզ, և ջանք Քո լիցին միշտ իբրև զառաջին և զգլխաւոր պարտաւորութիւն լուսաւոր վար-

դապետութեամբ ուսուցանել զժողովուրդն Աստուծոյ և հրահանգել ի սէր և յերկիւղ Տեառն Աստուծոյ և հաստատուն և անխախտաբար պահել և պահպանել զդաւանութիւն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ։

Երկրորդ՝ իբրև զհոգևոր որդի զգուշացուցանեմք զՔեզ մի՛ անփոյթ առնել զշնորհացդ, զոր ընկալար ի քեռնադրութենէդ, և մի՛ ածել զանարժանս, զտգէտս, զարբեցողս, զանբարոյ անձինս ի պաշտօն սրբութեան Տեառն Աստուծոյ՝ ի քահանայս և ի սարկաւագս մոլեալ արծաթասիրութեամբ, որոց դատապարտ առնէ Հոգին Սուրբ, որք ընտրիցեն և որ ընտրէ և կացուցանէ ըստ այսմ. «Ձեռնադրեալ լիցին որք արծաթովք են ընտրեալք», քանզի երկոքին իսկ ընդ պատուհասիւք են ըստ կանոնաց Եկեղեցւոյ և մանաւանդ ըստ բանին առաքելոյն, որ ասէ առ Տիմոթէոս. «Ձեռս վաղվաղակի ուրուք ի վերայ մի՛ դնելոյ։

Սրբորդ՝ քան զամենայն, որ առաւել ուշադրութեան արժանի է, պարտ է Քեզ ունկընդիր լինել և լսող սքանչելեացն Պօղոսի, որ իբր օրինադրութիւն, հարկ ի վերայ դնէ եպիսկոպոսաց լինել հեզ, խաղաղարար, ժուժկալ, անյիշաչար, օրինակ բարի հօտին Քրիստոսի, համբերութեամբ սիրոյ և հաստատոյ, բարեպաշտութեան և սուրբ վարուց, և մի բարկացող, հարկանող և ոխակալ, քանզի զամենեսեան կոչեաց Աստուած ի խաղաղութիւն և ի սրբութիւն։

Չորրորդ՝ փոյթ յանձին բերցես յաչս գնմանութիւն նորին իսկ յաւիտենական հոգւոյն Ցիսուսի, որ զանձն իւր նա ի փրկութիւն աշխարհի յօգուտ մանկանց Եկեղեցւոյ և անտրտունջ ծառայել յայգւոյ Տեառն, առաքեալ հարցես զամենատեսակ խոչս խափանարարս երկայնամիտ սիրոյդ առաւելութեամբ առ Ազգն մեր և Եկեղեցի, զյոյս Քո բեռեալ հանապազ յանուն Տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի և զմիտս և զջանս Քո ուղղեալ յանմն և ի փառս Սրբոյ Էջմիածնի, որոյ և Դու մին ի միաբանից համարիս։

Գեորգ սարկավագ Ցուրեղյանը Նոր-Նախիջևանի երգեցիկ խմբի հետ

Արդ՝ փայլեալ քո յաւէտ արդիւնաւոր գործովդ և աստուածահաճոյ ընթացիւք յայգուոջ Տեառն արժանի լիցիս լսել զերանաւէտ ձայն տէրունական. «Եթէ ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուտ հավատարիմ եղեր, ի վերայ բազմաց կացուցից զքեզ, մուտ յուրախութիւն Տեառն քոյ։ Ամէն։

ԳԷՈՐԳ Ե.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ վկայական կոնդակս ի 16-դում աւուր ամսեան ապրիլի 1917 ամի Փրկչական և ըստ Տոմարիս ՌՅԿԶ.
ի Հայրապետութեան Միհրան Զ. ամի,
յԱռաջնորդեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի,
ի Վաղարշապատ։
թ. 621»։

Եպիսկոպոսական ձեռնադրության կապակցությամբ նորընծա Գեորգ եպիսկոպոսին շնորհվում է եպիսկոպոսական պանակ։ Վեհափառ Հայրապետի այդ առթիվ տված № 616 կոնդակում նշվում է.

«Ի մտանելն քո ի նոր ասպարէզ եպիսկոպոսական ծառայութեան Առաքելական Ս. Եկեղեցւոյ մերոյ և Ազգիս Հայոց՝ ի խրախույս ապագայ գործունէութեանդ, Մեք սովին հայրապետական կոնդակաւ արժան համարեմք շնորհել քեզ զպանակէ եպիսկոպոսական կրել ի կուրծսդ իբրև զնշան մըշտայուղ յորդորական, եթե զիխատր պարտիք քո են ըստ եպիսկոպոսական կոչմանդ զօրհանապազ և անդադար ուսուցանել և հրահանգել զժողովուրդն, քաջարթուն տեսուչ հոգւոց և մտաց հօտին Քրիստոսի հանդիսացեալ։

Նույն 1917 թվականին Էջմիածնում հրավիրվում է հայ հոգևորական ներկայացուցչության համագումար, որի կազմակերպչական աշխատանքներում գործուն մասնակցություն է ունենում նորընծա Գեորգ սրբազանը, որը ընտրվում է համագումարի նախագահ։ Համագումարը քննության է առնում Հայ Եկեղեցու համար կենսական նշանակություն ունեցող մի կարևոր հարց — Հայոց Եկեղեցու բարեփոխության հարցը, և իր որոշումները ներկայացնում Ամենայն Հայոց Հայրապետությանը։

Հաջորդ 1918 թվականին վանքի միաբանությունը Գեորգ եպիսկոպոսին ընտրում է տնտեսական խորհրդի նախագահ՝ հանձնարարելով նրան կանոնավորել Մայր Աթոռի տնտեսությունը։ Ս. Էջմիածնի միաբանական ընդհանուր ժողովը 1919 թվականի հոկտեմբեր ամսում հրավիրված ժողովներից մեկում ընդունել է հետևյալ որոշումը.

«...Զվարթնոցի տեսչությունը և ավերակների շուրջը եղած այգիների, տնկիների և հողերի կառավարությունը թողնել Տ. Խաչիկ ծայրագույն վարդապետին։ Վանական կառավարության նախագահ Տ. Գեորգ եպիսկոպոսին նշանակել, որ նա իրական հսկողություն ունենա կալվածների կառավարության վրա, այսինքն նրա գիտությամբ և թույլտվությամբ կատարվին ցանքսերը, մշակվին այգիները, վարձով տրվին հողերը, համաձայն այն նախահաշվի, որ կընդունի միաբանական ժողովը և կհաստատեն նորին Վեհափառությունը։ Հաշվապահությունը կատարել Տ. Գեորգ եպիսկոպոսի հսկողությամբ և ցուցումներով։

Կարճ ժամանակամիջոցում Գեորգ սրբազանին հաջողվում է կարգավորել Մայր Աթոռի տնտեսությունը, հսկողություն սահմանել եկամուտների և ծախսերի վրա և այլն։

1921 թվականին Գեորգ սրբազանին է հանձնվում Մայր Տաճարի լուսարարապետության պատասխանատու պաշտոնը։ Նա այստեղ ևս մեծ աշխատանք է կատարում բարեզարդելու համար վանքը և պահանջվող կարգ ու կանոն ստեղծելու ուղղությամբ։

Նույն թվականի աշնանը Գեորգ սրբազանը նշանակվում է Թբիլիսիի թեմի առաջնորդական փոխանորդ, իսկ հաջորդ՝ 1922 թվականին թեմական-պատգամավորական ժողովը նրան միաձայնությամբ ընտրում է թեմական առաջնորդ։ Երեք տարվա շրջանը լրանալուց հետո, 1925 թվականին, նա նորից վերընտրվում է Թբիլիսիի թեմական առաջնորդի պաշտոնում և շարունակում իր պաշտոնավարությունը։

1925 թվականին գումարված Թբիլիսիի թեմական-պատգամավորական ժողովը բարձր գնահատելով Գեորգ սրբազանի գործունեությունը թեմում, միջնորդել է ամենայն Հայոց Հայրապետի առջև՝ շնորհելու նրան արքեպիսկոպոսություն։ Գեորգ Ե. Կաթողիկոսն ընդառաջում է Պատգամավորական ժողովի միջնորդությանը և շնորհում նրան արքեպիսկոպոսություն։ 1925 թվականի նոյեմբերի 17-ին № 716 կոնդակում այդ առթիվ ասված է.

«Զիջեալ ի թախանձանս Պատգամատրական ժողովոյ թեմիդ, այսու կոնդակաւ շնորհեմք Ձեզ զպատիւ արքութեան, մաղթելով առ Աստուած, զօրացուցանել զՁեզ ի

պաշտամանդ, որով կարող լիջիք հաստատարմութեամբ առ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ևս քան զևս յաջողել յասպարիզի ազգային եկեղեցական գործունէութեան։

1927 թվականին Գեորգ սրբազանը վերադառնում է Էջմիածին և նշանակվում Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ։ Նշանակումը կատարվել է հունվարի 27-ին։ Այդ կապակցությամբ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը Նոր-Նախիջևանում նորակազմ թեմական հոգևոր խորհրդի անունից Գեորգ սրբազանին ուղարկել է հետևյալ շնորհավորական գրությունը.

«Նորակազմ թեմական հոգևոր խորհրդիս Թ (իններորդ) նիստում մայիսի 31-ին կարդացվեց Նորին Սրբության թ. 178 սրբատառ կոնդակի պատճենը, որով Վեհափառ Հայրապետը նշանակել է Ձեզ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, հորդորելով մյուս անդամներին ևս շարունակել իրենց վարդրված ծանր պարտականությունը։

Հոգևոր խորհուրդս հարգանք առնելով գիտությունն Նորին Սրբության կարգադրությունը, որոշեց. մինչև ժամանակ շնորհավորել Վեհափառ Հայրապետի դեպի Ձեր Սրբազնության ցույց տված բարձր վստահությունը և մաղթել Ձեզ ուժ և կարողություն՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի մյուս անդամների հետ կատարելու Ձեր պարտականությունը դեպի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ղեկավարության սրբազան և մեծ գործը։

Գեորգ սրբազանն այդ տարիներին մեծ գործ է կատարել նաև «Ազատ եկեղեցականս» խմբակի դեմ պայքարելու և այդ շարժումն արմատախիլ անելու ուղղությամբ։ Թե որքա՞ն գործուն դեր է կատարել Գեորգ սրբազանն այդ շարժման դեմ պայքարելու գործում, այդ պարզ երևում է Գեորգ Ե. Կաթողիկոսի 1926 թվականի դեկտեմբերի 18-ին Գեորգ սրբազանին ուղարկած մի գրությունից.

«Կարդալով ուղարկածդ գրությունները,— գրում է նա,— Քամոյանց Ս. Գեորգ եկեղեցում կատարված տխուր անցուդարձի՝ Ազատ եկեղեցականներ կոչված խմբակի աններելի արարմանց և քահանաներից ոմանց բռնած գայթակղեցուցիչ և իրենց կոչման անհամապատասխան ընթացքի մասին, խորին վշտով լցվեց սիրտս...

Կշռելով գործի վիճակն ու հանգամանքները, անհրաժեշտ և օգտակար եմ համարում ժամանակավորապես Ձեր ներկայությունը Թիֆլիսում մինչև նոր առաջնորդի ընտրությունն ու հաստատությունը... Դուք քաջ ծանոթ եք ամբողջ գործի ընթացքին սկզբից մինչև այժմ։ Հույս ունեմ Ձեր խոհեմությամբ և փորձառությամբ կարող կլինեք ցանկալի վախճան տալ, քաջալերվելով սրբազան պարտքի գիտակցությամբ և մեր հավատացյալ ժողովրդի, նրա մտավորական դասի և քահանայության հավատարիմ, ջերմ, կենդանի աջակցությամբ և համակրությամբ, որի մասին գրել էիք Ձեր թղթերում ի մխիթարություն Մեզ։

Եվ, իրոք, Գեորգ սրբազանին հաջողվում է հետագա մեկ-երկու տարում արմատախիլ անել։ «Ազատ եկեղեցականների» շարժումը ինչպես Վրաստանում, այնպես և Հայաստանի թեմերում։

Հանգուցյալ Ռուբեն արքեպիսկոպոս Դրսմբյանը, իր կազմած Գեորգ Զ. Կաթողիկոսի կենսագրության մեջ, իրավացի նկատել է, որ «Ազատ եկեղեցականների» դեմ վարած այս պայքարի, վայրիվերումների և անցուդարձերի ընթացքին, Զորեքշյան սրբազանը հենվում է հավատացյալների կամքի և ժողովրդական ընտրական իրավունքի վրա և ամենաջերմ ու աննահանջ կերպով պաշտպանում ժողովրդավար սկզբունքներն ու իրավունքները։ Խուսափելով վարչարարությունից և հիմնվելով ժողովրդի իզձերի ու տենչերի, և նրանց ընտրական իրավունքի վրա, Զորեքշյանին հաջողվում է համագործակցորեն վերացնել հավատացյալ համայնքներում տեղ գտած հիվանդագին երևույթները։

Գեորգ սրբազանը տեղափոխվելով Էջմիածին և նշանակվելով Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, զգալի աշխատանք է կատարում Մայր Աթոռում՝ ամրացնելու և սերտացնելու Ամենայն Հայոց Հայրապետության կապը Սովետական Միության և Սփյուռքի հոգևոր թեմերի միջև։

Այդ տարիներին Գեորգ արքեպիսկոպոսը, ժամանակ առ ժամանակ, Վեհափառ Հայրապետի հրահանգով, մեկնում է թեմերը։ Այսպես, 1928 թվականի մարտի 30-ի № 120 թվակիր կոնդակով Գեորգ Ե. Կաթողիկոսը Շիրակի թեմ է գործուղում Գեորգ արքեպիսկոպոսին՝ տեղի թեմական ընտրությունները ղեկավարելու և կենտրոն հարցերը լուծելու համար։ Կոնդակում, որ ուղղված է Շիրակի թեմի առաջնորդներին, ասված է.

«Եւ ընդ հայրապետական ողջունիս և հայրական օրհնութեանս ծանուցանեմք սիրելեացդ առ ի Մէնք որդւոց (այսինքն՝ Շիրակի թեմի հավատացյալներին։— խմբ.), զի ի նկատ առեալ Մեր զամենայն հանգամանս և զպայմանս թեմիդ, Մեք բարւոք և անհրաժեշտ վարկաք այսու հայրապետական կոնդակաւ առաքել առ Ձեզ զանդամ Գերազոյն Հոգևոր Խորհրդոյս զգերաշնորհ Տ. Գէորգ արքեպիսկոպոս, որում տուաք զանհրաժեշտ հրահանգս վասն հրաւիրելոյ զթեմական պատգամատրական ժողով կանխագոյն գիտութեամբ և թոյլտուութեամբ Խորհրդային իշխանութեան տեղւոյդ՝ առ ի ընտրել զառաջնորդ թեմիդ և զանդամս Թեմական հոգևոր Խորհրդոյ, ըստ կարգաց և կանոնաց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ։

Լիայոյս եմք, թէ Դուք, սիրելի զաւակունք մեր, ամենայն սիրով և եղբայրական համերաշխութեամբ աչակից և սատար լինիջիք ըստ ամենայնի, ներկայացուցչի Մերում գերաշնորհ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի, զի նա ի կատար ածցէ, սրտեռանդն օժանդակութեամբ և մատնակցութեամբ Ձերով զամենայն պարտիս, զորս եդաք Մեք ի վերայ նորա։

Երջանկահիշատակ Գեորգ Ե. Կաթողիկոսի մահվանից հետո, Գեորգ արքեպիսկոպոսը նշանակվում է հայրապետական ընտրության կարգադիր հանձնաժողովի նախագահ և շատ հաջող կազմակերպում է ազգային-եկեղեցական ժողովը։ Նոր Կաթողիկոս է ընտրվում Խորեն Ա. Կաթողիկոս Մուրադբեկյանը։ Ընտրությունների ընթացքում Գեորգ սրբազանի կազմակերպչական հաջող աշխատանքը նշված է Գերագույն Հոգևոր Խորհրդի 1932 թվականի դեկտեմբեր 16-ի № 822 գրության մեջ։ «Գերագույն Հոգևոր Խորհուրդը,— կարդում ենք այդ գրության մեջ,— խոր շնորհակալություն է հայտնում հանձնաժողովիդ՝ հայրապետական ընտրության օրերին կատարած գնահատելի աշխատանքի համար, որի հետևանքով թե՛ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կարողացավ իր ավանդական հյուրընկալությունը պատվով ցուցաբերել և թե՛ բոլոր պատգամավորները և հյուրերը մխիթարված ու դոհ սրտով հեռացան Մայր Աթոռից»։

Խորեն Կաթողիկոսի օրով Գեորգ սրբազանը հանդիսանում է նրա մոտիկ աջակիցը։ Ազգային-եկեղեցական բոլոր կարևոր հարցերի լուծման ժամանակ Կաթողիկոսի ամենամոտիկ խորհրդատուն դառնում է Գեորգ սրբազանը։ Նա, միաժամանակ, Ամենայն Հայոց Հայրապետի հրահանգով, թեմերն է դործուղվում նրանք կազմակերպելու, թեմական ընտրությունները անցկացնելու և թեմերի վիճակը մոտից ուսումնասիրելու համար։ Այդ կապակցությամբ Խորեն Կաթողիկոսի կողմից Գեորգ արքեպիսկոպոսին մի շարք հանձնարարական դրություններ են տրված, որոնցից անհրաժեշտ ենք համարում բերել միայն մեկը՝ 1934 թվականի ապրիլի 19-ի № 692 հանձնարարական կոնդակը.

«Ի նկատ առեալ Մեր, զի հաստատեալ և սիրելի զաւակունք Մեր, որք բնակեալ կան ի Լենինական քաղաքի և ի թեմին Շիրակայ յոյժ կարօտին կրօնական մխիթարութեան, Մեք բարւոք և անհրաժեշտ վարկաք այսու հայրապետական կոնդակաւս առաքել զՁեզ ի Լենինական քաղաք՝ առ ի մխիթարել զհոգևոր զաւակունս Մեր հոգեշունչ քարոզութեամբ Ձերով։

Զոյգ ընդ սմին յանձն առնեմք Ձեզ հրաւիրել զծխական և զթեմական պատգամատրական ժողովս և տալ ընտրել ի ձեռն ժողովոցն զծխական հոգաբարձութիւն Ս. Աստուածածին եկեղեցւոյ Լենինական քաղաքի, զթեմական հոգևոր խորհուրդ և զթեմական առաջնորդ հաստատելոյ հայոց Շիրակայ, վասն կառավարելոյ և կարգատրելոյ զեկեղեցական-կրօնական գործս ըստ կարդաց և կանոնաց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ։

Լիայոյս եմք, զի բարեմիտ ազգայինք և հաստատիմ հոգևոր զաւակունք Մեր թեմին Շիրակայ, օժանդակ և սատար լիցին ըստ ամենայնի և Դուք համերաշխ և սրտեռանդն գործակցութեամբ նոցա կատարեսջիք զհայրապետական պատուէրս Մեր, որք հային ի շինութիւն և ի պայծառութիւն Սրբոյ Եկեղեցւոյ մերոյ։

Գեորգ արքեպիսկոպոսի նվիրվածությունը Մայր Աթոռին և Հայոց եկեղեցուն, նրա կազմակերպչական մեծ ունակություններն և լայն աշխարհայացքը և վերջապես, նրա շրջահայաց ընթացքը, խոհեմությունն ու փորձառությունը ամենայն վստահություն են ստեղծում Խորեն Կաթողիկոսի մոտ, որը և իր 1936 թվականի ապրիլի 18-ի № 620 կոնդակով նրան նշանակում է Հայրապետական տեղապահ։ Խորեն Կաթողիկոսի այդ կոնդակը, որ մինչև այժմ չի հրատարակված, անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ.

«ԽՈՐԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ**

Անդամոյ Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ Ս. Էջմիածնի և Ներկայացուցչի Մեծում գերաշնորհ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի Զորեմչեան, հարազատի Մայր Աթոռոյս ողջոյն Քրիստոսաւանդ և օրհնութիւն հայրապետական

Ի նկատ առեալ վիրաւորութիւն Ձեր յընթացս բազմամեայ և պատասխանատու պաշտօնավարութեանդ, նաև զիտեմ, զհեռատես և զշրջանկատ բնատրութիւն Ձեր, այսու հայրապետական կոնդակաւս նշանակեմք զՁեզ Հայրապետական տեղակալ և նախագահող Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ Ս. Էջմիածնի։

Պատուէր տամք Գերաշնորհութեանդ յետ մահուան Մերոյ, խորհրդակցութեամբ Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ Ս. Էջմիածնի տալ զընթացս ամենայն գործոց վերաբերելոց հաւատացեալ հօտին Մերոյ և Եկեղեցեաց Հայոց, որք կան ի սփիւռս աշխարհի, պահելով և պահպանելով անաղարտ և սրբութեամբ զամենայն աւանդս և զիրաւունս Եկեղեցւոյ, նշանակել զկանոնաւոր ընտրութիւն յաջորդի Մերոյ Նորոյ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, ըստ կարգաց և կանոնաց Հայաստանեայց ժողովրդական Սուրբ Եկեղեցւոյս։

Լիայոյս եմք և հաւատամք, զի միաբանութիւն Մայր Աթոռոյս և առաջնորդք և առաջնորդական փոխանորդք թեմօրէից, թեմական խորհուրդք և եկեղեցական հոգաբարձութիւնք աջակից լիցին Ձերդ Գերաշնորհութեան ըստ ամենայն մասանց ի կատար ածելով զկարգադրութիւնս Ձեր։

Աւանդեմք նաև և պատուէր տամք հայրաբար սիրելի եղբարցս և զաւակացս, ամենապատիւ պատրիարքաց, ամենայն առաջնորդաց, ազգային և եկեղեցական վարչութեանց և հաւատացեալ հայ ժողովրդեան՝ լինել զօրավիգ և գործակից Ձեզ, Տեղակալիդ Ամենայն Հայոց Կաթուղիկոսի, միաբան և համերաշխ ընդ միմեանս յամենայն գործս բարիս և վարել զազգային-եկեղեցական հաստատութիւնս և զձեռնարկս քրիստոնէական սիրով, յուսով և հաւատով։

Օրհնելով զՁեզ և զամենեսին, մաղթեմք ի Տեառնէ շնորհել Ձեզ կար և զօրութիւն, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյս անսասանութիւն և պայծառութիւն, Ազգիս Հայոց և Հայրենեաց խաղաղութիւն և երջանկութիւն։

Աղօթեմք առ Աստուած նաև վասն խաղաղութեան աշխարհիս և համերաշխութեան ազգաց։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և յաւէտ սրհնեալ ի Մէնջ, ամէն։

ԽՈՐԷՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

յ18-ն ապրիլի 1955 ամի,
ըստ Տումարիս ՌՃՁԵ,
ի Հայրապետութեան Մեծում Դ. ամի,
յԱյրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի,
ի Վաղարշապատ։
Թ. 020։

Խորեն կաթողիկոսի հանձնարարությամբ Գեորգ սրբազանը նորից զբաղվում է Թբիլիսի որպես թեմի առաջնորդ՝ կարգավորելու թեմը, որը նախորդ տարիներին «Ազատ եկեղեցականների շարժման պատճառով զգալիորեն քայքայված վիճակում էր։ Սրբազանը մեկնելով Թբիլիսի, տեղի վստահելի անձնավորություններից կազմում է թեմական խորհուրդ և անցնում գործի։ Պետք է ասել, որ այդ օրերին սրբազանին առանձնապես գործուն օգնություն է ցույց տալիս հանգուցյալ ակադեմիկոս Ստեփան Մալխասյանը, որը սրբազանի մշտական խորհրդատուն էր։ Գեորգ սրբազանի տքնաջան և շրջահայաց այդ աշխատանքը շուտով տալիս է իր արդյունքները— «Ազատ եկեղեցականս» շարժումը լուծարքի է ենթարկվում և Թբիլիսիի թեմի այն եկեղեցիները, որոնք վերցրել էին «Ազատ եկեղեցականների», տրվում են մեր հավատացյալներին։

(Շարունակելի)

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ ՎԱՐԱԳԱ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ*

Ա. Եվ որովհետև Վարագա վանուց յուր միակ նպատակն է ժառանգավորաց դպրոցի կրթության գործը, որ պարտականություն կդնե մեր վերա, որ առավել քան զամեն բան Եկեղեցվո շահ մտածել, ուսյալ և շնորհալի ժառանգավոր, թե՛ քահանա և թե՛ վարժապետ, որոց պետք ունի՝ ո՛չ միայն գյուղական ժողովուրդ, այլև քաղաքացին. Թող այս՝ հաստատել և կազմել միաբանական դասն, որ լինի ուսյալ, անձնանվեր, բարեկիրթ, որ կարենա ժամանակի պահանջման համեմատ Հայոց անհովիվ Եկեղեցին կառավարել և բարեզարդել։

Բ. Եվ որովհետև այս ձեռնարկություն հառաջ վարելու համար առանձին ջանք, առանձին ուշադրություն և մեծ հոգատարություն պետք է, ուստի Վարագա խառն տնտեսական վիճակը անհրաժեշտ կարևոր է բարեփոխել և որոշել, այսինքն բուն վանից ներքին տնտեսություն և դպրոցի կառավարություն ազատ պահել արտաքին երկրագործության չարաչար դրաղանքեն։ Երեսուն տարիներե ի վեր եղած փորձառություն բավ համարելով, պետք է ուշաբերինք և փորձառական իմաստությամբ կարգադրենք այս տնտեսական խնդիրը։

Գ. Վարագա վանուց բոլոր գործառնության յուրաքանչյուր մասն պետք է երեք ճյուղի բաժանել և մեն մի ճյուղերու համար երեք տեսչություն հաստատել. մի տեսուչ բուն վանից ներքին տնտեսության և մատակարարության, մի տեսուչ առանձին դպրոցի կառավարության և հսկողության, մի տեսուչ ևս երկրագործական բոլոր տնտեսական գործառնությանց, և այս յուրաքանչյուր տեսուչ պաշտոնեին՝ առանձին կանոնական օրենք և հրահանգ տալով, դիրենք ըստ սմին պատասխանատու ճանաչել վանուց վարչական խորհուրդին առաջ։

Դ. Երկրագործության բոլոր գործառնությանց մասն հանձնել երկրագործության տեսչին և Վերի ախոռը բացարձակապես պետք է նկատել իբրև առանձին ագարակ վանուց, յորում պետք է լինի տեսչին բնակություն անրաժան կերպով. ամենայն փրկրագործական գործառնությունք պետք է հոն կեդրոնանան. թե՛ տարեկան վարձու մշակներ, թե՛ ամարան ամբողջ սարակներ, ջրկալներ և այլն բնավ երբեք վանուց հետ հարաբերություն չպիտի ունենան։

Ե. Ամենայն պետք, որ երկրագործության աշխատանաց կվերաբերի, պետք է հոն պատրաստել կերակուր և այլն. վանուց նախիր պետք է հոն տեղավորվին և նույնիսկ կթան տավարներ. հոն պետք է լինին տնտես կանայք. որչափ պետք որ լինին երկրագործական աշխատանաց, առանց զրկանք մի ընելու պետք է հոգա տեսուչը և ավելորդ վանք բերե. պետք չէ մտաբերել, թե այնտեղ խնայություն և ճշտություն չէ կարելի պահել, զի այդ ամեն տեսչին հավատարմությենեն կախումն ունի. կաթնատուն և տնտեսատուն լավ է որ ախոռներեն քիչ մի բացակա շինվին և ջուրը մոտ լինի։

---

* Խրիմյան Հայրիկի ներկա աշխատությանը, որը ինքնագիր է, մեր խմբագրության տրամադրության տակ է դրել իր բարեկամներից մեկը։ Նկատի ունենալով, որ այն քաջատիպ արժեք ունի հայ տնտեսական մտքի պատմության համար, հարմար դատեցինք տպագրել մեր ամսագրում։— ԽՄԲ.։

Զ. Վարի ախոռ երբոր իրրև ագարակ որոշվի, հայնժամ պետք է միշտ հետզհետե կարևոր շենքեր պատրաստել՝ թե՛ ախոռ, թե՛ տնտեսատուն, թե՛ հյուրանոց ամարան և ձմերան. մասնավորապես խիստ կարևոր է երկրագործության գործիքներուն և սայլերուն իսկ առանձին տեղ պատրաստել, որ չփչանան թե՛ արևու և թե՛ ձմերան ատեն ձյունի և անձրևի տակ։ Ամեն գործիքներու նորոգություն և պատրաստություն պետք է ձմերան և դեռ գարուն չեկած տեսնվի։

ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ

Է. Թողլով վանուց ներքին տեսչության և դպրոցի տեսչության մասեր գոնե այժմ, միայն երկրագործության մասին պիտի գրեմ և հայտնեմ իմ համոզումս ո՛չ եթե վերացյալ մտածությամբ կամ խոսքով, այլ առավել ընդ երկար փորձառությամբ, որ միշտ իմ մտքիս առարկա եղած է, և նույնիսկ այժմ, որ բացակա եմ Հայրենիքեն և Վարագեն։

Ը. Վարագա ընդարձակ և ճապաղ հողագործության շրջանակ պետք է ամփոփվի, պետք է հին դրություն փոխվի։ Եթե մեք այսօր, որ զարգացյալ եմք, գիր և ուսումն ունիմք, որ մտածել, հնարել գիտեմք, երկրագործական տնտեսությունը վարեմք այնպես, ինչպես կվարե գյուղացին, շատ ողորմելի և նախապաշարյալ կլինիմք, և չունենալով ոչ ինչ հառաջադիմական մրցումն, կհավառիմք ռամիկ գյուղացվույն, և թերևս քան զգյուղացին ավելի հետադեմ, զի գյուղացին յուր ինքնաշխատությամբ տնտեսական հաշիվը կառավարել գիտե, այնինչ մեք ամենայն ինչ վարձակալով և դրամով կգործեմք, այնպիսի երկրի մեջ, որ արդյունքը գին և արժեք չունին։

Թ. Ուստի պետք է երկրագործության դրությունը, որչափ կարելի է, փոխել, այսինքն տարածություն ամփոփել, և ի գործ դնելով արվեստ և հնարադիտություն՝ ավելի արդյունք քաղել քիչեն՝ քիչ ծախսով քան թե շատեն՝ շատ ծախսով։ Բացատրենք օրինակով. փոխանակ տասն արտ վարելու և ցանելու և ջրելու և քաղելու, լավագույն է յոթն արտ վարել և քաջապես մշակել և նույն արդյունք հանել. և թե ի՞նչ է քաջապես կամ արվեստապես մշակել. այդ շատ դյուրին է, դժվարին բան չէ, միայն թե մտածեք, փորձեր անեք, երկրագործության վերաբերյալ դիրքեր կարդաք, լրաբերի հոդվածներ կարդաք։ Այս դրությամբ կարող կլինիմք արտերուն մի ջուր ավելի տալ։

Ժ. Վարագա հողագործության տարածությունն ամփոփելով, պետք է սահման դնել յուր հողագործական դաշտերուն։ Նախ և առաջ նոր գյուղի կետիկ երբեք չմշակել. նախ որ դժվարին է, երկրորդ՝ քանի որ այժմ իրրև արոտատեղ սահմանված է և բավական արդյունք կբերե, հարկ չկա բնավ դանք անել հոն։ Վարի դաշտն ևս ուրիշ կերպ կարգադրության տակ դնել, իսկ անտի վեր մնացած Վարագա երկու դաշտերը շատ և բավական են, եթե բարվոք մշակվին։ Ուստի մշակություն որչափ կարեմք ընդարձակել, այնպես որ գոնե տարին երեք և չորս արտը կորընկանի տեղ վարվի. խոտի ընդարձակ մշակություն չէ թե միայն ծախելու համար է, այլ առավել ևս ոչխարաց և այլ անասնոց համար, որոնք ամբողջ ձմեռը չոր հարդով կսնանին, և գարնան խեղճ կովերուն պոչեն բռնելով վեր կհանեն, որ հորթ կուտան, կաթ կուտան, յուղ կուտան։ Ամենամեծ զրկանք է այս խեղճ կովերուն, սորա համար որ ձմերան կաթի և մածնի հասրաթ կմնան խեղճ միաբանք և դպրոցի տղաք։

ԺԱ. Գրեցինք, թե մշակություն պետք է ամփոփվի, պետք է գիանաք, թե սորա օգտակարություն և շահն ինչ է. նախ ատով ամեն աշխատանք և ծախք կհամառոտվի, վարել կհամառոտվի, վասնզի գութան մինչև մայիսի վերջ գուցե կլրանա, և ամեն արտեր կութնավար կլինին։ Ես կասեմ, որ միայն քառասուն չափի տեղ վարել բավական և շատ է, զի այլ սերմեր ևս կցանվին, թե՛ գարնանացան ցորեն և թե՛ տարեկան և գարի, որոց տեղեր լավ ևս է, որ աշնան գութանով վարվին։ Վարերուն հետ ջրկալներն ևս կհամառոտվին, նմանապես քաղող սարակներ և այլն։

Եթե ասեք՝ երբ մշակներ գութան թող տան՝ ի՞նչ բանով զբաղին, կարծեմ թե Վարագ երբեք փորձ արած չէ վարած արտը կրկին դարձունել. Հայր Մեսրոպ այս բանը լավ գիտե, Խարբերդ գնացած ժամանակ, Կարնո հողագործներն ևս կրկին հողը կդարձունեն արորով կամ որ է չարա բռված գութանով, որո համար կպատմեն, թե Իլեսկ մի վարպետ կա, որ շատ լավ կշինե, և այժմ գործածական է Վանա գյուղեր։

ԺԲ. Վարագա արտերուն մեծ մասը, դրեթե մեծ մասը դարուվար են, ոմանք ևս «սեմերիս» ձև ունին, և արտերուն այս դիրք մեծ վնասակարություն ունի երկրագործության թե՛ աշխատության և թե՛ ծախուց առավելության մասին։ Նախ որ շատ ավելի ջրկալներ պետք կլինին, երկրորդ՝ ջրատար լինելով թե՛ ցանված սերմեր կտանին դեպի վար, և ա-

ռապար տեղեր չեն կրնար բավականին ջուր խմել և ասով ցորենաբույսեր միշտ ծարավ մնալով ցամաք և վտիտ կմնան։ Թող այս՝ այդպիսի արտերը իրենց պարարտություն չեն կրնար պահել, այլ միշտ տարվետարի ավելի կավերին, վասնզի հորդ անձրևներ գալով միշտ վերի հողեր վարելով դեպի վար կտանին և ասով պատվական հողն ջրատար կլինի, որով և արտն անարտաքեր կդառնա։ Եվ ի՞նչ է սորա դարմանը. շատ դյուրին է, պետք է գոնե տարին մի արտ կարգադրվի կամ ի գարնան կամ աշնան. արտի վարի բերան պետք է մեծ թոմբ մը գարնել, և երբ ջուր վերեն հողեր քշելով կլեցունե թոմբին առաջ, էն ժամանակ դարձյալ թոմբ բարձրացնելու է. և այս կերպով արտ յուր հավասարակշռություն կգտնե։ Իսկ երբ արտ մեծ է, հայնժամ պետք է երկու և երեք տեղեր թոմբեր գարնվին։ Եթե ասեք արտեր կպղտիկնան, այո՛, բայց ավելի արդյունաբեր կլինին։ Մի՞թե չե՞ք կարող հեռատեսել, թե այս դրության մեջ մնալով և միշտ հեղեղատար ու ջրատար լինելով, միշտ ձորեր կընդարձակվին և արտերը ավելի կավերին և

Երկու կաղնի կոճակ կոճակի

կպզտիկնան։ Եվ որովհետև Վարագա վանք չունի ուրիշ կալվածական եկամուտները. յուր ապրուստի կյանքը՝ միշտ յուր հողերն է, և ի՞նչ քան կա հաստատուն կալված, առավել. քան զհող։ Ուստի, ըստ իս, Վարագա մշակություն արդյունավորելու համար և երկրագործության մեծ դյուրություն տալու միակ և միակ միջոցն է նորա դաշտեր և արտեր արվեստով կարգադրել։ Կարծեմ թե նախնիքն ևս այս բանը մտածելով, քանի քանի փոքրիկ արտերը կարգադրած են, որ կերևին Վերի ախոռի մոտերը. պետք է գիանաք, որ երկրագործության առաջին պետք մշակելի արտերուն կարգադրությունն է։

ԺԳ. Գիտե՞ք, Վարագա մշակության ծախուց մեջ տարեկան մեծ գումար մի կերևա. և այդ է ջրկալուց ավուրշեք, և այս դիտողություն ըրած էր Հայր Մեսրոպ, թե Վարագա արտերը Առճակու արտերու նման չեն, ջուր չեն բռներ և այլն։ Այո՛, շատ ճիշտ է, և պատճառն այն է, որ Վարագա արտերը առանց կորիի կըրվին. պատճառն ի՞նչ է, չգիտեմ, միայն կասեն անհարթ է, հողը տարբեր է և այլն։ Բայց պետք է գիտնաք, որ դորա միակ պատճառը արտերուն անկանոն դիրքն է։ Ուրեմն եթե վերի դիտողությանս համաձայն՝ արտերը կարգադրվին, անշուշտ հայնժամ կարելի կլինի կորիներ քաշելով արտերը ջրել, և ասով 2 ջրկալի տեղ՝ մի ջրկալ բավական կլինի։ Բայց զարմանալին այն է, որ այս բանի համար մի մեծ նախապաշարում կա, վասն զի շիտակ արտերուն ևս կորի չեն քաշեր, ինչպես Բրուտի արտ և այլն։ Շուշանց շատ ուղիղ արտեր կան, անոնք ևս կորի չեն քաշեր, նմանապես քաղաքի շրջականներ։ Գուցե Վարագն ևս ասոնցմն նախապաշարված է։ Որչա՞փ ցանկալի կլիներ գոնե Վարագա մշակություն իրրև տիպար ագարակ լիներ այլոց։

ԺԴ. Արտ վարելու եղանակ դարձյալ նույն հնության մեջ մնացած 2 զույգ գոմեշ երկու զույգ եզ պետք են. այնինչ մի զույգ գոմեշ և մի զույգ եզնով նույն խորունկությամբ կարելի է վարել. Եվրոպիո նոր գութաններ գործածելով, կամ ինչպես կլսեմ Թորոսյան օրինակ տեսնելով, այժմ կշինե և հաջողած է փորձը, և միանգամայն ածանագին։ Թող այս, լեզկա վարպետի շինած պեչոտան ևս բավական գործ կտեսնա, մանավանդ կրկնակի վարելու համար։ Գիտեմ, պիտի ասեք, թե դու այդ փորձերը արիր, ինչո՞ւ համար չշարունակեցիր։ Շատ անիրավություն է, եթե այս խոսք իմ դեմս բերեք, մտածելով թե Հայրիկ հանգի՞ստ մնաց յուր Հայրենիքում։

ԺԵ. Սերմի ընտրություն և ցանելն ևս ուշադրության արժանի է։ Արճիշտ գավառ, որ պրացի է մեզ, քանի՞ խնամով ընտրություն կանե սերմին։ Ընտանիքներ քաղած ժամանակ արտ կերթան և նույնիսկ պատվական հասկեր որոշելով ընտրություն կանեն սերմին։ Իսկ մենք այդ բանին շատ անուշադիր եմք, գոնե՝ մաղելով անգամ չենք մաքրեր, վտիտ հատեր, ճտիկներ և այլ օտար սերմեր դտելով։ Երանի թե հառաջ արտն մանկովի և ապա ցանվի, վասն զի բազում հատիկներ մեծ կոշկոռներուն տակը իյնալով կկորսվին, արտեն մասն ևս չրատար կլինին, մասն մի ևս չրկալի տակ կերթան մինչև հանդունդ և այս կերպով, կարելի է ասել, որ սերման կեսը ի կորուստ կերթա։ Խարբերդցիք չրելով և հետո ցանելով մեր կեսին չափ հազիվ կցանեն, սերմեն ևս կշահին։

ԺԶ. Այժմ գրեմ քաղելու մասին, թե քանի՞ համրաքայլ և հետևակ է մեր խեղճ մանգաղը, այնինչ մշեցին, ալաշկերտցին գերանդի կգործածե, որ ձիավորի պես առաջ կերթա։ Ասացեք, «Հայրիկ, մեր ցորյանը ավետիք է, կթափի, մանավանդ երբ ժանգ զարնեա. ես կասեմ, եթե ժամանակին քաղվի, բնավ չի թափիր. թող այս, ի՞նչ հաստատ օրենք է, որ ամբողջ Վարագա արտերը պետք է ավետիք ցանվին. ի՞նչ կլինի, որ մասն մի ևս հաճար կամ ճերմկահատ ցանվին, որ կդիմանան բավական ժամանակ։ Միտքս եկավ, պետք է ողբամ հնձելու մեքենային համար, որ այն ևս իբրև անպետ աչքն ձրգված և բանտարկված է, տպարանի բախտին հանդիպելով. տարբերությունն այս է, որ մինն բռնությենեն և մյուսն նախապաշարումեն դատապարտված են։ Իրավունք է բանտարկել այդ ամենածանր մեքենան, զի քանի որ Վարագա անկարգ արտորայք կարգադրված չեն, մեքենան պիտի կրե այդ բանտարկություն, պիտի ժանգոտի և ապագային վկա պետք է լինի անցյալ հնության նախապաշարման։

ԺԷ. Քաղված ցորյաններն ի կալատեղ կրելու գործն ևս տժանելի և դժվարին է Վարագա համար յուր դարուվեր դիրքերով. սորա համար քանի քանի փորձեր եղան. Վարի դաշտ ախոռ շինվեցավ, քանդվեցավ անպաշտպան մնալով. նմանապես Խալ աղբյուրի մոտ, որոց ավերակներ պիտի մնան ի հիշատակ Խրիմյանի անմիտ ձեռնարկության։ Հայրիկ մի տկզբունք ունի, այն է՝ դյուրություն տալ մշակության ամեն կերպ գործառնությանց, և միանգամայն գթոտ սիրտ կրելով, ոչ միայն մարդուն համար, այլ ևս անասնոց. սորա համար աշխատեց

թեթև սայլեր չինել. անոնք ևս չարդ ու բուրդ եղան։ Այժմ ուրախ եմ, գոնե Կարնո թեթև սայլերեն կգործածվին վանուց մեջ. բայց ցորենարարձ սայլ նույն կմնայ. թեև վերջին անգամ շինել տվածս մարան քավական փոքր և թեթև էր. ով գիտե այժմ այն ևս գուցե փոխված, նորեն հին ծանր մարան շինված է, ի՞նչ կլինի, որ ավելի փոքր շինվի մարան, այնպես որ մի զույգ գոմեշ ամենայն դյուրությամբ կարենա քաշել. և փոխանակ մեկի երկու սայլ գործածելով, որչա՞փ կդյուրանա հայնժամ փոխադրության գործը և ցորենադեզեր խիստ շուտ կբերվին ի կալատեղ։ Վանուց ընդարձակ սահմանին այն տեղեր, ուր փոխադրության ճամբաներ պետք են, խիստ կարևոր է, որ կանոնավոր ճամբա շինվին, պետք եղած տեղեր հաստատուն վամուրջներ կառուցվին. և գիտե՞ք որչափ դյուրություն կուտան երկրագործության ամեն գործառնությանց, եթե սայլերուն առաջ հարթվին ամեն խոչընդոտներ, և ասով խեղճ անասուններն ևս կազատվին տանջանքեն։

ԺԸ. Կալատեղի պատրաստություն մեծ դյուրություն կընծայե ցորյան կալսելու համար, մանավանդ երբ կալսող գործիքներ լավագույն լինին՝ թե՛ կամնասայլեր և թե՛ ճարճառներ։ Կա մի ուրիշ տեսակ կամնասայլ, որ տափակ չէ, այլ կլորակ ձև ունի ինչպես սայլի սոնակ, որու վերա շարված կլինեն փոքրիկ երկաթե ուրագներ, որ կարծեմ շատ ավելի գործ կտեսնա քան զտուփակ կամնասայլ և կլոր լինելով դյուրապես կգործածվի։ Այն կալատեղեր, որ մարգագետին են, ցորյան շատ մաքուր կմնա թե՛ հողեն և թե՛ քարեն։ Բայց կալատեղի հատակ եթե մաքուր և հաստատ սալարս լինի, ավելի դյուրություն կուտա կալսելուն և միանգամայն ցորյան մաքուր կմնա։

ԺԹ. Բարեբախտ է Վարագա վանքը, որ մի լավագույն ամբար ունի, որ հիշատակ է Գաբրիել սրբազանին։ Ատտված լուսավորե յուր հոգին։ Միայն թե շատ ափսոս եղեր է, որ ամբարին հատակ ցած մնացած է քակի հատակեն, ուստի ամբարին հատակը լեցնել բարձրացնել չի կարելի, ավելի դյուրին է ամբարի շրջապատը գոնե երեք կանգուն հեռավորությամբ հողը պարպել այնչափ, որ ամբողջ հատակը գոնե կես կանգուն բարձր մնա, մանավանդ արևելյան կողմ Սուրբ Հովհաննես եկեղեցվո դռան միջոց, ուրտեղեն խոնավություն կանցնի մինչև ամբարը և կվնասե թե՛ ալյուր լինի և թե՛ ցորյան։ Եկեղեցին ցած է մնացեր հատակեն, սորա համար ավելի խոնավ ցուրտ կլինի ի ձմերան. երանի թե քակի հատակը գոնե հետզհետե պարպելով կանգունեն ավելի իջնար, այն ժամանակ տաճարին դիրք շատ փառավոր կլիներ, եկեղեցվո գավիթին հատակն ևս լեցվելու պետք ունի մեկ թիզեն ավելի։

Ի. Այժմ հատկապես պետք է խոսիմ երկրագործության գործիքներու վերա, որոց համար ի վեր համառոտ կերպով անցա։ Բովանդակ Եվրոպա մեծ ուշադրություն ընելով երկրագործության գործիքներու վերա, երթալով յուր բանեցուցած գործիքներ կկատարելագործվին. որչափ կարելի է պետք է օրինակ առնենք գոնե միայն այն գործիքներեն, որ մեր երկրին հանգամանաց կհարմարին։ Գլխավոր գործիքը առաջին գութանն է, որ այնչափ լավ շինված է՝ վերջին փորձ և գյուտ, որ միայն երկու ուժեղ ձիով կվարեն հավասար մեր խորունկությանն և ասն ևս արագությամբ, այնպես, որ մի ավուր մեջ մեր երկու ավուր գործ կտեսնա։ Նորա արդեն գոմեշ չունին, եզն ևս չեն գործածեր, վասն զի ձին ամենայն կերպով առավելություն ունի քան զեզն։ Եվ եզն առավելություն ունի քան զգոմեշ, որ ոչ ցրտուն կդիմանա և ոչ տաքուն. և քանի՞ առավել փափուկ է և դարման կպահանջե թե՛ յամարան և թե՛ ձմերան. մթվի թե ամենածանր գործիքներ պատճառ եղած են գոմեշ գործածելու, ինչպես գութան և սայլ, մանավանդ ճամբաներ դարուվեր են ինչպես Վարագա. բայց երբ գութան թեթև լինի, նմանապես և սայլ, այլևս ի՞նչ պետք կա գոմեշ գործածել։ Ուստի շատ շահավոր է և միանգամայն մշակաց համար դյուրագործ, եթե միայն եզ գործածվի և վերջանա գոմեշի գործածությունն, միայն թե պատվական ուժեղ եզներ հասցնելու է։ Եվ որովհետև ձին ևս յուր առավելություն ունի, շատ օգտավար է, եթե խառն կերպով գործածվին թե՛ մանկեռան համար, թե՛ սայլերու համար և թե՛ կալսելու համար ձին պիտանիություն ունի, թողում որ ձին ուրիշ այլևայլ բաներու մեջ ևս կգործածվի, սակայն լավ է, որ երկրագործության ձին յուրահատուկ գործոց մեջ գործածվի։ Ուստի երբ երկրագործության համար հնագույն ծանր և կուլտ գործիքներ փոխվին և նոր հետզհետե հնարյալ գործիքներ գործածվին, այլևս գոմեշներու պետք չկա, որով մշակական աշխատություն մեծ մասամբ կդյուրանա։ Եվ որովհետև եզներ կովերեն կհառնին, սորա համար ամենամեծ խնամք պետք է կովերու մասին, միշտ ջանալով սերունդ ազնվացնել. և այս կլինի միայն լավագույն և հատընտիր ցուլեր պահելով, և եթե երկրին մեջ հազվագյուտ լինին, հարկ է հեռավոր տեղերե գնել և բերել։

Արդեն վեր հիշատակեցի, թե կովեր ոչ ինչ նշանակություն ունին երկրագործին աչքին առաջ, մանավանդ ի ձմերան բոլորովին զբ-

կանք կանեն կովերուն, միայն լոր հարդով կապրին խեղճ անասուններ, այնպես կլինին, որ կաշի և ոսկոր կմնան. շատ անգամ կնրա-տին և այլևս վեր ելլելու չեն կարող, մանա-վանդ հղի կովեր։ Այս մասին դիտես թե մշակին և տանուտիրոջ խղճմտանք մեռած են, չեն մտածեր բնավ թե կովն է, որ հորթեր կուտա, և ձմերան ատեն երբ ոչխարներ կցամքին, կովն է, որ կաթ կուտա, կենու կերակուրին պետքեր, թան, մածուն և յուղ մատակարարելով, հապա թանապուր, որ մշակին և վանուց միաբանության կյանքն է։ Կովերու ախոռ պետք է որոշ տեղ լինի, նմանապես մատաղ հորթիկներուն, մասնա-վորապես խնամք տանելով դոնե օրը մի ան-գամ խոտ ուտեն և կաթնատու կովերուն առա-վել ևս խնամք պետք է։ Ճակնդեղ մշակելով մերթ ևս անով սնուցանել, ավելի կաթ կու-տան և առատապես կվայելեն վանուց միա-բանություն և մշակներ։ Ընդհանրապես թե՛ աշխատավոր անասուն և թե՛ կաթնատու պետք է լավ դարմանվին, դի մի մասին աշ-խատության ուժ պետք է և մյուս մասին ա-վելի սնունդ և կերակուր, որ ուտե և կաթ տա։

ԻԱ. Մեր երկրի գյուղատնտեսության մեջ սովորաբար անասնոց դարման հարդ և խոտն է, և առավել հարդ, այնինչ եվրոպա-ցիք ուրիշ շատ տեսակ բաներ կպատրաստեն անասնոց դարմանի համար։ Մեզի համար բակլան պահոց կերակուր է, իսկ եվրոպացիք միայն ձիերուն կկերցունեն խոշոր-խոշոր աղալով, և այլ սորա նման շատ բաներ։ Վասնզի նոքա փորձած են, որ հարդ շատ նվազ սնունդ ունի յուր մեջ, այնպես որ մի սակառ հարդ 2 օխա ճակնդեղի զորության չի հավասարիր. սորա համար նոքա հարդ անասնոց տակ կփռեն և անտի կուանին աղ-բանոց, վասն զի առատ աղբ պատրաստել իրենց շատ թանկագին է։ Թե՛ խոտ և թե՛ հարդ ձմերան համար պահելու կերուն ևս շատ կարևոր է։ Մեր վանուց խոտերը Վերի ախոռի մոտեր դիզվին ամբողջապես քանի դեզ որ կլինի։ Դեզերուն համար պետք է հարմար դիրքեր որոշել. յուրաքանչյուր դեզ ճիշտ քառակուսի կամ երկար քառակուսի քարաշար պատեր պիտի ունենան գոնե եր-կու և կես կանգուն բարձրությամբ, որ արա-ծող անասնոց բերան չի հասնի. այս պատե-րը միանգամայն նեցուկ և հաստատություն կլինին դեզերուն. հարկ է նաև վանդակաշեն դռներ շինել դիզատան։ Կա նաև ուրիշ մի կերպ, որ ավելի հարմար և տնտեսական է, այսինքն ընդարձակ տեղ մի պատել երեք կանգուն բարձրությամբ, որ ամբողջ դեզեր պարունակե. միայն թե դեզեր իրարմե բա-վական հեռու լինելու են, որ դռան մոտ հարմար է պահապանին մի քյոշկ շինել, որով կապահովվին դեզերը։ Քաղված խոտերը բո-լորն ևս շալակով կրել մինչև ի դիզատեղը բավական տաժանելի է և ավելի ավուրչեք կերթա, այլ պետք է փոքր սայլով կրել, մի դույգ եզնով, իսկ այն մասն, որ ձորերու մեջ են, միայն անոնք պետք է շալակով հա-նել սայլի աղուրին վերա։ Իսկ Վարի դաշտ ցանված կորնկանը միայն ծախել։ Թե՛ ոս-տին և թե՛ ջրարբի առվույտ մշակելն ևս շատ օգտակար է ձմերան համար։ Վարագա սահ-մանին կան այնպիսի տեղերը, որ եթե հա-մարան քանի անգամ ջրվին ընական շայիր կդառնան, որով երկու կերպով օգտակար կլինին. մին այն է, որ ինքնաբույս կլինին առանց մշակության և երկրորդ՝ ավելի սնունդ և զորություն ունին ինքնաբույս խոտեր քան մշակված կորնկան։ Իսկ ձմերան հարդ պահելու կերպն շատ դեշ է, երբ կլըց-վին ծածկված մարագի մեջ. որով կտաքնա հարդ և դոյացած փոշիներով կդառնանա։ Ուստի լավագույն է, որ հարդ բացօթյա տեղ պահվի, որով հարդը թարմ և անուշ կմնա և անասուններ շատ ախորժանոք կուտեն։ Բո-լոր մահմդանից գյուղեր այսպես կպահեն հարդ, և լավ գիտեն պատսպարել հարդի տե-ղի շրջապատը և փրան, որ բնավ անձրևեն և ձյունեն չի վնասվիր։ Մեր Վարագա Վերի ախոռի մարագ պետք է հատկացնել յամա-րան սարակներու պառկելու տեղ և ի ձմե-րան երկրագործության գործիքները պահե-լու։ Թող այս, հայտնի է, որ երկրագործու-թյան համար դեռ կարևոր է, որ ախոռին մոտ այլևայլ շենքեր կառուցվին, որ պետք են ընդհանուր գործառնությանց համար։

ԻԲ. Մեր երկրի երկրագործ ժողովուրդ եր-բոր մի արտ մեկ-երկու տարի մշակե՝ այնու-հետև թող կուտա, որ արտ հանգիստ մնալով կորտանա և ուժովնա։ Սորա բնական պատ-ճառն այն է, որ հողն իբրև մայր երբ կսնու-ցանե բույսերը, հայտնի է, որ յուր կենսա-կան ուժերը բույսերուն տալով ինքն կտկա-րանա, և միայն հանգիստ մնալով յուր ու-ժերը վերստին կստանա։ Այս կերպով մի երկրագործ տուն պետք է շատ հող և արտեր ունենա, որպեսզի կարենա հոգնած արտե-րուն հանգիստ տալ։ Բայց եվրոպացի երկրա-գործը մեզ պես չի մտածեր, նա այնպես գյուտեր և միջոցներ գտած է թե՛ արվեստին գիտությամբ և թե՛ փորձառությամբ, որ մին-նույն արտ ամեն տարի շարունակ կմշակե առանց երբեք հանգիստ տալու։ Եվ ի՞նչ կա-նե, գիտե՞ս, երկու միջոց ի գործ կառնե, մին այն է, որ արտին զորությունը՝ աղբ տա-լով կլցուցանե, երկրորդ միջոցն այն է, որ սերմերը կփոխե։ Նա արվեստին սորված է, թե ցորենի հունձ վերցնելեն հետո ի՞նչ պետք

է ցանել։ Մեր երկրացին էլ գիտե մի բան, բանջարեղեն ցանված պարտեզին տեղը նույն աշնան վարելով ցորեն կցանե և կրկնապատիկ արդյունք կստանա, և սորա պատճառ առատ-առատ տված աղն է։ Ինչ զարմանալի է, որ այն ահագին խոշոր-խոշոր բույսերը, ինչպես լոհանան, կլմպոզ, սոխ և այլն չեն կարող աղբված արտին զորություն սպառել, և սորա պատճառը ցույց կուտա երկրագործության արվեստը, թե այն բույսեր, որոնք սերմ չեն կապեր, ինչպես ցորյան, գարի և այլն, նոքա իրենց սնունդի զորություն օդեն կառնուն, այս պատճառով հողը յուր զորություն մեծ մասամբ կպահե։ Աստի պետք է ուսանիմք, որ աղրը ամենամեծ պիտանություն ունի երկրագործին համար։ Ավա՜ղ, որ մեր երկրագործներն այս բանը չեն հասկնար, մանավանդ գյուղացիք, դեզադեզ աղբերը կդիզվին տուներուն առաջը։

Այլ հազար ավաղ, որ Վարագն ևս չի հասկընար այս բան, և այնքան ահագին քանակությամբ գոյացած աղբերը, որով տարին գոնե մեր ձակա չորս հինգ արտեր կաղրվին։ Եվ ի՞նչ կանե, ապա կրակին կուտա կվառե։ Վարագա անցյալ ժամանակներուն մեղադրելի չէր այս բան, զի այնքան ծառաստաններ չկային, բայց այժմ, որ շնորհիվ տեսչության և տնկասեր աշխատողաց այնքան ծառաստաններ բարգավաճած են, մինչև անգամ տարին բավական գումարի ցախ կծախվի, խիստ մեղադրելի է փայտ ծախել և աղբ վառել և լդիտնալ հաշվել արդյունաբերության շահը, թե արդյոք քանի մի հարյուր ղրուշի ցախ ծախել շահավոր է, թե արդյոք քանի մի արտ աղբել և կրկնակի արդյունք ստանալ և միանգամայն հողը կարկղցնել, բարվոքել։

Ուրեմն պետք է փոխել այս վնասակար կերպը, փայտ վառել միայն, թե ի փուռան և թե ի թոնիր. եթե վանք մի մշակ գործածե, կարող է շատ կոսղ և այլ ցախ բերել տալ. հարկ չկա, վասն զի տարվե տարի կառատանա ծառերուն ցախը։

Ապա ուրեմն պետք է գիտնալ, վարագա արտեր պարարտացնելու խնդիրը ամենեն ուշագրավ խնդիրն է։ Վանուց տեսչությունը պետք է երկու տեղ աղբանոց հաստատե, մին Կուղպի բաղչային գլուխ ջրաղացի առվին կողմն և մյուսն Վարի ախոռին մոտ հարմար մի տեղը. ամեն մեկ աղբանոց 30 կանգուն քառակուսի մեծությամբ պետք է ունենան և երկու կանգունեն ավելի խորություն, այնպես որ ջուր և անձրև չկարենան աղբանոցեն հյութ կամ ջրացյալ շիրան դուրս հանել, այլ պետք է խնամ տանիլ, որ աղրին զորություն յուր մեջ մնա. արվեստը կուտուցանեկ մինչև անգամ աղբանոցին վերա ծածկել. որպեսզի արևը նորա հյութ և կաղեր վեր քաշելով չփչացնե։

Աղբանոցին մեջ պետք է ժողովին բոլոր ախոռի կուերը, վառված մոխիրներ և վանքին ավելվածք և ամեն փտելի նյութեր, զոր օրինակ փտած ձորտեր և այլն։ Վերի աղբանոցեն պետք է տեղափոխվին փոքրիկ սայլով Կոլի մոտի շրջակա արտերը, իսկ Վարի աղբանոցեն յուր շրջակա արտերը և մինչև Խաչ աղբյուրը կրնա կրվիլ։ Բանջարեղինաց, հնտեղինաց արտեր մեծ մասամբ աղբ կուզեն։ Այս այսպես կարգադրելով մի անգամ պետք է որոշել, որ Վարագա ծառերուն չբոփին բնավ չծախվի, այլ պետք է մեծ ցախատուն մի պատրաստել, ցախապետ կարգել, որ յուրաքանչյուրին ըստ յուրում պիտույից կարենա բաշխել։

ԻԳ. Թողլով այժմ սերմի մշակության մասն, դրեմ նաև փոքրիշատե ծառատնկոց մշակության մասին, որո օգտակարություն շատ մեծ է և բազմակողմանի շահեր ունի։ Ուրախ եմ, որ վերջի տարիներս վարագայնոց անխոնջ աշխատությամբ բավական ծառատունկեր հասած են։

Այլ որովհետև ծառատնկոց մշակությունն ևս յուր բազմադիմի արվեստն ունի, զոր պետք է թողուլ արվեստագետին, ես միայն տնկելու և քաղմապատկելու կերպին վերա միայն գրելով, բավ կհամարիմ։ Քաղաքացվոց սովորությունն այն է, որ ուռի գալեմներ գոնե չորս կամ հինգ կանգուն երկարությամբ կտնկեն. դորա պատճառն այն է, որ փողոցներու մեջ լինելով առանց պատսպարության, տված ճյուղեր ապահով չեն մնար, հասնող յուր համար պետք եղած ճպտոտ կկտրե, անցնող անասուններ ևս նույն կանեն։ Բայց վանքի ծառաստաններ այս արկածեն ապահով լինելով, պետք է ուռի գալեմներ կարճ-կարճ տնկվին՝ 2 կանգուն կես և կամ երեք կանգուն։ Ես կերպի օգտակարությունն այն է, որ յուր գալեմներ շուտ կաճին, պինդ և ուժով կլինին, երկրորդ՝ քշտել և մեկ-մեկել դյուրին կլինի։ Երկրորդ կերպն է ծայրով տնկել ինչպես բարդի գալեմ, միայն կարճ պետք է լինի, որ հովեն ճրեբալով և տատանվելով չվնասի, մինչև որ արմատներ ձգե։ Երրորդ կերպն է ավելի կարճ տնկել ըսպրխանի պես, կես կանգուն դուրս մնան հողեն. ասոր տված գալեմներ խիստ սմուր և կարծր կլինին. արտամետացոց, ձվստանցոց մեթոդն այս է, Շամիրամա առվին եզերք տնկված ուռենիներ բոլոր այսպես են, որով մեծ-մեծ թրհաներ կլինին և կծախեն գյուղացվոց. սակայն այս տնկվածներ պահպանել և պատսպարել պետք է։ Չորրորդ կերպ, որ տիրապես անտառատնկ-

կոց ձևն է, ուստի քշտված ծառերուն երրորդ տարվան ճյուղեր երբ անտառացան կմեկմեկ, այդ ճյուղերեն ընտրելով լավագույններ, երկու կանգուն ու կես բարձրություն պետք է ունենան այս տունկեր, յուր գյուխ եղած ճյուղեր պետք է մեկ-մեկ թիզ թողլով կոր դանակով կտրել ամփոփ ձև մի տալով գլխուն, և այնպես տնկել։ Այս կերպ տունկերը անպետ արտերու մեջ կամ եզերքներ կրնան տնկվիլ, առուներ շինելով և ջրելով ցցով ծակել և տնկել քանի մի հազար տունկեր։ Իսկ կաղամախի և բարդի համար չեմ դրեր. նոցա հինավուրց եղանակ ավելի լավ է։ Լսած եմ, այլ չգիտեմ թե ստույգ է, Պարսկաստանի մեջ կաղամախի դալար ճյուղեր մասն-մասն կտրտելով, հերկված արտին մեջ սերմի պես կցանեն։ Երկու կամ երեք տարիեն հետո կտեղափոխեն։

Այսչափս միայն անտառոտ և անցողապես դրելով շատ կհամարիմ. ես երկրագործության արվեստագետ վարժապետ չեմ, որ դասախոսեմ ձեզ։ Միտս եկավ աստ մի կարեվոր մասն, զայն ևս դրել օդտակար կհամարիմ։

Վարագա վանք, որ այնչափ անձինք ունի յուր մեջ, ամարան ատենը պտուղներու կարոտ կմնան, ուստի անպտուղ ծառերեն զատ պետք է պտղատու ծառերու մի ընդարձակ պարտեզ ունենա, և պարտեզի համար ամենահարմար տեղն է ախոռի մոտի փոս արտը, զոր ցանկապատել պետք է կամ փուշ տնկելով և կամ ուտի և սոյը տանի ցիցեր երեք մարդ սրի տնկելով երկու տարվան մեջ անանցանելի ցանկ կլինի և գործածության ևս միանգամայն օգտակար կլինի. մասուրի փուշերն ևս կրնան տնկվիլ. չգիտեմ՝ մասուրի սերմեր ցանելով կբուսնի՞, թե արմատով ճյուղեր տնկելու է։ Մկնալուշի բարակ ցուկներն ևս լավ ցանկ կլինին։

Այս պարտիզի մեջ տնկելու է ծիրանի, տանձի, սալորի և դամոնի շատ տեսակներ և այլն։ Ցուկներ Արտամետեն բերել տալու է և այս գործը ժրաջան Պետրոսի բաժինն է, այժմ կարծեմ Արոտուց դուռն ևս շատ կբերեն կծախեն. ցուկներ պետք է շուտով տնկվին, և գոնե երկու կանգուն ու կես իրարմե հեռու։ Հայտնի է, որ մի տարվան մեջ դժվարին է բոլոր արտը լեցնել. լավ է, որ հյուսիսի կողմեն սկսյալ դեպի հարավ երթան, որպեսզի վերջի տնկվածներ հով չունենան իրենց վերա։ Եթե աշխատվի և բավական դրամ ծախսվի, կարծեմ երկու տարվան մեջ կամբողջանա արտը։ Եվ որովհետև այս արտ աղբյուրներու և լճի տակ լինելով, պետք եղած ժամանակ կրնա ոռոգվիլ։ Գիտեմ Հայը Մեսրոպ պիտուգությունն պիտի անե, թե արտ պտղաբեր լինելով շատ ափսոս է։ Պետք է գիտնալ, որ Վարագ շատ հող և արտեր ունի. երանի՞ թե քիչ ունենար և քաջ մշակեր։ Եթե լավ իմաստասիրենք՝ հողի ընդարձակությունն է պատճառ, որ թույլ չի տար լավ մշակել։ Եթե այսօր եվրոպացին արվեստով լավ կմշակե յուր հողերը, դորա պատճառ այն է, որ յուր ձեռք եղած հողաբաժին շատ քիչ է. սորա համար նա կստիպվի քաջ մշակել և քիչեն շատ արդյունք առնել։ Փոս արտը եթե պտղատու պարտեզ լինի յուր արդյունքը բնավ չի կորսնցներ, այլ ավելի ևս արդյունավետ կլինի. թողում պտուղներ, որ մեծ մխիթարություն է վանուց, նա շատ փայտ կուտա ժամանակին. պարտեզին մեջ միշտ առատ խոտ կբուսնի, դառներուն և հորթերուն հովանոց կլինի։ Պտղատու ծառեր քանի փոքր են անոնց տակ հնտեղեն բաներ կրնան ցանվիլ, միայն նայելու է չցանել այնպիսի բան, որ ծառերուն ուժը առնե։ Անշուշտ այս պարտիզին մի պահապան և խնամատար պետք է։ Ի՞նչ կանեն ուսումն և կարդալ չսիրող վարդապետները, դոնե նոքա թող զբաղին այս պարտիզին մեջ մի սղոց և մի կոռ դանակ ունենալով իրենց ձեռք, բայց դոնե սկդրան մի վարպետ պարտիզպան պետք է։ Ալուր գյուղի մեջ շատ կան, որոնք լավ սորված են այդ արվեստ Պոլիս Կարապետ պեյի պարտիզի մեջ։ Վերի պարտիզի ծերունի ծառերը այլևս օգուտ չունին, լավ է որ հանվին և անոնց տեղը կադամախ տնկվին։ Մինթե Վարագա սահմանին մեջ այգի տնկելու արեգդեմ առապարներ չկա՞ն, ինչպես Խաչ աղբյուրի առապար և ուրիշ շատ տեղեր, որք իրենց հարմար հողով և դիրքով կարող են խաղող հասցունել։

Երկրագործության մասին բոլոր գրեցի, շատ գուշնաքյա բաներ են. միայն գրելով և հրահանգ տալով գործ չի ավարտիր, «զի մարդ է, որ գործէ զերկիրս. մտածել պետք է, հնարել պետք է, միշտ փորձառական ձեռնարկումներ պետք են։ Որչա՞փ դժվարին է հնություն և նախապաշարմունք թողնել և նորա տեղ հաստատել հառաջդիմական նորությունը։ Գիտեմ, դուք բան մի ունիք հառաջ բերել և ասել. «Հայրիկ, թե երկրագործության այդ բարեփոխություններ ի գործ դնելու համար դրամ պետք է, դրա՞մ։ Այո՛, դրամ պետք է, բայց դուցե դրամ հայթայթվի, ձեռք բերվի, և ես կասեմ՝ ավելի մարդ պետք է, մարդ և հաստատուն կամք, վասնզի իմ դրածներս մեծ մասամբ առանց դրամի, աշխատությամբ միայն ի գործ կդրվին, բավական է, որ տեսչություն համոզվի, հոժարակամ լինի և միանգամայն սիրահար

երկրագործության աստվածապարգև արվեստին։

Հիշեցեք, մի մոռնաք, թերևս 3—4 տարիներն ի վեր կտքնիմ այս վանուց համար, և դուք կարո՞ղ եք չափել այդչափ զոհողություններ, զորս մատուցած եմ այդ վանուց համար. հալածանք և պանդխտություն չթողին, որ Հայրիկ գոնե հինգ և վեց տարի կարենար շարունակել յուր ձեռնարկություն Վարագա վանուց մեջ։ Եվ այժմ ևս մինչև ի Սիոնի լեռը տարագրված եմ, և այն պահուն, երբ ազգ և էջմիածնի համազգային ժողովը զինքը Հոգևոր Տեր կընտրե Ս. Լուսավորչի Աթոռին, նա գիտես թե կմոռնա յուր առաջակայի ամենածանր պաշտոնին հոգածությունը (որ դեռ անորոշ է, զի թողեր եմ զայն Տիրոջ ամենօրհնյալ կամաց)։ Եվ ես այժմ նստած ի Սիոնի լեռը, կնայիմ դեպի Վարագ և նորա տնտեսական վիճակ բարվոքելու համար միտքս ի հոգևորեն դարձուցած՝ նյութական հողին վերա կմտածեմ և կգրեմ, չհիշելով Հիսուսի բանը՝ «Թող մեռելոց թաղել զմեռեալս իւրեանց», զի գիտեմ, թե Վարագա կյանքը յուր հողն և ջուրն է։ Ուստի կաճապարեմ, որ դեռ գերեզման չմտած՝ տեսնամ Վարագա վանուց բարգավաճումն և հառաջդիմություն։ Ես հավատք ունիմ տեսնալու, միայն թե գործակիցներս էլ նույն հավատք ունենան և աշխատին։

Վարագա վանուց աշխատավոր միաբանություն պետք է ինքնօգնության սկզբունքը իբրև հավատք ընդունի, թե այդ միջոցն է միայն ուղիղ ճանապարհ հառաջդիմության և վանական կյանքին ապահովության։ Հասատեսել պետք է, թե Հայրիկի ժամանակ հասած է, եթե Աստված ողջ պահե և մի քանի տարի ևս կարենամ ձեզ օգնել, այդ մեծ բախտ է Վարագա համար։ Սակայն չպետք է որ դուք հուսախաբ լինիք և անհոգաբար հաստելով ընդարձակեք ձեր հավատք. «Վա՜յ, Հայրիկ Կոթողիկոս կլինի, այլևս զի՞ պիտո մեզ գործել, վաստակել, Վարագա չրաղացի ջուրի չափ ոսկի պիտի թափի ի մի արագ, և այնուհետև մեր չրաղաց պիտի բանի անաշխատ։ Մեր գործն ևս սրբմա կլինի ըստ վանեցվոց առածին»։ Բայց դուք պետք է այժմեն հեռատես լինելով նկատեք, թե Հայրիկ ներկա ինքնիշխան և ազատ դրությենեն ելելով՝ կերթա կկաշկանդվի այնպիսի անձով և կաշկանդիչ դրության մեջ, որու վերա կարևոր այքեր կհսկեն։ Եթե այքս դարձուցած դեպի Վարագ շինել ուզեմ, ի՞նչ պիտի ասեն, գիտե՞ք։ «Հայրիկ Կաթողիկոս եղավ Վարագ շինելու համար, թողով էջմիածնա ավերակներս։ Եթե այժմ մեր առատասիրտ սուլթանեն ամսական առնելով կարող կլինեի օգնել, այդ ևս պիտի վերջանա։ Կկարծվի թե Կաթողիկոսի գոգն ընդարձակ է, շատ և շատ դրամներ աղբյուրի պես կուգան կլեցվին. գուցե այդպես լինի, բայց Հայրիկի կարկատող ձեռաց բան կդիմանա՞, և մի՞թե կուզե Հայրիկը, որ դրամ քաշող, հարստահարող մանկանի մի ունենա։ Այս բաները կանխապես մտածելով՝ լավագույն միջոցը Վարագա մասին ինքնաշխատության միջոցն է։

Ուրեմն իբրև սկզբունք ևս, առավել ևս իբրև հավատքը բռնելով այս միակ միջոցը, պետք է գործել և հարատևել, հայնժամ ևս կհավատամ, դուք ևս հավատացեք, որ Վարագա ապագայն երաշխավորյալ է, և այս բանին միակ պայմանն է հարատևող ինքնաշխատություն, իմաստուն և խնայող տնտեսություն։ Իսկ հառաջդիմության պայմանն է փորձառական ձեռնարկություն, զոր մտածելով կստեղծե հնարող ոգին և սորա արդիւնք է ներկա աշխարհիս բովանդակ զարմանալեաց գործեր, որոց վերա հավանարար թե մարդկային մտաց հանճարն է ստեղծեր զայնս։ Տեր Աստված երկիր մարդուն տվավ իբրև մի անսպառ և անհատնում դրամագլուխ և ասաց գործել ի պահել։ Իսկ մարդն այդ դրամագլուխը անհաշիվ կերպով աճեցույց և բազմապատկեց։ Վարագ յուր հողերով, դաշտերով, լեռներով, ջուրերով միթե փո՞քր դրամագլուխ է. պետք է այդ դրամագլուխ աճեցնեմք խելքով և արվեստով հետևելով քաղաքակիրթ ազգաց, ադով միայն մեր դատարկ շտեմարաններ կլեցվին և մեր քրտանց հացը կշտապինդ կվայելեմք։ Ի վերջո հառաջ բերելով Սողոմոնի խրատը, կվերջացնեմ դուշնաքյա հրահանգս, «Որ գործէ զերկիր, լցցի հացիւ, և որ երթայ զհետ դատարկութեան՝ լցցի աղքատութեամբ»։

1892, Հունիս 23,
Երուսաղեմ։

ՇԱՀԱՆ—ՍԻՄՈՆ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

(Հուշեր ծննդյան 85-ամյակի առիթով)

ղբացյալ Կոմիտաս վարդապետը ծնվել է Թյուրքիայի Քյոթահիա (Կոտինա) քաղաքում 1869 թվականի սեպտեմբերի 26-ին, Սողոմոն անունով. վախճանվել է Փարիզի Վիլ Ժյուիվ հիվանդանոցում 1935 թվականի հոկտեմբերի 22-ին։ Հայրենադարձ հայեր նրա աճյունը հետները բերին Երևան և այնտեղ էլ, իր սիրած մայր հողում վերաթաղեցին 1936 թվականին։

***

Ես ի՞նչ իմանայի, թե Ճեմարանում հետս վեց ու ձնագնդի խաղացող Սողոմոնը՝ Կոմիտաս անունով մեծ կոմպոզիտոր պիտի դառնար ու հռչակ վայելեր։ Թե դուշակեի, եթե իմանայի, հենց այն ժամանակվանից կուսումնասիրեի նրա նիստ ու կացը, բնավորության գծերը, նրա ամբողջ էությունը։

Երբ ախալցխացի աշակերտներս 1884 թվականին գնացինք Էջմիածին և ընդունվեցինք Ճեմարան, միասին դասընկեր եղանք նրան։ իմացանք հատկապես, որ նա էլ նույն տարին Ժառանգավորաց դպրոցից փոխադրվել էր Ճեմարան։

Ճեմարանի 2-րդ դասարանում մեր երգեցողության ուսուցիչը Սահակ սարկավագ Ամատունին էր։ Սա էլ Օշական գյուղից էր, և Նիկողայոս Թաշճյանին աշակերտել էր՝ լինելով Մակար Եկմալյանի դասակիցը։

Ամատունին հմուտ էր հայկական ձայնագրության, եկեղեցական շարականների Պոլսի եղանակներին, բայց ինքը մեզ դաս տալիս, գերադասում էր Էջմիածնի հին եղանակները. այդտեղից էլ իրեն դասանյութ էր ընտրում։ Նրա սովորեցրած երգերը մեծ մասամբ դրաբար էին և կամ միջնադարյան-աշուղական հայերենով։ Սահակ սարկավագի ձայնը մեղմ էր և գուրեկան, խոսակցությունը ցածր ու համեստ։ Սողոմոնը նրա բոլոր ձևերը ընդօրինակում էր, սովորեցրած երգերը՝ անգիր անում։ Դրանք էին. «Երկինք զուարթ ակնարկէր», «Ես յարկս պերճ», «Ահա աշնան առաւօտ», «Ի կանխադէտ տեսչութենէդ», «Է՛յ, իմ վարդիկ» և այլն, կամ Գամառ-Քաթիպայից վերցրած՝ «Թող փլէ քամին պաղ-պաղ», «Մեր խեղճ ազգը ուսում չունի», «Հիմի՞ էլ լռենք» և այլն։

Սահակ Ամատունին ուներ նաև բանաստեղծական շնորհք. նա երբեմն իրենից էլ հղանակում. «Նայեցէք Արմաւիրն՝ ո՞վ հայ պատանիք», «Տխուր-տխուր ձայն եմ լսելիս իմ Ախուրեանէն», երբեմն էլ իր գրած՝ հեղինակած ոտանավորները կարդում էր հանդիսավոր օրերին՝ Ճեմարանի հանդիսարանում։ Նրա ուղղությունը մի քիչ նման էր Գամառ-Քաթիպային, որից մի քանի ոտանավորներ տպված կան «Սոխակ Հայաստանի» երգարանում։ Հենց այդպիսի բանաստեղծական ձիրք և երգեցողության հմտություն ուներ և՛ մեր Սողոմոնը։ Սա էլ երբեմն իր բանաստեղծական խծբծանքները կարդում էր տոն օրերին, ինչպես «Մին ծին ծիրանի»— նմանողությամբ Հայր Ղևոնդ Ալիշանի։

Բացի իր սովորած և ընդօրինակած երգերից՝ Սողոմոնը սիրահար էր նաև տաճկական և քրդական երգերի, որոնք երգելով կոմիկորեն մեզ զվարճացնում էր. «Հայ դին-դին հոփլա տա դալ, շալվարըն թոփլա տա դալ», կամ քրդական մղմղոցներով ու միմիկաներով երգում էր շարունակ.

Լեյե գավրե մբյար կըրթյա՜-՝ ժբթո-ռունա՝,
Լեյե սբնկես բիե՞—է՝, կալգա գբնե՞—է,
Վալյե լեյե՞—է՝, վալյե լեյե՞—է՝,
Քաֆբր գավրե—է՞, քսֆբր դավրե՞...»

Հիշում եմ նույնպես, որ Սողոմոնը եվրոպական նոտաներով գրված մի դասագիրք ուներ, որը սերտողության ժամերին անդամ առջևն էր դնում, ականջները երկու ձեռքով

Կոմիտաս վարդապետ

Սողոմոնը տարօրինակ մղմղոցային վերջավորություն էր տալիս երգին, ինչպես հատուկ է քրդերին։

փակում, որ կողմնակի շշուկներ չլսի, ու ինքն իրեն կամաց կրկնում էր՝ դո, ռե, մի... և սովորում էր։ Ճեմարանի աշակերտներս այդ

ժամանակ դծային սիստեմի մասին գաղափար չունեինք. կարծում էինք, թե հայկական նոտաներն են, որ կան։ Եվրոպականի համար Սողոմոնն ասում էր. «Թան չէ՛, մածուն չէ՛, ամեն մարդու բանը չէ»։ Եթե ճիշտ խոստովանինք, պետք է ասենք թե՝ այդ տղան բացի նոտաներից ու երգերից, բարի հայոց լեզվից ու բանաստեղծություններից՝ ուրիշ առարկաներով չէր հետաքրքրվում։

3-րդ դասարանումն էինք, որ երգ-ձայնագրության համար նոր ուսուցիչ նշանակվեց վերակացու Մինաս Ազնավուրյանը. սակայն Սողոմոնը ձայնագրության արվեստը նրանից լավ էր իմանում. ուստի նոր դասատու Մինասը երբ մեզ որևէ շարական էր բացատրում սովորեցնելու համար, ամենից առաջ այդ շարականը երգել էր տալիս Սողոմոնին, իսկ մեզ պատվիրում էր նրան հետևել, նրանից սովորել և դասը պատրաստել։ Սողոմոնը շարականների ութ ձայն եղանակները և նրանց ելևէջները իրենց բնորոշ դարձվածքներով ուներ գրած, ուսումնասիրում էր այն. նա 3-րդ դասարանից (ներկա 6-րդ) արդեն սկսել էր հայկական ձայնագրության պատմությունը գրի առնել՝ պոլսեցի Համբարձումի պապայից մինչև Ն. Թաշճյանն ու իր աշակերտները։ Այդ, դեռևս անմշակ, տետրներից ես օգտվել եմ և արտագրել, որը պահել էի մոտս, բայց ուշադրություն չէի դարձնում, մինչև որ Ռոմանոս Մելիքյանի խնդրանաց համաձայն նրան տվի։

Իսկ ի՞նչ վիճակի մեջ էր ընդհանրապես Ճեմարանը։

Սողոմոնի և մեր ուսանողության տարիներին՝ Ճեմարանն ուներ իր արդեցիկ խումբը, որը պատարագին երգում էր միաձայն եկեղեցում, իսկ ցերեկույթ-երեկույթներին՝ Ճեմարանի հանդիսասրահում. ձեռնարկներ ունեինք՝ Ն. Թաշճյանի ձայնագրած պատարագի երգեցողության գիրքը և Ե. քահանա Երզնկյանի ազգային երգեսրանները։ Բոլոր աշակերտները պարտական էինք հերթով եկեղեցի գնալ, ժամասացությանը մասնակցել լի օրերին։ Ամենօրյա հերթապահներն ունեին իրենց հմուտ դասապետը՝ երգիչների միջից ընտրած։ Սողոմոնը նույնպես դասապետի պաշտոն ուներ. նա իր շնորհալի կառավարությամբ աչքի ընկավ. նրա հետ՝ դեմ առ դեմ եկեղեցում մրցակցում էր վաղարշապատցի Տիգրան Ռեթեոսյանը, որը նույնպես քաղցր ձայն ուներ և նրանից մի դասարան բարձր էր։ Բայց Սողոմոնի աչքը է՛լ ավելի բացվեց ա՛յն ժամանակ, երբ Մ. Եկմալյանը Պետերբուրգի կոնսերվատորիան ավարտելով եկավ էջմիածին՝ իր կազմած եռաձայն պատարագի երգերը Ճեմարանի աշակերտներին տվորեցնելու և եկեղեցում երգել տալու։

Մ. Եկմալյանի փորձնական դասերին Սողոմոնը նրա օգնականն հանդիսացավ։ Այս դասերին՝ թեպետ ձայն չունեի, բայց ես էլ էի մասնակցում։ Ամառվա ամիսներն էին՝ 1888 թվականի։ Ամառը աշակերտները ցրվել էին, էջմիածնում մնացածները քիչ էին, ուստի և ինձպեսներին էլ հերթ հասավ մասնակցելու։ Մի-երկու ամիս պատրաստվելուց հետո՝ հաջողվեց եկեղեցում երգելու մի քանի հատվածներ։ Սողոմոնը արդեն թև առավ ու սկսեց ինքնուրույն կերպով ուսումնասիրել ներդաշնակ՝ եռաձայն, քառաձայն երգերը։ Ճեմարանի հանդիսարանում դրված կար մի ֆիս-հարմոն, որի վրա սովորում էր ինքնուրույն նվագել և առաջադիմել։ Հենց հետևյալ 1889 թվականի հունիսի 17-ին էր, որ Ճեմարանի սաներից ոմանք Օրմանյան եպիսկոպոսի քարոզներից ազդված, հանձն առան հաղթել հոգևոր սքեմ— տեսուչ Արշակ Նահապետյանի օրինակով։ Մեր՝ վեցերորդ դասարանից էլ չորս հոգի սարկավագության աստիճան ստացան. դրանցից մեկն էր Սողոմոնը, որ այնուհետև իր անունն ու ազգանունը ստորագրում էր Ս. Ս. Ս., այսինքն՝ Սողոմոն սարկավագ Սողոմոնյան։

6-րդ դասարանը՝ Ճեմարանի դպրանոցական բաժինն ավարտելուց հետո 1890 թվականին, ես հեռացա Ճեմարանից, ուսուցչի պաշտոն ստանձնեցի Մոզդոկ քաղաքում, իսկ Սողոմոն սարկավագը իր կարգակիցների հետ մտավ լսարաններն ու շարունակեց տարումը, մեծացավ, մեծ մարդ դարձավ, Մկրտիչ Խրիմյանի օրոք վարդապետ ձեռնադրվեց և վերակոչվեց Կոմիտաս, որի լրիվ վիճաբանությունը՝ ցանկացողը կարող է իմանալ Թերլեմեզյանի գրքույկներից։ Բայց այնտեղ մի կարծիք սխալ է դուրս բերած՝ իբրև թե էջմիածինը նրան հալածում էր։ Այսպիսի սխալների մեջ շատերն են ընկել, ցույց տալու համար իրենց առաջադիմությունը։ Որքան մեզ հայտնի է, Կոմիտասը էջմիածնի աջակցությամբ և բուրժուա Մանիաշյանի նպաստով 1896 թվականին անցավ Գերմանիա և Եվրոպա առհասարակ, կատարելագործելու իր թերին։

Դրսի կյանքիս մեջ Կոմիտասին հանդիպել եմ երկու անգամ։ 1893 թվականի ամռանը Մոզդոկից տարա Ճեմարան՝ դպրոցն ավարտող աշակերտներիցս ամենախելճին՝ Օրդուխանյան Գեորգին, Էջմիածնում հանդիպեցի իմ նախկին ընկերներին, որոնց հետն էր և Սողոմոն սարկավագը։ Մեր հանդիպումը սրտառուչ էր. վերհիշեցինք մեր անցյալ ճեմարանական կյանքը։ Սողոմոնը իր ընկերների հետ ինձ հրավիրեց ներսիսյան անտառ՝ քեյֆ անելու։ Ընկերներս ինձ լավ հյուրասիրելուց հետո՝ բերածս աշակերտին հանձնեցին Թոմա վարդապետին, որ նա պահե, պատրաստե, սեպտեմբերին Ճեմարան ընդունել տալու։ Այդպես էլ եղավ։ Ճեմարանի երգեցողության ուսուցիչն էր Ք. Կարա-Մուրզան, որին Մկրտիչ Խրիմյանի կաթողիկոսության տարին Էջմիածնից հեռացրին։ Ճեմարանի երգեցողության դասատու նշանակվեց Սողոմոն սարկավագը՝ իբրև «Հայաստանյայց Եկեղեցու հարազատ զավակ», նույն 1893 թվականի սեպտեմբերին։ Այդ միջոցներին, իհարկե, Սողոմոնը երաժշտության մեջ Ք. Կարա-Մուրզայից թույլ էր. այս բանն ինքը՝ Սողոմոնը զգալով, գնաց Թիֆլիս՝ Եկմալյանի մոտ և ապա անցավ արտասահման՝ իր սիրած գեղարվեստի մեջ կատարելագործվելու։

Երկրորդ անգամ Կոմիտասի հետ իմ հանդիպումը տեղի ունեցավ 1895 թվականին։ Մոզդոկից Թիֆլիս հանդիպելիս, լսեցի թե Կոմիտասը Ս. Սարգիս եկեղեցու դպրոցումն է ապրում. գնացի այցելության. ինձ ընդունեց ուրախական աղաղակով. դասարանում դրած դաշնամուրի առջև նստած սկսեց իր սովորած հարմոնիայի կտորներից նվագել, ցույց տալով դրա օրենքները և նրա մեջ եղած բացառությունները։ Այդ օրը նա ինձ մի կամերտոն նվիրեց, որը մինչև այսօր մոտս է իբրև ընկերական մի սուրբ հիշատակ։

Արմավիրից ունեցածս գրագրությանց միջոցին՝ նա ինձ ուղարկել է «Ամեն հալի սրտից բղխածՔ» օրհներգը, որը տպել եմ տվել Մոսկվայում «Ուղեցույցում» մեջ, իսկ «Մայր ԱրաքսիՔ» եռաձայն և «Հիմի էլ լռենքՔ» իր ֆիգուրաններով հանգերձ և երդերի արտագրածներս սեպագրությանց տեսակումս են մնացել։ Ափսո՜ս, որ նրա նամակները կրակի ճարակ են դարձել։



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿԱՖԱՅԵՑՈՒ ՁԱՓԱԾՈ ՏՈՄԱՐԸ*

1 Վարդան ծառայ հաւր Աստուծոյ
Եւ պաշտօնեայ Տեառն իւրոյ,
Խորհուրդ արար շարադրելոյ
Ազգին Հայոց մեծ տումարոյ,

Այլ և ջանիւ ոտք հանելոյ,
Դիւրեաւ մանկանց ուսանելոյ,
Եւ յիշատակ հոգւոյ իւրոյ,
Մնօղաց ընաւին՝ յեղբարց բարոյ։

9 Հազար հարիւր թուականի,
Քսան և հինգ յարաբարդի,
Առ ոտքն սուրբ Աստուածածնի,
Որ է յաթոռ առաչնորդի։

Անուանք ամսոց ազգին հայի՝
Նաւասարդի, հոռի, սահմի,
Տրէ, քաղոց, արաց, մեհեկի,
Արեգի, ահկի և մարերի,

17 Մարգաց, հրոտից այսպէս լինի։
Քանիք աւուրց ամսաթուի՝
Յերեսնական ամէն ամսի,
Եւ աւելիքն է հինգ թուի։

Կըրկնակ ամսոց այսպէս արա.
Նաւասարդոյ ամիսն որ կայ՝
Եօթըն եօթըն զամէն գրնայ,
Մընայ կրկնակ՝ հոռոյ լինայ։

23 Եւ կայ զհոռի զիւր կըրկնակին,
Նոյնպէս եօթն եօթն երթ ընդ նըմին,
Մընայ կըրկնակ սահմի ամսին,
Եւ այլն այսպէս է ըստ կարգին։

208ա // Եւ նաւասարդ կրկնակ չունի,
Երկու կրկնակ ամսոյն հոռի,
Չորրորդ կրկնակ տուր ի սահմի,
Եւ վեց կրկնակ տրէ ամսի,

33 Եւ մէկ կըրկնակ քաղոց ամսի,
Երեք արաց, հինգ մեհեկի,
Չըկա՝ արեգի, երկու ահկի,
Դարձեալ չորրորդ թիւ մարերի,

Վեց թիւ մարգաց, հրոտից եզի,
Եռ աւելնաց՝ կրկնակ ամսի.
Ո՛չ աւելնայ, ո՛չ նուազի,
Մինչև ի վերջ կատարածի։

41 Կիսակ ամսոյ այսպէս զուգի.
Նաւասարդի ըսկի չունի,
Ամէն ամսոյ կէս կէս առնի,
Մինչև ի վեցրն կատարի։

---

* Շարունակված ամսագրի 1954 թվականի № IX-ից։

23. գրնայ

Հայոց թուականն այսպէս զուգես.
Թիւ մի արաց ամսէն կալցես,
Մինչ յայտնումինն և համարես.
Զորեքպատկեա՝ այնչափ թիւ ես։

49 Տեսնես՝ թէ առաջին ամ ես,
Աստի եռ թիւ ի յետ ձրգես,
Եւ թէ երկրորդ ամին իցես,
Դու երկու թիւ ի բաց ձրգես,

Դարձեալ երրորդ ամին իցես,
Մէկ թիւ ի բաց աստի հանես,
Եւ այլ չորրորդ տարին իցես՝
Մի՛ ինչ երթայր՝ նահանջին ես։

57 Թէ գիտիցես յորում ամ ես,
Եւ զմեծ թուականն կալցես,
Աստի չորսեր թիւ բաց ձրգես,
Զորսէն խոնարհ՝ այն ամին ես։

Եղբայր դու լեր պատրաստական,
Թիւ մի աւել կայ հայ թուական,
Եւ կը գործէ սրխալական,
Զրգէ 'ւ արա, որ ըստոյգ գան։

65 Փոքր թուականի հայի, հռոմի
Ինն և տասնեակ նահանջ ամի,
Զայն որ ասէ թէ որում ամի,
Զայդ հինգ բաներդ չսրխալի։

Զայդ հինգ բաներդ յորժամ զուգես,
Հայոց մեծ թուականն կալցես,
Զաւելի թիւն ի բաց ձրգես,
Յետոյ ըստոյգ կատարեսցես։

73 Փոքր թուական այսպէս արա.
Թիւ մի տրէ ամսէն կալեա՛,
Մինչ տեառնընդառաջին համարեա՛,
Զայլն մեծ թուականին արա։

Եւ կալ զմեծ թուական հայու,
Շրջան որքան որ յաւելնու,
Ութ հինգ հարիւր տրտուն երկու,
Մընայ փոքր թուականն տարու։

81 Եօթներեակ այսպէս արա՛.
Կալ ըզթուականն, երեք յետ ձրգեա,
Յետոյ եօթներ ի բաց գընա,
Մնացեալն և եօթներեակ լինայ։

Դարձեալ և եօթներեակ զուգէ,
Փոքր թուին չորս թիւ ածէ,
Ապա եօթներ աստի ձրգէ,
Եւ որ մընայ՝ եօթներեակ է։

48. Զորեքպատկեա՝
53. գընա՝

208r 11 Ամսամբտին կալցես թիւ մին,
Զեօթնեակ տարոյն. զկրկնակ ամսին
Իօթն եօթն երթաս, որ վրՃարին.
Թէ մին մընայ՝ է կիրակին.

Եւ թէ երկու՝ երկուշաբթին.
Նոյնպէս երեք՝ որ ի կարգին։
Օրագիտին կալ զօր ամսին,
Եւ այլն՝ որպէս ամսամբտին։

97 Եղբայր, նահանջն այսպէս արա.
Զմեծ թուականն չորս բաժանեա,
Երեք մասունս ի յետ ձրգեա,
Յետոյ մի մասն՝ նահանջ լինայ։

Զաջդ ի յերկինքս տարածեա.
Լի արտասուօք աղօթք արա,
Եւ քո հոգոյդ հանգիստ խընդրեա
Եւ եղկելիս ի քեզ յիշեա։

5 Դարձեալ նահանջ այսպէս արա.
Մեհեկի առաջի օրըն կալեա,
Մինչ յայտնութիւն և համարեա,
Յետոյ սա մեծ նահանջ լինայ։

Ամսանահանջ այսպէս արա.
Կալ զնահանջըն որքան լինայ,
Երսուն երսուն աստի գընա,
Մնացեալն ամսանահանջ լինայ։

13 Թէ ինն և տասներեակ զուգես՝
Դու զմեծ թուականն կալցես,
Տասն և ինններ աստի ձրգես,
Թէ լրման գայ՝ այն տարին ես։

Այլ ինն և տասներեակ զուգես,
Փոքր թուական հայուն կալցես,
Աստի տասն և ինններ ձրգես,
Այլն մեծ թուականին տեսնես։

21 Վերագիր տարոյ այսպէս արա.
Եւ զմեծ թուականն կալեա,
Տես թէ որքան նահանջ ի նմա,
Որչափ ինն և տասներեակ կայ.

Ըզթուականն բազմապատկեա,
Եւ ըզմէկըն մեհտասան արա,
Ըստ նահանջին աստ ի վերնայ,
Ինն և տասներ բեր ի վերայ,

98. բաժանեա՝
21. արայ
22. կալեա՝
25. բազմապատկեա՝
11. գընա՝

29 Գու հանապազ այսպէս արա.
Ուրբաթերորդ թիւն ի յետ դրնա
Եւ զայլն երեսուն երեսուն ձրդեա՝
Մնացեալ վերադիր տարոյն լինայ։

Կալ զվերադիր անցեալ ամին,
Մեռասան բեր վերայ նորին,
Տաս թիւ ած նահանջ ամին,
Կրկին վերադիր նորոգին։

37 Բայց ինն և տասներեսակ տարին՝
Երկոտասան թիւ աւելին,
Երբ հետ նահանջին հանդիպին,
Մեռասան ած վերայ կրկին։

Աւելեաց վերջին օրն որ գրրի,
Մրտնու տարուն եօթներեսակի.
Լուսին դանի աւուր լինի,
Տարին այնչափ վերադրրի։

46 Եւ թէ նահանջ ամին որ գան,
Վերադիրն լիով լուսնոյ միայն,
Թիւ մի պակսով սաքա լինան,
Զառաջատրն զատկի լրման։

209ա // Հարք և եղբարք ամենեքեան,
Զձեզ աղաչեմ խիստ լալովքան,
Զիս Վարդանըս անտիրական,
Զեր սուրբ աղօթքն առնէք յիշման։

53 Եւ մոլորեալ ամիս զուգես,
Հանապազ երեսուն թիւ կալցես,
Զաւուրք լուսնոյ ի վեր բերես,
Եւ տես թէ որ ամսոյ մէջ ես։

Վերադիր տարոյն ի բաց հանես,
Կիսակ ամսոյն ի յետ ձրգես,
Ապա որքան խոնարհ բերես,
Այնքան լինի՝ որ ամսոյ ես։

61 Ծրնունդ լուսնոյ առնես տարոյն,
Կալ երեսուն թիւ կամ վաթսուն,
Զվերադիրն, երթ զկիսակ ամսոյն,
Մրնայ՝ ծնունդ է այնքան ամսոյն։

Աւուրք լուսնի կալ զօր ամսին,
Զկիսակ ճորին դթիւ վերադրին,
Եւ երեսուն տրչափ լինի
Ձրգեա՝ մրնայ աւուրք լուսնին։

69 Լրումն այսպէս արա լուսնին.
Կալ քառասուն հինգ ընդ ճրմին,
Զվերադիրն երթ ըստ կիսակին,
Մրնա ամսոյն լրման քանին։

30. գրնայ
31. ձրգեայ

Եւ ըզրոպէն այսպէս արա.
Տարեմուտ նաւասարդն որ կայ,
Առաջի օրն է դու համարեա,
Ուր որ լինես՝ անդ դադարեա։

77 Զկէս վերադիրն բեր ի վերայ,
Յետոյ վաթսուն վաթսուն գրնա,
Աստի խոնարհ բոպէ լինայ,
Այտով գրնա՝ լուսնոյ արա։

Կալ ըզրոպէն թէ քան լինայ,
Վաթսուն թուերն է մին մին վերնայ,
Զան այ բերես զրոպէն վերայ,
Կէս վերադիրն զարկ ի վերայ։

85 Յետոյ զամէնն միաւորեա,
Եւ երեսուն երեսուն ղրնա.
Եթէ աստի որչափ մրնայ.
Աւուրք լուսնի այն կու լինայ։

Դարձեալ դու զրոպէն կրրկնեա,
Վաթսուն կ'ելնէ՝ գիշերոյ գնայ,
Մնացեալն հինգ հինգ թիւ ժամ շինեա,
Յերեկոյ տուր՝ ժամ ընծայմայ։

93 Իսկ ի լրումն այսպէս լինի.
Վաթսուն թիւն ի ցերեկի,
Մնացեալ ժամերն տուր գիշերի՝
Գիտնաս յորժամ լրրում առնի։

Թէ վաթսուն թիւ չը ելանի,
Զընծայումն ի գիշեր լինի,
Եւ ըզլրումն տուրնջենի.
Մինչ վաթսուն թիւ այսպէս լինի։

1 Գիտնաս ծրնունդ լրրման լուսնի,
Թէ տիւ իցէ, թէ գիշերի,
Կալ զօր ամսոյն որեիցի,
Հայ հասարակ ի վերայ բերուի,

Աստի երեսուն երեսուն ձրգուի,
Ճնտոյ խոնարհն այսպէս ասվի,
Մի մի տիւ՝ գիշերոյ տրրվի,
Ուր ըսպառի, անդ ընծայի։

209բ // Ծրնընդեսան յառաջ տիւրն դրրվի,
Եւ զլրմանն գիշերն դնի,
Տիւ գիշերոյ յետոյ ասուի,
Ուր ըսպառի, անդ ծնունդ լինի։

76. գրնայ
80. գրնայ
85. միաւորեայ
86. գրնայ
89. կրրկնեայ
91. չինեայ

Խեղճուկ Վարդան Կաֆայեցի.
Եկի առ ոտն սուրբ Նշանի,
Ցիմար մրտաց և եղկելի,
Հայոց տումարս ի յոտք հանի։

17 Ի թուականիս հայոց ազգի
Հազար ինսուն, ամսոյն մարտի,
Տրգէտ անմիտ և փանաքի,
Այսքան խրրատս յառաջ եկի։

Եւ սխալանաց որ աստ գրտվի,
Անմեղադիր ի ձէնչ լիցի,
Ամենեցուն հայրըն բարի
Զձերրն ջընջէ կրտակ չարի։

25 Առաջատր այսպէս գուգի.
Բարեկենդան Սուրբ Սարգըսի,
Կալ երեսուն և վեց թուի,
Զնոր վերադիրն՝ գընայ աստի.

Եւ որ մընայ՝ կալ ի հաշուի,
Քան զյայտնութիւնն ի վեր լինի,
Ի նմին ամիսն օրագիւտի,
Ուր յայտնութիւն՝ մէջրն լինի։

33 Պակասն առջի ամիսն անցնի,
Օրագիւտով առ կիրակի,
Թէ հանդիպի առ կիրակի,
Եւ միւսն անցո առաջատրի։

Զյայտնութենէն օր պատկերի,
Թէ չորրորդ թիւ վերայ լինի,
Ի նմին ամիսն օրագիւտի,
Զորսէն ի վարն յառաջ անցնի։

41 Կալ զյայտնութեան օր պատկերի,
Այլ ի վերայ թիւ չորրորդի,
Հետ գիր տարրոն միաւորի,
Առաջատր օր պատկերի։

Դարձեալ հայոց զատիկն կալցես,
Եօթանասուն յետ կոյս բերցես,
Ուր ըսպառի՝ անդ դադարես,
Կրկին առաջատր զուգես։

49 Պատկեր աւուրն ինչ որ լինի,
Այն է պատկեր լըրման զատկի,
Տասը թիւ ած յառաջատրի,
Այնքան ամսոյն զատիկ լինի։

Գիր բանալեաց այսպէս զուգի.
Կալ զմիջոցն զառաջատրի,

Հինգ թիւ ի բաց գընա աստի.
Այլն տարոյ գիր կու լինի։

57 Բարեկենդան, որ բուն ասի,
Կալցես պատկեր զառաջատրի.
Քսան և մէկ թիւ ի վերայ բերուի.
Ուր ըսպառի՝ այնքան լինի։

Եւ բուն բարեկենդան լինի,
Հանապազ ատուր ձայնն փոխի.
Կանոնագլուխն վերջի ձայնի,
Տարին կարդաւ շըրջադայի։

65 Աւագ լըրումըն սուրբ զատկի,
Այսպէս արա ամէն տարի.
Կալ քառասուն և վեց թուի,
Զնոր վերադիրն դընա աստի։

210ա Եւ որ մընայ՝ կալ ի հաշուի,
Հասարակէն ի վեր լինի,
Ի նմին ամիսն օրագիւտի,
Որ հասարակն է մէջ ամսի։

73 Պակասն առջի ամիսն անցնի,
Օրագիւտով առ կիրակի,
Թէ հանդիպի ի կիրակի
Եւ միւսն անցո՝ զատիկ լինի։

Դիր բանալեաց այսպէս զուգի.
Հասարակէն մինչև զատկի,
Դու երկրորդ թիւն գընա աստի,
Մընացեալն տարոյ գիր կու լինի.

81 Եւ այլն յԱյբէն յառաջ տըրուի.
Մինչև երթայ Քէն ելանի,
Ուր ըսպառի՝ գիրն այն լինի,
Մինչև տարին շուրջանակի։

Դարձեալ զ՚հասարակըն կալցես,
Յետոյ թիւ մի ի վերայ ածես,
Եւ զգիր տարրոն վերայ բերես
Եւ սուրբ զատիկըն գրտանես։

89 Զատկի վերայ ինն թիւ ածէ,
Առաջի ամիսն՝ համբարձում է,
Եւ տասըն համբարձումին ածէ,
Եւ յառաջ տուր՝ պենդակոստ է։

Պենդակոստին տասն և ինն ածէ,
Յառջի ամիսն՝ վարդավառ է,
Ութ թիւ զատկին դարձեալ ածէ,
Չորրորդ ամիսն վարդավառ է։

---

19. փանագի
36. անդառնալի փոխ. առաջատրի

---

65. գընայ
79. գընայ

27 Վարդավառին միջոցն որ է.
ՅԱյբէն ի Գիմն՝ եօթն շաբաթ է,
Դայլէն ի Ժէն՝ վեց շաբաթ է,
Յինոյն ի Զայն՝ հինգ շաբաթ է.

Ղատէն ի յՈն՝ չորս շաբաթ է,
Ջայլէն ի Տիւն՝ եռ շաբաթ է,
Րէյն ի Փիւրն՝ երկ շաբաթ է
Տարոյ գլրով կարգաւ պատմէ։

3 Կալ ի ղատկէն մինչև ուր ես,
Ութ ութ կամ քառասունք ձրգես.
Սկիզբն առաջի ձայնէն դրնես,
Ուր դադարի՝ ստոյդ գրտանես։

Երբ Թուականն կոճատ ֆարտ ես՝
Աւագանն յաշակողման ես,
Յորժամ չուխտակ և դարին ես՝
Զախակողման առաջի ձայն ես։

13 Յարութեան օրն զատիկ ասես,
Առաջի ձայնէն ըսկըսես,
Համբարձման օրն՝ վերջին ձայն ես,
Ուրբաթ կրկին հրանեալ ես։

Եղիական կիրակին ես,
Եւ նոյն դարձեալ առաջի ձայն ես,
Մինչև վարդավառ ժամանես,
Աւուր ձայնն՝ նա երկրորդ ես։

21 Եւ այլն այսպէս կարգաւ պատմես,
Թէ քահանայ իմաստուն ես,
Եւ այլ յեղբարց ուսուցանես,
Զարքայութիւնն ժառանգես։

Անփոփոխ օրերս այսպէս զուգի.
Եւ հանապազ՝ ամէն տարի
Ո՛չ աւելնայ, ո՛չ պակասի
Մինչև ի վերջք կատարածի։

210բ // Յայտնութենէն յառաջեկի
Մինչև ի լուցման տէրընտասի
Երեսուն և ինն օրն կատարի.
Զամէնն այսպէս կարգաւ պատմի։

Անտի մինչև հասարակի
Երեսուն և չորս օրն հասանի։
Հետ ամենիք Աստուածածնի՝
Տաս և եօթն օր գայ հասանի։

1. Ձիշտ կլինէի՝ Ոն և ոչ յՈն
2. Ցէէն փոխ. Րէէն
3. Ձիշտ կլինէի Քէն և ոչ Փիւրն

32 Անտի մինչև անկաստեղի,
Ութերորդ օր սորա լինի։
Յետոյ զկնի յելաստեղի՝
Քառասուն օր սա կատարի։

Ցամառնամուտ յորժամ լինի,
Քսան և վեց օր գայ կանգնի,
Ի սահմանած անփոխելի
Մինչ ի գալուստըն Քրիստոսի։

45 Դարձյալ անտի աստուածածնի
Յիսուն և եօթն օր հասանի,
Ուր հանդիպի օրագիտի,
Եւ պատկեր օրն ինչ որ լինի։

Անտի մինչև ի սուրբ խաչի
Երեսուն օր կու հասանի,
Յետոյ մինչև աշնանմրտի՝
Եւ սա չորրորդ օրիկ ունի։

57 Եւ պապանձումն Զաքարիայի,
Իններորդ օր գայ հասանի,
Եւ յղութիւն Եղիսաբեթի,
Երկոտասան աւուրք թուի։

Անտի մինչև յիսնակմրտի,
Բարեկենդան որ կու լինի,
Մինչև որ գայ աստ հասանի
Եւ քառասուն օր կատարի։

61 Անտի մինչև սուրբ Յակոբի,
Քսան երկու օր կու լինի,
Կըրկին բարեկենդան կոչի,
Օրագիտով կու գրտանի։

Զաստուածածնին և սուրբ խաչին,
Զի յիսնակմրտին, սուրբ Յակոբին,
Ի յետ դարձո զչորեքշաբթին,
Զհինգշաբթին տուր ի կիրակին։

69 Սուրբ Յակոբէն ձմեռնամուտի,
Ութերորդ օր մէջըն լինի։
Անտի մինչև ծընունդ Հոռմի,
Եօթներորդ օր գայ հասանի։

Սընընդեան բարեկենդանի,
Հայոց չորրորդ աւուր լինի,
Յետոյ տարեմուտ յունվարի,
Երրորդ աւուր գայ հասանի։

79 Անտի ի ծնունդըն Քրիստոսի,
Հինգ օր երթայ՝ տարին թըմնի.
Եղանակիս ով հանդիպի,
Զի մեղադրէք ծոյլ Վարդանի։

Ընկալարուք սիրողք բանի,
Եւ քննեցէք ըստ պատշաճի,
Քանզի պարզ է և սա յայտնի,
Ի զարմացումն անտեղեակի։

25 Եւ ծաղրական հրմոագունի,
Խոհեմագույն իմաստ բանի,
Վարժեալք սիրով յայսմ արհեստի,
Զմեզ յիշեցէք սիրով սրտի։

211ա // Տանուտէր տարոյ այսպէս շինէ.
Եւ թուականն հայուն քրոնէ,
Հինգերորդ թիւն ի բաց հանէ,
Եւ զայլն երկոտասան ձրգէ։

30 Եւ զկրնի խոնարհն որ է,
Խոյէն յառաջ մէկ մէկ բաշխէ,
Ուր ըսպառի, անդ դադարէ,
Այն տանուտէր տարոյն կոչէ։

Այլ տանուտէր այսպէս զուգէ.
Թրէն երկոտասան ձրգէ,
Զայլրն կարճէն յառաջ բաշխէ,
Ուր դադարի՝ տարոյն այն է։

1 Տանուտերանց անուանք այս է.
Կենդանակերպք տարոյն որ է,
Նախ խոյ, և ցուլ, եկատոր է,
Եւ խեցգետինքն նահանջ է,

Առիւծ, և կոյս և կշռիւ է,
Կարիճ կրկին նահանջ բերէ,
Աղեղնաւոր, այծեղջիւր է,
Ջրհոսն, և ձուկքն նահանջ է։

5 Հասարակի օրէն կալցես,
Ու համարեա մինչև ուր ես,
Եթէ որչափ թիւ հասանես,
Եւ երկրորդ թիւն՝ ի յետ ձրգես,

Կենդանակերպից զայլն տացես,
Երեսնական՝ խոյէն սկրսես,
Որքաս հասանես ուր դադարես,
Արեն այն կենդանւոյն գրտցես։

17 Լուսնոյ կենդանակերպ զուգես,
Որչափ զաւուրք լուսնոյ կալցես,
Երկոտասանպատիկ առնես,
Տեսանես՝ թէ քանի թիւ ես,

Դարձեալ արևրն տեսանես,
Թէ որում կենդանակերպի ես,
Այն կենդանւոյն պակասքն լրացես,
Յետոյ անտի յառաջ տացես։

10. համարեալ

25 Կրրկին երեսնական բաշխես.
Ուր ըսպառի՝ անդ գրտանես.
Հայր մեղայիւ մի զիս յիշես.
Զարքայութիւնն դու ժառանգես։

Արեգական գօտիք զուգես,
Դարձեալ հասարակէն կալցես.
Եւ համարեա յորչափ թիւ ես,
Եւ երկրորդ թիւն ի յետ ձրգես.

33 Ցայլրն տասներ գօտոց տացես,
Եւ ըսկրսեալն հրատն դրնես,
Յետոյ անտի յառաջ բաշխես,
Ուր ըսպառի՝ այն գօտոյ ես։

Դարձեալ լուսնոյ գօտիք զուգես,
Կրրկին զաւուրք լուսնոյ կալցես.
Երկոտասանապատ շրջես,
Եւ տես քանի թիւ հասանես։

41 Արեգական գօտի գրտցես,
Անտի յառաջ տասներ բաշխես,
Եւ այն գօտոյն պակասն լրացես,
Ուր ըսպառի և անդ գրտցես։

Եւ այլ գօտիք են այսոքիկ.
Հրատն, արեգակն, լուսաբերիկ,
Փայլածուն, լուսին, երևակիկ,
Եւ լուսընթագն եօթն գօտիկք։

211բ // Եւ այլ գօտիք այսպէս զուգէ.
Պարսից լեզուով զոհալ կոչէ,
Եւ մուշթարին, մարեխ, շամս է,
Զոհրա, օտարիդ, զամար է։

Եռևակքն որ՝ զոհալին,
Ընդ լուսընթագն որ՝ մուշթարին,
Նթէ հրատն որ՝ մարեխին,
Եւ արեգակն, որ է շամսին։

57 Եւ լուսաբերն՝ որ զոհրային,
Ընդ փայլածուն՝ օտարիտին,
Դարձեալ լուսինն՝ ընդ զամարին՝
Պարսկին հայոցս թարգմանեցին։

Արեգական աստիճանի
Եւ հանապազ այսպէս զուգի.
Թէ որչափ բարձրացեալ լինի
Եւ խոնարհեալ կամ որ գրրի։

65 Այծեղջերէն մինչև ուր ես,
Եւ համարեա քանի թիւ ես,
Երկու հարիւրապատ շրջես,
Ու տես թէ որչափ թուին ես։

Հազարական բաշխես գերի,
ՅԱյբէն երթայ Քէն աւարտի,
Եթէ որ գիրն երթայ դադրի,
Արեգական գիրն այն լինի։

73 Եւ որչափ թիւ ի վեր ելնի,
Արև այնչափ աստիճանի,
Երեսուն և վեց հազար ելնի,
Քէէն գայ յԱյբրն խոնարհի։

Թէ արեգակն որում կէտի,
Յարարածոց ի սկզբանի,
Մինչև ի հայ թուականի,
Հանապազ խրատն այսպէս առնի։

81 Կայ հինգ հազար ինն հարիւրի,
Եօթանասուն և վեց թուի,
Հայ թուականն ի վերայ բերուի,
Յետոյ զամէնն միատրի։

Եւ ի թուէն այսպես ձրգուի,
Վաթսուն և հինգ եռ հարիւրի,
Վաթսուն և հինգ եռ հարիւրի,
Մինչև աստի գայ խոնարհի։

89 Դարձեալ խոնարհն որչափ լինի,
Յետոյ այսպէս կու բաժանի,
Նրսուն ու մէկ ամ, երրորդ ժամի,
Եւ կիտերոցն այսպէս բաշխի.

Ըսկիզբն յերկնամիջակ կիտի,
Եւ տես որ կէտրն կու սպառի՝
Արեգական կէտն այն լինի,
Մինչև վաթսուն և չորս տարի։

97 Երկնամիջակ գարնանային,
Ժամադիտակ ամառնային,
Եթերական աշնանային,
Կէտ սուզական ձրմեռնային,

Յերկնամիջակ կէտն արևի,
Բարեխառնութիւն երկրի լինի,
Մինչև վաթսուն և չորս տարի.
Յետոյ և այլ կիտի շրջի։

5 Յարևն ժամադիտակ կիտի,
Եւ սաստիկ շերմութիւն լինի,
212ա // Եւ մանաւանդ կողմրն հիւսիսի,
Վաթսուն և չորս ամ այսպիսի։

Վայրի ծովու նուազութիւն,
Եւ յաղբերաց յոլովութիւն,

Հիւսիսոյ կողմանց ծովք պակտութիւն,
Յովկիանոս բռատութիւն։

13 Ջերմութենէն դաշտք դատարկին,
Լերինք բնականք շինութիւնք լինին,
Յետոյ մինչև այգիք տընկին,
Եւ պրտղաբեր յատոքանին։

Յեթերական կիտին շրջին,
Բարեխառնութիւն յերկրի լինին,
Մինչև վաթսուն և չորս տարին
Տեսանես որպէս կու լինին։

21 Իսկ անդր յոդք ցրրտաշունչք լինին,
Լերինք անպտուղ բընափն,
Եւ աղբերունքրն նուազին,
Հիւսիսային ծովքրն բռատին։

Հարաւին կողմք տապախառնին,
Յովկիանոսքրն նուազին,
Հասեալ կէտ սուզականին,
Սակաւ սակաւ բարեխառնին։

29 Կատարումն լուսնի այսպէս զուգի.
Յարարածէն ի սկզբանի,
Կայ զամս մինչև հայ թուականի,
Հինգ հազար և ինրն հարիւրի,

Եօթանասուն և վեց թուի,
Զհայ թուականրն ի վերայ բերուի,
Յետոյ ինն և տասներ ձրգուի,
Մինչև որ գայ խոնարհ կանգնի։

37 Որչափ ինն և տասներ լինի,
Այնքան մասունք կու ժողովի,
Մասունքրն երեսնական զատուի,
Մէկ ժամն երսուն մաս կատարի։

Երկոտասան ժամն թրմնի,
Եւ լրման օրրն կատարի,
Յայնժամ լուսինրն կատարի,
Աստուածաբանքն անքննելի։

45 Այլ կատարում այսպէս զուգի.
ՅԱդամայ մինչև հայ թուականի,
Կայ հինգ հազար եօթն հարիւրի,
Յիսուն և մէկ յամ աւելի։

Զհայ թուականն ի վերայ բերուի,
Եւ դարձեալ տասն և ինններ ձրգուի.
Եւ այլն որպէս յարարածի
Աստուած և անիմանալի։

---

36. Ն 3866 ձեռագրի տեքստն այստեղ բնդ-հատվում է:

53 Արևն որչափ հոլով երթայ,
Կամ քանի ասպարէզ ընթանայ.
Կամ զժամ աւուրն որչափ լինայ.
Եւ երեսունապատ շրջեալ։

Եւ տես որքան թիւ կու լինայ,
Այնչափ հոլովում կու երթայ,
Հոլովն հինգ հարիւրապատկեալ,
Այնչափ ասպարէզ ընթանայ։

61 Եւ աստնրեօթ դեկտեմբերի,
Քաղոցի ինն ձրմեռնամուտի,
Տրէթի մինն ի գիշերի,
Յարևն՝ յայծեղջիւր մըտանի։

Եւ լուսընթացքն է իւր գոտի,
Տիւն ինններորդ ժամ կու լինի,
212բ // Տես հոլովումն որչափ լինի
Երկու հարիւր եօթանասնի։

69 Եւ ասպարէզ արեգակի,
Երեքտասան և կէս բիւրի,
Եւ յարևու գիրն յԱյք լինի,
Յառաջ երթայ հինգ հինգ գրրի.

Եւ բարձրացեալ արեգակի
Երկու հարիւր աստիճանի,
Օրն երկհարիւր վրրան դրուի՝
Երեսուն ու վեց հազարն ելնի։

77 Արաբացւոց ամիսք է սա՝
Նիսան, իար, ագաղթիրայ,
Այլ ագաղտաս, եղթամուզայ,
Եւ եղասմար, ագղաթ ամսեայ։

Բայց ագատղաթ, եղգոն երթայ,
Արատն ամիս կաղանդիս գայ,
Դարձեալ ամիս եղգոդ որ կայ,
Փարքր աւելեաց տարուն շուրջ գայ։

83 Կալ զթուականն, ազգին Հայկայ
Եւ երկրորդ թիւ բեր ի վերայ,
Արաբացւոց ի հետ սորա,
Մակեդոնացւոց թուական ասա։

Ամիսք ազգաց է մակեդոն.
Գեմեղիոն, եղբաբիոն,

Մոնոքիոն, թերգելիոն.
Սկերփիրոն. հոկտոմբիոն.

93 Մետակդիոն, բեդրիմիոն.
Եպերմիոն. մակտրիոն.
Այլ թեստիրիոն և պիսիդոն
Եւ աւելիք սոցա ամսոյն։

Դարձեալ տոմար է ասորոց.
Ի հետ վարուի հռոմայեցւոց.
Նոյեմբերի մէկէն ամսոց
Ըսկիզբն առնէ տարէմբառոց։

1 Անուանք ամսոց այսպէս ասա.
Թըշրին ղրգիմ, թըշրին հրրայ.
Քանուն ղրդիմ, քանուն հրրայ.
Միջաձրմռան ասա անուանեա։

Շաբաթ ամիսն որպէս Հռոմայ.
Քըսան և ութ թուով երթայ,
Նահանջ ամին մին աւելնայ,
Զայլ ամսրններն սոքնպէս գրնա։

9 Ադար ամսոյ քսանն որ կայ.
Գարնանամուտ հաւասարնայ,
Եւ այլ նիսան, իարն երթայ,
Զկնի ամառնամուտ կու գայ։

Ի տասն և ութն հրգիրանայ,
Եւ արեգակն աստ բարձրանայ,
Թամուզ, ապամ, իլուլն երթայ,
Յետոյ սոցա նոր տարի գայ։

17 Թըշրին ղրդիմ կրրկնակ չունի,
Այլ երեք թիւ թըշրին հրայի,
Քանուն ղրդիմ կրրկնակ հրնգի,
Եւ մէկ կրրկնակ քանուն հրրայի.

Շրաթ կրրկնակ չորս թիւ ունի,
Դարձեալ չորրորդ ադար ամսի,
Զրկա նիսան, երկ՝ իարի,
Հինգ՝ հրգիրան, չկա թամուզի,

25 Ապամ երեք. վեց՝ իլուլի,
Կատարեցաւ կրրկնակ ամսի։
212ա // Այլ և կիսակ թըշրի ղրմի,
Մին թիւ ասէ եղբայր բացի,

56. շրջեալ
59. հարիւրապատկեալ
77. սայ
80. եղասմատ փոխ. եղասմար
86—88. Սխալ է. Բանի որ 2 թիվը մակերդոնացվոց է և 1-ը արաբացվոց։
87. սորայ
88. սասայ

91. Մոնոգիոն
93. բիբրիմիոն
1. սասայ
4. անուանեալ
15. Ադամ փոխ. ապամ
17. ղրթիմ
25. Ապամ փոխ. Ապս

Մեկ և կէս թշրին հրայի,
Եւ երեք թիւ քանուն ղրդմի,
Չորս թիւ ու կէս քանուն հրայի,
Եւ այլ վեց թիւ շրբաթ ամսի.

33 [Չ]որրորդ ու կէս է ադարի,
Նիսան ամսոյն է վեց թրփ,
Դարձեալ վեց ու կէս իարի,
Եւ ութ[ըն] թիւ հրգիրանի։

[Ե]ւ ութ ու կէս է թամուզի,
Տասըն լրման թիւ ապամի,
Իլուլ մետասան ու կէսի,
Եղբայր կիսակն աստ կատարի։

29. Երկու և կէս փոխ. Մէկ և կէս

41 Սոթանասուն և վեց թուոց
Բեր ի վերայ խառնէ հետրոց,
Ուտական լինայ մեծ Ասորոց.

. . . . . .

[Ե]ւ զվերադիրն կալ Հոռոմոց,
Երեք թիւ առ տոցին միջոց,
Քրսան և ութն կամ բեր վերնոց,
Վերադիր է սա Ասորոց։

49 [Ե]ւ կալ զեօթներեակ Հոռոմոց,
Մին թիւ յետ առ Ասորոց,
Սօթներեակ է բոլոր տարոց,
Եւ այլքն՝ որպէս Հոռոմայեցւոց։

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № № 3504 և 3860)

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
(Պատմական գիտությունների
թեկնածու, ՀՍՍՀ ԳԱ)

ՀԱՂԱՐԾԻՆԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

1. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴՌԱՆ ԵՐՋԱՆԱԿԻ ՎՐԱ.

.....ԱՑ, ԻՆ.... ՄԻԱԲԱՆՔՍ ՋՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՏԷՐ
ՍԱՐԳԻՍ ԸՍՏ
ԿԱՐԻ ՄԵՐՈՒՍ ՍՊԱՍԱՒՈՐԷՑԱՔ [ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ] ԵՒ ՄԵԾԱՒ ԱՇԽԱՏ-
ՈՒԹԵԱՄԲ ՇԻՆ[ԵՑԱՔ ԱՍՏՈՒԱԾԱՇԵՆ ՋՏՐԱՊԵ]ՋՆ ԵՒ ԱՅԼ [ԲԱՋՈ]-
ՒՄ ԱՐԴԻՒՆՍ ԵՒ
ՍՈՒՐԲ ԵՂԲԱՐՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՁԿԻՐԱԿԷԻՑՆ ԱՒԱԳ ԽՈՐԱՆՆ Ի ՄԵՐ
ԱՆՈՒՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ ՋԶՈՒՍՏՈՍ ԱՆԽԱՓԱՆ ՄԻՆՋ Ի ԿԱՏԱՐԱԾ ԱՇ-
ԽԱՐՀԻ: ԿԱՏԱՐԻՋՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ...:

2. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴՌԱՆ ԵՐՋԱՆԱԿԻ ՎԵՐԻՆ ԱՆԿԱՑՈՒՆՆԵՐՈՒՄ.

Ի ՁԼ ԹՎ. : ՇԻ

3. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ, ԴՌԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԻՆ, ԿԱԼՈՒՆԱԿԻ ՆԵՐՔԵՎՈՒՄ.

ԵՍ ՅՈՎԱՆԷՍ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐԱ-
ԿԵՑԻ ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆ-
ԻՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ Բ ՊԱՏԱՐ-
ԱԳ Ի ՏԱՒՆԻ ՅՈՎՀԱՆՈՒ ԷՏՈՒՆ ԻՆՋ:

4. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ՆԱԽՈՐԴԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄՈՒՄ.

ԿԱՄԱՒ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ՍԱՀԱԿ ՋԻ-
Մ ՀՈԳՈ ԱՐԴԻՒՆՍ ԵՏՈՒ Ի ՇԻՆՈՒԹԻՒՆ
ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍՔ ՎԱՐԴԱՊԵՏՔ ՍԱՐԳԱՒԱԳՔ ԵՒ ՄԻԱԲԱՆ-

* Տարոնագիտական ժողովածուի 1954 թվականի № IX-ից։

ՔՍ Բ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՀՆԻ ՍԱՀԱԿԱ ՀԱՅՐԱ-
ՊԵՏԻՆ ԺԱՄՆ ԻՄ ԾՆՈՂԱՑՆ ԵՒ ՅԵՏ Ի ՄԱՀՈՒ ԻՆՔ ԱՌՆԵՆ
ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՈՀ-
ՆԻՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ:

5. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ՆԱԽՈՐԴԻՆ ՎԵՐԵՎ.

ՅՈՒՍՈՎՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱ[ՍԱՆ] ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՒՐ ԽՈՐՈՒՇԱՀ ՄԻ-
ԱԲԱՆԵՑԱ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՍ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՍ: ՎԱՐԴԱՊԵՏՔՍ
ԵՒ ՄԻԱԲ-
ԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԱՔ Բ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՀՆԻ ՅՈՎՀԱՆՆԻ ԵՒ
[ԱԹ]ԱՆԱԳԻՆԷ Ա ՀԱՍ[ԱՆԱ Ա ԽՈՐԻ]ՇԱՀԻ ԿԱՏԱՐԻՉՔ ԱՒՈՀՆԻՆ
ՅԱՍՏՈՒԾՈՅ:

6. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ՆԱԽՈՐԴԻՆ ՎԵՐԵՎ.

[ԿԱՄԱՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՔ] ՍԱՐԳԻՍ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԵՂԲԱՐՔ ՄԻԱԲԱՆ-
ԵՑԱՔ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐՍ ՏԷՐ ՏԻՐԱՑՈՒ ՄԵԾԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ
ԵՒ ՄԻԱԲԱՆ-
ՔՍ [Բ ՊԱՏԱՐԱԳ] ՍԱՀՄԱՆԵՑԱՔ Ի ՏԱՀՆԻ ԷՓԷՍՈՍԻ ՍՈՒՐԲ Ժ-
[ՈՂՈՎՈՅՆ Ա] ՍԱՐԳՍԻ Ա ԳՐԻԳՈՐԻ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒ-
[ՐՇՆԵԱԼ ԵՂԻ]ՑԻՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ:

7. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՂՐԻՆ, ԱՐՏԱՔՈՒՍՏ.

ՍՈՒՐՈՎՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԻԱԲԱՆԵՑ.....
.ԻԱՆԷ: ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՏԷՐ.....[ՊԱ]
ՏԱՐԱԳ ՋՏԱՀՆ[Ի] ԳԱԼՍ[ՏԵԱՆ].....[Կ]
ԵՆԴԱՆԻ ԵՆ ԻՒՐԵԱՆՑ ԾՆՈՂ[ԱՑՆ].....
ՆԱՑԱՆ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է:

8. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՂՐԻՆ.

ԵՍ ԹԻՓԼԻՋԵՑԻ ՋԻԹԱՂԻ ՈՐԴՈՅ ԹԱՂՈՅ ՈՐԴԻ ՄԱՀՏԵՍԻ ՍՈՒԼ-
ԽԱՆՍ ԵՒ ԵՂԲԱՅՆ ԻՄ ՋԱԼՆ ԵՒ ՄԵՐ ՈՐԴԻՔՆ ՍՏԵՓԱՆՈՍՆ ԵՒ ԹԱՂԻՆ
ԵՒ ՓԱՇՐԱՊԱՏԵՑԻ ԽՕՋԱՅ ԳՈՒԼԻՆ ԵՒ ԻՒՐ ՈՐԴԻՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵԾԱՒ
ՅՈՒՍՈՎ ՈՐ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՔ ՁԽԱՂԱՐԾՈՒՈՅ ՁԵԿԵՂԵ-
ՑԻՍՆ ՁՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ԵՒ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻՆ ՅԻՇԱՏԱԿ
ՄԵՋ ԵՒ ՀԱՄՕ-
ՐԷՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ ՄԵՐՈՑ: Ի ԹՎԻՆ ՀԱՅՈՑ: ՌՃԼ:

9. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՄԲԵԹԻ ԹՄԲՈՒԿԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԱՒՐ.

ԳՐԻԳՈՐՈ Է ԽԱՋՍ

10. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ. ՆԵՐՔՈՒՍՏ.

ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ԲԵԿՍ ՈՐԴԻ ԱԾՈՏ[Ո] ՅԱՋԳԷ ՀԱՐԲԱՆՑ
ԵՒ ԱՄՈՒՍԻՆ [ԻՄ] ԲՈՐՈՒՆԱ ԵՒ ԵՂԲԱՅՐ ԻՄ ՍՄԲԱՏ ՄԻԱԲԱՆԵՑ-
ԱՔ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ ՈՐՊԷՍ ԵՒ ՀԱՅՐՆ ԻՄ ԵՒ ՏՈՒԱՔ ԱՌԴԻՒՆՍ
ՇԻՆՈՒԹԵԱՆ:

11. ՍԵՂԱՆԱՏԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴՌԱՆ ԵՐՋԱՆԱԿԻ ՎՐԱ.

Ի ԹՎԻՍ ՈՂԷ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՅՈՎԱՆՆԻՍԻ
ՎԱՐԴԱՊԵՏԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇԷՆ ՏԱՆՍ ԵՒ ԵՍ ԿՈՒՏԱ[ԿԻՋ
ԵՒ] ԱՌ-
Ա[ՐՈ]Ղ ՍՆՈՒՆԴ ՍՐԲՈՅՍ ԷՏՈՒ ԱՒԳՆՈՒԹԻՒՆ ՏՐԱՊԻՋԻՍ
ԴԵԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՋՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԽՈՍՏԱՑԱՆ Ի
ՏԱՒՆԻ ՍՈՒՐԲ ԲԱՐՍՂԻ ՏԱՒՆԻՆ ՊԱՏԱՐԱԳՆ ԻՆՋ ՄԱՏՈՒՑԱՆԵԼ
[ԱՆԽԱՓԱՆ]
ՈՎ ԽԱՓԱՆԷ ԻՄ ՄԵՂԱՑՍ
ՏԷՐ Է:

12. ԳԱՎԹԻ ԱՐԵՄՏՅԱՆ ԴՌԱՆ ԵՐՋԱՆԱԿԻ ՎՐԱ, ՎԵՐԵԿԻ ՄԱՍՈՒՄ.

ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՅՍ ՄԵՐ ԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԻ Է
ԵՒ ԱՐՋԱՆ ՄԵՏՆՋԵՆԱՒՈՐ ՈՐԴԵԱՑ ՄԵԾԻՆ ՍԱՐԳՍԻ
ՅԱՋԳԷ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՆ ԻՒԱՆԷԻ ԵՒ ՋԱԲԱՐԷԻ ՅՈՐԺԱՄ
ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԷՀԱՄ ՅԱՐԱՐԱԾՍ ԵՒ ԵՏ Ն.ԱՐԱՌԻՆ
ՏԻՐԵԼ ՍԵՓԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐՈՑ ԵՏ
Ի ՋԵՌՍ ՄԵՐ ՅԱՌԱՋ ԱՆԱՌԻԿ ԴՂԵԱԿՆ ԱՆԲԵՌԴ ԵՒ
ՋԹԱԳԱՒՈՐԱՆԻՍՏ ՔԱՂԱՔՆ ԱՆԻ ԵՒ ԱՊԱ ՋԱՄՈՒՌՆ
ԲՋՆԻ ՋՄԱՐԱՆՂ .Ջ. ԵՒ ԳԱՒԱՋԱՆՔ Ի ԹԱՒՐԷԺ
ՋԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔ ՄԻՆՋԵՒ ԽԼԱԹ.....[ԵՒ ՋԵ]ՐՈՒԻ-
ԱՆ ՋՊԱՐՏԱՒ ՄԻՆՋԵՒ Ի ԲԵԼՈՒԿԱՆ ԵՒ ՋԱՅԼ ԲԱՋՈՒՄՍ
ԻՒՐԵԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՒԻՆ ՋՈՐ ԱՒԵԼՈՐԴ ՀԱՄԱՐԵՑԱՔ ՅԻՇԱՏԱԿԵԼ
ԱՅԼ ԵՒ ԱՆԲԱՐԿԱՆԱԼԻՆ ԱՍՏՈՒԱԾ ԱՐԵԱՑ ՋԹԱԳ ՊԱՐԾԱՆԱՑ ԳԼ-
ԽՈ ԻՄՈ ՋՋԱՔԱՐԻԱ ԵՒ ԿՈՋԵԱՑ ԱՌ ԻՆՔՆ ՅՈՐՈ ՋԵՌՆ
ԵՂԵՒ ԱՐԻՈՒԹԻՒՆՍ ԵՒ ԵՍ ՇԻՆԵՑԻ Ի ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՎԱՆՔՍ
ՀԱՂԱՐԾԻՆ ԺԱՄԱՏՈՒՆ ՎԻՄԱՐԴԵԱՆ ԿԱՄԱՐԱԿԱՊ Ի ԴՐԱՆ
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՒ Ա ԱՅԳԻ ՅԵՐԵՒԱՆ Է ՈՐ ՎԱՆՆ ՅԻՇԱ-
ՏԱԿԻ ԵՂԲԱՒՐ ԻՄՈ ԵՒ ՊԱՐՏԻՆ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՐԱ ՋԱՒԱԳ
ԽՈՐԱՆԻՆ ՊԱՏԱՐԱԳՆ ՋԱՔԱՐԷԻ ՄԱՏՈՒՑԱՆԵԼ ԱՆԽԱ-
ՓԱՆ ԿԱՏԱՐԻՋՔ ԳՐՈՅՍ ԱՒՐՀՆԵԱԼ ԼԻՑԻՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ:

13. ԳԱՎԹԻ ԱՐԵՄՏՅԱՆ ԴՌԱՆ ԵՐՋԱՆԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՇԵՐՏԻ ՎՐԱ.

ԿԱՄԱՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ԳԱԳՍ ԵՒ ԱԾՈՏ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍՈՒՐԲ
ԳՐԻԳՈՐԻՍ ԵՒ ՋՄԵՐ ՀՈԳՈ ՊԱՀՈՒՍՏՆ ՅԱՍՏՈՒԱԾԱԾ-
ՆԻՍ ՇԻՆՈՒԹԻՒՆՍ ՏԻԱՔ ՈՐ ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ
ԽՈՍՏԱՑԱՆ ՄԵՋ ՊԱՏԱՐԱԳ ՋԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ Ի
ՏԱՒՆԻ ԵՐԵՄԻԱՒ ՄԱՐԳԱՐԷԻՆ ՈՐՋԱՓ ԵՍ ԿԵՆԴԱՆԻ ԵՍ

14. ԳԱՎԹԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԴՌԱՆ ԵՐՋԱՆԱԿԻ ԳՈԳԱՎՈՐ ԵՆՐՏԻ ՎՐԱ, ՆԵՐՔԵՎԻՑ.

ԵՍ ՍԱՐԿԱՒԱԳ ՋԻՍ ՀՈԳՈ ԱՐԴԻՒՆՍ Ի ՍՈՒՐԲ ԳՈՒԳՈՐՍ
ԷՏՈՒ Ի ՀԱՅՈՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ —Ա— ՊԱՏԱՐԱԳ ԷՏՈՒՆ ԻՆՁ
Ի ՏԱՒՆԻՆ ԿԻՒՐԴԻ ՈՎ ՁԱՌՆԷ ԴԱՏԻ ՅԱՍՏՈՒԵՑՈՅ։

15. ՆՈՒՅՆ ՏԵՂ. ՆԱԽՈՐԴԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ, ԿԻՑ.

Ի ՏԱՒՆԻՆ ԻԳՆԱՏԻՈՍԻ ։Ա։ ԺԱՄ ԱՌՆԵՆ ԵԵՐԱՆԵԱՀԻ
ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ՅԱՍՏՈՒԵՑՈՅ։

16. ՆՈՒՅՆ ՏԵՂ, ՆԱԽՈՐԴԻՑ ՎԵՐԵՎ.

Ի ՏԱՒՆԻ ՔԱՌԱՄՆԻՑ ՏԱՐԻՆ ։Ա։ ՊԱՏԱՐԱԳ ԷՏՈՒՆ՝
ՄԽԻԹԱՐԱ ԵՒ ՍԻՍԱՒՆ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱՆՔ ԱՆ-
ԽԱՓԱՆ։

17. ԳԱՎԹԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԴՌԱՆ ԵՐՋԱՆԱԿԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄԻ ԳՈԳԱՎՈՐ ԵԵՐՏԻ ՎՐԱ.

ԿԻՐԱԿԷԻՆ ՁԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԱՐԴ ՈՎ ՁԱՅԳԻՆ ԱՍՏԻ
ՀԱՆԷ ԿԱՄ ՁՄԵՐ ԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ ՄԵՐ ՄԵՂԱՑՍ
ՏԷՐ Է ԱՌԱՋԻ ԱՍՏՈՒԵՑՈՅ։

18. ՆՈՒՅՆ ՏԵՂ, ՆԱԽՈՐԴԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ.

ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԵՑՈՅ ԵՍ ՓԱՏԼ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՍԻՄԱ ՏՈՒԱՋ
ՁՄԵՐ ՓԵՐՈՆՑ ԱՅԳԻՆ Ի ՍՈՒՐԲ ԳՈՒԳՈՐՍ ԱՌԱՋՆՈՐ-
Դ ՏԷՐ ՅՈՎԱՆԷՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ ՄԵՋ ԺԱՄ Ջ. ՆԻՍ
ՍԱՀԱԿԱ ՏԱՒՆԻՆ։

19. ՆՈՒՅՆ ԴՌԱՆ ԲԱՐԱՎՈՐԻ ՎՐԱ.

ՍԻՐՈՎՆ ԱՍՏՈՒԵՑՈՅ ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՒՐ ՏԻԿԻՆ
ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍՈՒՐԲ ԳՈՒԳՈՐՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ, ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ
ԵՒ ՄԻԱԲԱՆՔ ՊԱՏԱՐԱԳԵԼ —ՁԱ— ԱԲՐԱՀԱՄԱ ԵՒ —Ա— ՏԻԿՆՈՋ ՏԱՒՆԻ
ՈՍԿԵԲԵՐԱՆԱՅ ՈՎ ՁԱՌՆԷ ԻՄ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է։

20. ՆՈՒՅՆ ԴՌԱՆ ԺԱԿԱՏԱԿԱԼ ՔԱՐԻ (ՏԻՄՊԱՆԻ) ՎՐԱ.

Ի ԹՈՒԻՍ ։ՈԵԵ։ Ի ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՁԱՔԱՐԷԻ
ԵՒ ԻՒՆԷԻ ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԵՍ
ԽԱԼԹ ՈՐԴԻ ՍՄՊԱՏԱՅ ԻՄ ԳԵՂՆ ՔԱՆԱՔԵՌ ՍԿԱՆԴԱ-
ՌԱՆՑ ՀՈՂՆ ԳՆԵՑԻ ԵՒ Ի ՀԱՂԱՐԵՒՆՍ ԷՏՈՒ ՎԱՄՆ ԻՄ ՀՈԳ-
ՈՅՍ ԵՒ ՎԱՄՆ ՅԵՐԿԱՐՈՒԹԵԱՆ ԿԵՆԱՑ ՇԱՀՆԵԱՀԻ ԵՒ ԱՒԱԳԻՆ
ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՁԵԱՌՋԱՐԴԱՐԻՆ ԵՒ ՁԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍ-
ՏԵԱՆՆ ԺԱՄՆ ԻՆՁ ԷՏՈՒՆ ՁԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԵԱՑՍ ՈՎ
ՁԱՅԳԻՆ ԱՍՏԻՑ ՀԱՆԷ ԿԱՄ ՁԻՍ ԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ ԻՄ ՄԵ-
ՂԱՑՍ ՏԷՐ Է ԵՒ ՅՈՒԴԱՒ ՄԱՄՆԱԿԻՑ ԵՂԻՑԻ։

21. ԳԱՎԹԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԴՌԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ, ՇՐՋԱՆԱԿԻՆ ԿԻՑ.

ԵՍ ՋՈՋԱՅՍ ՋԻՄ ՀՈԳՈՅ ԱՌԴԻՒՆՍ Ի ԳԱՒԹՍ ՏՎԻ ԵՒ ՄԻԱԲԱՆ-
ՔՍ ԷՏՈՒՆ ԻՆՁ ՋԱՏԿԻՆ Բ ԺԱՄ ՈՐ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ՏԵԱՌՆԷ:

22. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ.

ԵՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ :Ա: ՊԱՏԱՐԱԳ ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ՊԱՒՂՈՍՈ Ի
ՏԱՒՆԻ ՊԱՒՂՈՍԻ ԵՒ ՊԵՏՐՈՍԻ ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ Ի ՏԵԱՌՆԷ:

23. ԳԱՎԹԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԴՌԱՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ.

ԵՍ ՄԽԻԹԱՐ ՋԻՄ ՀՈԳ-
ՈՅ ԱՌԴԻՒՆՍ ՋԵԿ-
ԵՂԵՑԻՍ ԷՏՈՒ :Ա:

ՊԱՏԱՐԱԳ ԱՌՆ-
ԵՆ ԻՆՁ Ի ՆՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ:

24. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ.

ԵՍ ՅԱՅԼ ԹՈՒ-
ԹԱՆ ՄԻԱԲԱՆ-

ԵՑԱ ՍՐԲ-
ՈՅՍ ՏԵԱՌՆ ԵՒ

ՄԻԱԲԱՆՔՍ :Ա:
ՊԱՏԱՐԱԳԵԼ:

25. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ.

ԵՍ ՍԻՄՈՆ ԷՐԷՑ Ջ-
ԻՄ ՀՈԳՈՒ ՊԱՀԵՍՏ
Ս Ի ՍՈՒՐԲ ԳՈՒԳՈՐՍ ԵՏՈՒ

ՄԻԱԲԱՆՔՍ :Ա: ՊԱՏԱՐ-
ԱԳ ԱՌՆԵՆ ԻՆՁ Ի ՏԱՒՆ-
Ի ՅՈՎԱՆՆՈՒ:

26. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ՀԱՐԱՎ, ԿԻՑ.

ԵՍ ՎԱՍԱԿ ՋԻՄ ՀՈ-
ԳՈ ԱՌԴԻՒՆՔՍ Ի ԳԱՒԻ-
ԹՍ ԷՏՈՒ ԵՒ ՄԻԱԲԱՆՔ-

Ս :Բ: ԺԱՄ ԷՏՈՒՆ ԻՆՁ Ի
ՏԱՒՆԻ ՂԱՋԱՐՈՒՒ Ա-
ՆԽԱՓԱՆ ԵԿԵՂԵՑՊԱՆ
ՎՃԱՐԷ:

27. ԳԱՎԹԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ, ԿԻՑ.

ՎԱՐՈՂԱԿԱՌ- ԻՆ :Ա: ԺԱՄ ԱՌ- ՆԵՆ ՎԱՃԵՍ- ԲԵՐԻՆ:

28. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ՎԵՐՔԵՎ, ԿԻՑ.

ԵՍ..... ՋԻՄ ՀՈԳՈՅ
ԱՌԴԻՒՆՔՍ Ի ԳԱՒԻԹՍ ԷՏՈՒ ԵՒ ՄԻԱԲԱ-
ՆՔՍ Ի ՏԱՌԻՆ :Ա: ԺԱՄ ԷՏՈՒՆ ԻՆՁ Ի ՏԱՒ-
[ՆԻ] ՍՐԲՈՅ ՔԱՌԱՄՆԻՑՆ ՈՐ ԽԱՓ-
[Ա]ՆԷ ԻՄ ՄԵՂԱՑՍ ՏԷՐ Է:

29. ԳԱՎԹԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ՆԱԽՈՐԴԻՆ ՄՈՏԻԿ, ՆԵՐՔԵՎ.

ԵՍ..... ԵՒ ՍՄՊԱՏ ԷՏՎԱՔ Ի ԳԱՒԻ-
ԹՍ —Ի— ԴԱՀԵԿԱՆ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԷՏՈՒ-
Ն ՄԵՋ Ի ՏԱՌԻՆ :Ա: ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ՍՐԲՈՅ Ք-
ԱՌԱՄՆԻՑՆ ՈՐ ԽԱՓԱՆԷ ՄԵՐ ՄԵՂԱՑՍ [ՏԷՐ Է]

30. ԳԱՎԹԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻՆ, ՆԱԽՈՐԴԻՆ ՄՈՏԻՆ,

ԵՍ ՄԱՐԴԱԵԱՀ-
Ս ԻՄ ՀՈԳՈ ԱՐԴԻԻ-
ՆՍ Ի ԳԱՒԻԹՍ ԷՏ-
ՈՒ Ի ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ
Ի ՏԱՐԻՆ ։Ա։ ԺԱՄ ԷՏ-
ՈՒՆ ԻՆՔ Ի ՏԱՒՆԻ
ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈԲ-
Ա ՈՐ ԽԱՓԱՆԷ ԻՄ
ՄԵՂԱՑՍ ՏԷՐ Է։

31. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՆ ՎԵՐԵՎ, ԿԻՑ,

..... ԵՂԻՑԻՆ Ի ՔՐԻՍՏՈՍԷ ԵՒ ՈՐ ԽԱ-
.....Տ ԻՄ ԱՂԵԿԱՅ ՃՈՐՏ ՏՈՒ- ՓԱՆԷ ՅՈՒ-
ԱՔ ՓՈՔՐ ԸՆՔԱ Ի ՍՈՒՐԲ
ԳՐԻԳՈՐՍ ՅՈՒ- ԴԱՒ ԵՒ ԿԱԵՆԻ ԵՒ ՄԵՐ ՄԵ-
ՍՈՎ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ՄԵՔ ։Բ։ Ժ- ՂԱՑՍ ՊԱՐՏ-
ԱՄ ՍՈՒՐԲ ՀՈՌՄՍԻՄԵԱՆՑ ՏԱՒՆ- ԱԿԱՆ Է։
ԻՆ ԿԱՏԱՐԻՔ ԳՐՈՅՍ ԱՒՐՀՆԵԱԼ

32. ԳԱՎԹԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՆՄԻՋԱՓԵՍ ԴՌԱՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՔԻՆ.

ՅՈՒՍՈՎՆ ԱՍՏՈՒԵՈՅ ԵՍ ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍՈՒՐԲ
ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱՐ-
ԴԱՊԵՏ
ՅՈՎԱՆԷՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ։Ա։ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ՍՈՒՐԲ ՅԱԿՈ-
ԲԱ ԽԱՓԱՆՈՂՆ ԴԱՏԻ։

33. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ԴՌԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՔԻՆ.

Ի ՏԱՒՆԻ ԵՐԵՒՄԱՆ ԽԱՋԻՆ ։Գ։ ՊԱՏԱՐԱԳ ԱՌՆԵՆ
ՍԵՒՆՈՍՈՅ ՍԻՍԱՅԻՆ ԵՒ ՏՈՒՐՔԿԱՆՆ ՈՎ ԽԱՓԱՆԷ
ԴԱՏԻ։

34. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ԴՌԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ.

ԵՍ [ԳՐԻԳՈՐ ԵՒ] ԳՈՐԳ ՋՍԵՐ [Հ]-
ՈԳՈ ԱՐԴԻՒՆՍ ՅԵԿԵՂԵՑՈ-
ՅՍ ՍԱԼՍ ՏՎԱՔ ԵՒ ԱՌԱՋՆՈ-
ՐԴՔ ՍՈՐԱ Բ ԺԱՄ ՏՎԻՆ ՄԵՔ Ի
ՏԱՒՆԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՆ Ա
ԳՈՐԳԱ ԵՒ Ա ԳՐԻԳՈՐ
ՈՎ ԽԱՓԱՆԷ ՄԵՐ ՄԵՂԱ-
ՑՆ ՏԷՐ Է։

35. ԳԱՎԹԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԿԵՆՏՐՈՆԻ ԼՈՒՍԱՄՈՒՏԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ.

ԵՍ ԲԱՐՍԵՂՍ ԻՄ ՀՈԳՈՅ
ԱՐԴԻՒՆՍ Ի ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐՍ ՏՈՒ-
ԱՔ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ։Ա։ ՊԱՏԱՐԱԳ
ՀՐԱՄԱՅԵՑԻՆ ԻՆՔ Ի ՏԱՒՆԻՆ
ԳԱՅԻԱՆԷ ՈՐ ԽԱՓԱՆԷ ԴԱ-
ՏԻ ՏԵԱՌՆԷ ԿԱՏԱՐԻՔ
ԱՒՐՀՆԵԱԼ ԼԻՑԻ։

36. ԳԱՎԹԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԼՈՒՍԱՄՈՒՏԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՔԻՆ.

ԿԱՄԱՒՆ ԱՍՏՈՒԵՈՅ ԵՍ ՅՈՎԱՆԷՍ
ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՏԻՐ[ԵՐԵ]Ց ՄԻԱ
ԲԱՆԵՑԱՔ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ-
ԻՍ.... ՏՎ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ
ԷՏՈՒՆ ՄԵՔ ։Դ։ ԺԱՄ [Ի
ՏԱՒՆԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ...]

37. ԳԱՎԹԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԱՅՐԻՆ.

[ԵՓԵՄ]ՈՍԻ ՏԱՒՆԻՆ ։Ա։ ԱՒՐ ԺԱՄ ՈՎ
ԽԱՓԱՆԷ ԻՄ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է։

(Շարունակելի)

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 13-ին, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ՝ մեռելոց հիշատակին։ Օրվա պատարագիչն էր բարձրապատիվ Տ. Գեորգ ծայրագույն վարդապետը։ Սուրբ պատարագի ավարտից հետո տեղի ունեցան հոգեհանգստյան արարողություններ «վան համօրէն ննջեցելոց»։

***

Սեպտեմբերի 20-ին, Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով, Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի տեսուչ նշանակվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ տիար Մարտիրոս Տեր-Ստեփանյանը։

***

Սեպտեմբերի 21-ին գերաշնորհ Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, նորընծա Տ. Եղիշե արքեպ. ընկերակցությամբ, մեկնեց Կիսլավոդսկի բուժավայրը։

***

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, նկատի ունենալով պարոն Ֆ. Բոռչանյանի ծերությունը և նրա բարեխիղճ աշխատանքը Մայր Աթոռում, նշանակեց նրան կենսաթոշակ՝ սեպտեմբերի 1-ից ազատելով նրան Հոգևոր Ճեմարանի դասախոսական պարտականություններից։

***

Սեպտեմբերի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց բուլղարական դերասանների պատգամավորությունը, որի կազմի մեջ էին Բուլղարական Ժողովրդական Ռեսպուբլիկայի վաստակավոր դերասան, Սոֆիայի օպերայի մենակատար Իլյա Իոսիֆովը (տենոր), Բուլղարական Ժողովրդական Ռեսպուբլիկայի վաստակավոր դերասան, Սոֆիայի կոնսերվատորիայի պրոֆեսոր Նեդյալկա Սիմիոնովան (չուիթակահար), Սոֆիայի օպերայի մենակատար Նատյա Աֆեյան (մեցցո-սոպրանո), Սոֆիայի ռադիոյի մենակատար Իովչո-Կարա-Իվանովը (տենոր), Սոֆիայի ռադիոյի մենակատար Ցվատկո Բլագոյևը և Սոֆիայի օպերայի կոնցերտմեյստեր Էլենա Մինդիչական։ Հյուրերը եղան Տաճարում և Տաճարին կից եկեղեցական-հնագիտական թանգարանում։ Հյուրերին մանրամասն բացատրություններ և տեղեկություններ էր տալիս Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։ Վերջում հյուրերը սրտագին իրենց շնորհակալությունները հայտնեցին Մայր Աթոռի միաբանությանը՝ իրենց ցույց տրված ջերմ և լավագույն ընդունելության համար։

***

Սեպտեմբերի 25-ին, հանգուցյալ Հայրապետի անվանակոչության օրը, մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր բարեշնորհ Տ. Կոստանդին վարդապետը։ «Հայր մերոյ» առաջ բարձրապատիվ Գեորգ ծայրագույն վարդապետը քարոզ խոսեց։ Հայր սուրբը զգացված բառերով մի անգամ ևս ոգեկոչեց հանգուցյալ մեծագործ և հայրենասեր Հայրապետի կյանքն ու գործունեությունը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ Վեհափառի շիրիմի վրա։

***

Սեպտեմբերի 26-ին, Վարագա Ս. Խաչի տոնի օրը, հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց բարձրապատիվ Տ. Գեորգ ծայրագույն վարդապետը, որը և քարոզ խոսեց Վարագա Ս. Խաչի նշանակության մասին։

❊❊❊

Հոկտեմբերի 10-ին, «Սրբոց Թարգմանչաց վարդապետաց» մերոց Մեսրոպաց, Եղիշէի, Մովսէսի Քերթողին, Դաւթի անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսէսի Կլայեցւոյն» և ի հիշատակ հայկական նշանագրերի գյուտի ու սուրբ գրոց թարգմանության, եկեղեցական-ազգային տոնի առթիվ, Հոգևոր Ճեմարանում կազմակերպվեց գրական երեկո։ Նույն օրը լրանում էր երաժշտագետ Կոմիտաս վարդապետի ծննդյան 85-ամյակը և քանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի մահվան 25-ամյակը։ Վերատեսուչ պարոն Մարտիրոս Տեր-Ստեփանյանը իր բացման խոսքում նշելով թարգմանիչ վարդապետների կատարած դերը, խոսեց նաև երաժշտագետ Կոմիտաս վարդապետի և քանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի մասին։ Ուսանողները երգեցին «Որք զարդարեցին» շարականը, որից հետո փակուցեց շնորհոնակ Գուրգեն սարկավագը։ Ուսանողները հանդես եկան արտասանություններով և երգերով։ Վերջում գերաշնորհ Սահակ սրբազանը «Պահպանիչով» փակեց երեկոն։

❊❊❊

Հոկտեմբերի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Շվեդիայի ուսուցիչների պատգամավորությունը՝ բաղկացած 10 հոգուց։ Վանքում հյուրերին ջերմ ընդունելություն ցույց տրվեց։ Հյուրերը նշան Տաճարում և Տաճարին կից հնագիտական թանգարանում։ Երեկոյան, հարուստ տպավորություններով, հյուրերը մեկնեցին Երևան։

❊❊❊

Հոկտեմբերի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Չեխոսլովակա-Սովետական բարեկամության միության պատգամավորությունը։ Պատգամավորությանը գլխավորում էր Բունոյի համալսարանի ռեկտոր ակադեմիկոս Ֆրանտիշեկ Տրավնիչեկը։ Պատգամավորության կազմի մեջ մտնում են հասարակական գործիչներ, գիտության, արվեստի ու գրականության աշխատողներ։ Հյուրերը նշան Տաճարում և Տաճարին կից եկեղեցական-հնագիտական թանգարանում, ուր Տիգրան սարկավագը մանրակրկիտ բացատրություն տվեց եկեղեցական թանկագին և արժեքավոր սպասների, իրերի ու զգեստների մասին։ Վերջում պատգամավորության անունից Ֆրանտիշեկ Տրավնիչեկը շնորհակալություն հայտնեց սարկավագին։ Հյուրերը մեկնեցին Էջմիածնից հարուստ տպավորություններով։



ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 10-ին Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը պանծացրեց Սրբոց Թարգմանչաց հիշատակը՝ հավուր պատշաճի հանդիսակատարությամբ, որին նախագահում էր լուսարարապետ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Ներկա էին Տ. Գեորգ ծայրագույն վարդապետ Վաթյանը, Կոմիտաս աբեղա Տեր-Ստեփանյանը, ուսուցիչներ, նախկին ճեմարանավարտներ և վանքի ծառայողներ։

Նախագահող սրբազանի տերունական աղոթքից և հանգուցյալ Վեհափառ Տ. Գեորգ Զ. Հայրապետի հիշատակին երեք լոպեն հոտնկայս հարգանք ընծայելուց հետո, բացվեց հանդեսը։

Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ պարոն Մարտիրոս Տեր-Ստեփանյանը, որ ղեկավարեց հանդեսը, ներածական խոսքով հայտնեց, թե հանդեսը կազմակերպված էր հատկապես պանծացնելու հիշատակը մեր անմահ լուսավորիչ-թարգմանիչների՝ դպիրավորությամբ Սահակ Պարթև Հայրապետի և Մեսրոպ Մաշտոց վարդապետի, որոնք հայ ժողովրդի մտավոր ու հոգևոր լուսավորության, Հայ Ազգային Եկեղեցու անսասանության և Հայաստան աշխարհի ինքնուրույնության անխորտակելի հիմունքն են դրել և այդպիսով էլ արժանացել համազգային հարգանքի ու մեծարանքի։

«Հայ ժողովուրդը,— ասաց քանախոսը,— անցյալում լինելով շատ հալածված ու տանջված, բայց և միշտ ազատասեր ժողովուրդ, իր հարազատ ծոցից ծնունդ է տվել անհամեմատորեն մեծ թվով անմահ հերոսների՝ ավանդական Հայկ նահապետից սկսած, որոնք կուրծքները պատնեշ արած պաշտպանել են ժողովրդի ազատությունը, անկախությունն ու ֆիզիկական գոյությունը։ Շնորհիվ այդ հերոսների, հայ ժողովուրդը ահասարսուռ փոթորիկների միջից քայլել է անհողդողդ և հասել այսօրվա պայծառ ու փառահեղ իրականության։ Այսօր, հայ ժողովուրդն ունի իր ազատ Հայրենիքը, ունի իր սեփական պետությունը։ Սակայն այստեղ գերագույն պարտականություն է նշել այն, թե հայ ժողովուրդը իր այսօրվա երջանկությունը պարտական է մասնավորապես ոսա ազնիվ ժողովրդին, որովհետև նա է, որ իր հզոր պաշտպանությամբ բնաջնջումից փրկեց հայ ժողովրդին, ազատությունն, Հայրենիք ու պետականություն շնորհեց նրան և փառքով պսակեց մեր հերոսների լուսապայծառ ճակատները։

«Հայ Ազգային Եկեղեցին էլ,— շարունակեց քանախոսը,— լինելով հայ ժողովրդի բախտակիցն ու լծակիցը, ենթարկվել է ահալուր ու զահանգական հալածանքների։ Բայց մենք հրճվանքով ենք տեսնում այսօր, որ Հայաստանյայց Եկեղեցին մնում է կանգուն և գործում՝ իր դերի վեհությամբ, ի սփյուռս աշխարհի, որպես մշտարթուն և իմաստուն ղեկավար ունենալով Ամենայն Հայոց Հայրապետությունն ի Ս. Էջմիածին։ Հայաստանյայց Եկեղեցին մնում է անսա-

սան և այդ անսասանությունը նա պարտական է Սահակ Պարթև Հայրապետից և Մեսրոպ Մաշտոցից ու նրանց աշակերտների փաղանգից սկսյալ մինչև Ամենայն Հայոց Կաթողիկոս Երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետը հասնող քաջակորով հովվապետներին, առաջնորդներին, արժանահարգ հոգևորականներին և նրանց գործակից ազգասեր, հայրենասեր ու եկեղեցասեր աշխարհական ժողովականներին։

Բանախոսը այնուհետև հարգանք ընծայելով այդ վերելքի աշխատավորներին՝ գրականագետներին, գիտնականներին, բանաստեղծներին ու գեղարվեստագետներին, նշեց հայ ազգային դասական վարպետի՝ Կոմիտաս վարդապետի (Սողոմոն Գեորգի Սողոմոնյանի) ծննդյան 85-ամյակը, ինչպես նաև հայ քնարերգության ականավոր ներկայացուցիչներից Հովհաննես Հովհաննիսյանի մահվան 25-ամյակը։

«Սրբոց Թարգմանչաց հիշատակին նվիրված այս հանդեսում հիշելով ու նշելով մեծանուն Երգահան և անմահ երաժշտագետ Կոմիտաս վարդապետի և մեծ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի անունները, տված կլինենք մեր հարգանքի տուրքը նրանց պանծալի հիշատակին ևս,— եզրափակեց բանախոսը և հրավիրեց հոգեշնորհ Կոմիտաս արեղային Երգել մեծ Կոմիտասի «Մոկաց Միրզան» սքանչելի Երգը։ Եվ չափազանցած չենք լինի, եթե ասենք, որ Կոմիտաս արեղան հնարավոր հուզումն ու թրթիռը ներդրեց իր գեղեցիկ ձայնի մեջ՝ արժանավայել կատարելությամբ երգելու մեծ Կոմիտասի շատ սիրված այդ երգը։

Օրվա բանախոսն էր Հոգևոր Ճեմարանի վերակացու բարեշնորհ Գուրգեն սարկավագ Մուրադյանը, որը մի առ մի կանգ առավ Սրբոց Թարգմանչաց յուրաքանչյուրի հեղինակած երկի ու կատարած աշխատանքի վրա, բացատրեց այդ ժամանակաշրջանի պատմական կարևոր դեպքերը՝ պարսկական և բյուզանդական կայսրությունների քաղաքական ու կրոնական սադրանքները Հայաստանի դեմ, հայ Արշակունյաց տան անկումն ու Հայաստանի բաժանումը, հայ դրերի գյուտն ու Վարդանանց պատերազմը, հայ շինականի տառապանքներն ու անկախության համար նրա մղած պայքարները և այլն։

Ճեմարանի ուսանողներից Ս. Թեհբուդյանն արտասանեց բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի «Հայոց լեռուն», և Հովհաննես Դանիելյանը՝ բանաստեղծ Սողոմոն Տարոնցու «Մաշտոցի գերեզմանի մոտ» քերթվածը։ Ուսանողները երգեցին նաև Սրբոց Թարգմանչաց նվիրված «Որք զարդարեցին» շարականը։ Ապա նախագահող սրբազանը խրատական խոսքն ուղղեց սաներին և ցանկություն հայտնեց, որ նրանք սովորեն ու դաստիարակվեն Սրբոց Թարգմանչաց ոգով և դառնան Հայաստանյայց Եկեղեցու արժանավոր հոգևորականներ։ Հանդեսը փակվեց սրբազան հոր «Պահպանիչ»-ով։

ՃԵՄԱՐԱՆԱՍԵՐ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Բազմամիլիոն հնդիկ ժողովուրդը, որն ապրում է իր ազգային վերածնության շրջանը, իր բախտն անվերապահորեն կապել է խաղաղության համար մարտնչող ժողովուրդների բախտի հետ։ Նա հանդես է գալիս որպես խաղաղության ամրապնդման գործոն ուժերից մեկը, խաղաղություն, որն այնքան անհրաժեշտ է հենց իրեն, հնդիկ ժողովրդին, իր երկրի, ազգային կուլտուրայի և տնտեսության զարգացման և առաջադիմության համար։

Սովետական Միության ժողովուրդները մեծ համակրանք են տածում դեպի խաղաղասեր հնդիկ ժողովուրդը, դեպի նրա պայքարը՝ հանուն իր ազգային վեհ իդեալների կատարման։ Այդ սիրո ու համակրանքի փայլուն արտահայտությունն են հանդիսանում բարեկամական այն կապերը, որոնք հաստատված են և գնալով ամրապնդվում են երկու երկրների ժողովուրդների միջև, հատկապես վերջին տարիներին։ Բարեկամական այդ կապերի ամրապնդման մասին են վկայում Հնդկաստանի և Սովետական Միության կուլտուրայի գործիչների պատվիրակությունների փոխադարձ այցելությունները, տնտեսական ցուցահանդեսները, երկու երկրների արվեստի և կուլտուրայի նվաճումների փոխադարձ ցուցադրումները և այլն։

Ընթացիկ տարվա սեպտեմբեր ամիսը բավական նշանակալից էր երկու երկրների կուլտուրական և բարեկամական կապերի հետագա զարգացման տեսակետից։ ՍՍՌՄ Կուլտուրայի մինիստրության հրավերով Սովետական Միություն այցելեց Հնդկաստանի կուլտուրայի և արվեստի գործիչների մի պատվիրակություն՝ բաղկացած 21 մարդուց։ Բացի այդ, Սովետական Միություն ժամանեցին Հնդկաստանի համալսարանների մի խումբ պրոֆեսորներ և ուսանողներ։ Միութենական ռեսպուբլիկաներում բացառիկ հաջողությամբ անցավ հնդկական կինոնկարների ֆեստիվալը, որը սովետական հանդիսատեսին ցույց տվեց հնդկական կինոարվեստի հիանալի նվաճումները։

***

Հնդկաստանի արվեստի և կուլտուրայի գործիչների պատվիրակությունը, ի թիվս միութենական մի քանի ռեսպուբլիկաների, այցելեց նաև Հայաստան։ Պատվիրակության կազմի մեջ մտնում էին հնդկական արվեստի ականավոր վարպետներ՝ երաժիշտներ, երգիչներ, պարողներ։ Պատվիրակությունը գլխավորում էր Հնդկաստանի ռեսպուբլիկայի առողջապահության մինիստրի տեղակալ տիկին Մ. Ջանդրասեկհարը։

Սեպտեմբերի 20-ին Երևանի օդանավակայանում հյուրերին դիմավորելու էին եկել Հայաստանի մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչները, դիտության, արվեստի և կուլտուրայի գործիչներ։

Հայաստանի կուլտուրայի մինիստր Ա. Շահինյանը ողջույնի խոսքով դիմեց բարեկամ հնդիկ ժողովրդի ներկայացուցիչներին, ասելով.

— Սովետական Միության ժողովուրդները, ինչպես և հայ ժողովուրդը, խորին հարգանքի զգացում են տածում դեպի հնդիկ ժողովուրդը, դեպի նրա հին, ինքնատիպ և խորապես ազգային կուլտուրան։ Մենք ողջունում ենք ձեզ, թանկագին հյուրե՛ր։ Սովետական Հայաստանում, ուր աշխատասիր հայ ժողովրդի կողմից հազարամյակների ընթացքում ստեղծված կուլտուրան պահպանված է մինչև մեր օրերը և այսօր այդ կուլտուրան ապրում է իր բուռն ծաղկման և վերելքի շրջանը։

— Մեր քաղաքի բնակիչները,— շարունակեց մինիստրը,— երջանիկ են, որ հնարավորություն կունենան հանձինս ձեզ մոտիկից ծանոթանալու հնդիկ տաղանդավոր ժողովրդի հետ, ծանոթանալու նրա բարձր արվեստին, ուրախանալու նրա ստեղծագործական հաջողություններով։ Իսկ մենք, մեր հերթին, ուրախ կլինենք ցույց տալու ձեզ մեր ժողովրդի արվեստը, մեր հաջողությունները։

Հայաստանի արվեստի աշխատավորների կողմից հյուրերին ջերմորեն ողջունեց ՍՍՌՄ ժողովրական արտիստ Վ. Վաղարշյանը։

— Մենք չափազանց ուրախ ենք — ասաց նա,— ընդունելով թանկագին հյուրերին՝ հնդկական արվեստի տաղանդավոր ու պրոգրեսիվ ներկայացուցիչներին։ Մեզ ծանոթ է բազմամիլիոն հնդիկ ժողովրդի արվեստի և կուլտուրայի բազմադարյան պատմությունը։ Մեզ հիացմունք է պատճառում հնդկական ճարտարապետների վարպետությունը, տոնոց ստեղծել են սքանչելի կոթողներ, մեզ հիացմունք են պատճառում հնդկական արվեստի նմուշները, որոնք ոչջի են ընկնում ոչ միայն իրենց կատարման ձևով, այլև հնդիկ ժողովրդի մտքերի և իդեաների արտահայտությամբ։ Սովետական մարդիկ մեծ գոհունակությամբ հետևում են այն ջանքերին, որ գործադրում է հնդիկ ժողովուրդ ողջ աշխարհում խաղաղության ամրապնդման գործում։

Այնուհետև ելույթ ունեցավ Հնդկաստանի կուլտուրայի և արվեստի գործիչների պատվիրակության ղեկավար, Հնդկական ռեսպուբլիկայի առողջապահության մինիստրի տեղակալ տիկին Ջանդրասեկհարը։ Պատվիրակության անունից նա հայտնում է իր շնորհակալությունը բարեկամական ընդունելության համար։

— Մենք ամենուրեք տեսնում և զգում ենք այն հետաքրքրությունը,— ասում է տիկին Ջանդրասեկհարը,— որը ցուցաբերում են սովետական մարդիկ դեպի հնդիկ ժողովրդի կուլտուրան։ Մոսկվայում և Սովետական Միության ուրիշ քաղաքներում կայացած հնդկական արվեստի համերգները վկայում են այն հետաքրքրության մասին, որ սովետական մարդիկ տածում են դեպի Հնդկաստանը և նրա արվեստը։

Վերջում տիկին Ջանդրասեկհարը հնդկական ժողովրդի անունից ջերմ ողջույն է հղում հայ ժողովրդին և հույս է հայտնում, որ հետագայում է՛լ ավելի կամրապնդվի Հնդկաստանի և Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունը։

Նույն օրը, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, տեղի ունեցավ Հնդկաստանի արվեստի վարպետների առաջին համերգը։

Թատրոնի ընդարձակ սրահը լեփ-լեցուն էր հանդիսականներով։ Տեղ չլինելու պատճառով հազարավոր մարդիկ հնարավորություն չունեցան համերգին ներկա լինելու։ Համերգից առաջ թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը Եվրոպեց Հնդկաստանի և Հայկական Սովետական Սոցիալիստական ռեսպուբլիկայի Պետական հիմները։

Համերգը անցավ բացառիկ հաջողությամբ։ Հանդիսականները ջերմորեն ընդունեցին հնդկական արվեստի վարպետների ելույթը։ Վերջում համերգի բոլոր մասնակիցները կատարողին Հնդկաստանի հիմնը՝ «Ջանա Մանա», որը հանդիսականները լսեցին հոտնկայս։

Համերգից հետո հնդիկ դերասաններին մատուցվեցին ծաղկեփնջեր։ Հայ կուլտուրայի գործիչների անունից հյուրերին ողջունեց արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆ. Լ. Քալանթարը։ Նա նշեց հնդիկ և հայ ժողովուրդների միջև վաղուց ի վեր գոյություն ունեցող կուլտուրական կապերը։

Պատասխան խոսքով հանդես եկավ պատվիրակության ղեկավար տիկին Մ. Ջանդրասեկհարը։ Նա ողջունեց ներկա եղողներին և նշեց Հնդկաստանի և Սովետական Միության բարեկամության և կուլտուրական կապերի հսկայական քաղաքական նշանակությունը, ինչպես նաև այդ բարեկամությունն խոշոր դերը խաղաղության համար մղվող պայքարում։

Սեպտեմբերի 22-ին Հայաստանի կուլտուրայի մինիստր Ա. Շահինյանը կազմակերպեց ընդունելություն ի պատիվ հնդկական հյուրերի։ Ընդունելությանը ներկա էին պատվիրակության անդամները՝ տիկին Ջանդրասեկհարի գլխավորությամբ, Հայաստանի արվեստի և կուլտուրայի գործիչներ, մինիստրության պատասխանատու աշխատողներ։ Ընդունելությունն անցավ ջերմ, բարեկամական մթնոլորտում։

Մինիստր Ա. Շահինյանը, ողջունելով հյուրերին, ծանոթացրեց նրանց կուլտուրա-

յի, արվեստի և տնտեսական շինարարության բնագավառում Հայաստանի աշխատավորների ձեռք բերած նվաճումներին։

Իր հերթին, տիկին Մ. Զանդրասեկհարը շնորհակալություն հայտնելով հյուրասիրության համար, պատմեց Հնդկական ռեսպուբլիկայի ձեռք բերած հաջողությունների և այն խնդիրների մասին, որոնք կանգնած են Հնդկաստանի խաղաղասեր ժողովուրդների առաջ՝ սեփական երկրի տնտեսական և կուլտուրական հետագա բարգավաճման ասպարեզում։

Երևանում, ինձ հայտնեցին, որ առաջին հայերեն պարբերական թերթը հրատարակվել է Հնդկաստանում, Մադրաս քաղաքում, 18-րդ դարի վերջերին։ Այդ հետաքրքիր փաստը վկայում է մեր ժողովուրդների վաղեմի փոխհարաբերությունների ու կապերի մասին։ Ինձ համար առավել հաճելի է գիտենալ այդ մասին, որովհետև ինքս մադրասցի եմ։ Մենք զրույցներ ունեցանք ձեր առանձին գրողների և արվեստագետների հետ։ Նրանք խիստ ջերմորեն խոսում էին հնդիկ ժողովրդի կուլտուրայի, արվեստի, ճարտարապետության

Հնդկաստանի կուլտուրայի և արվեստի գործիչների պատվիրակությունը Երևանի օդանավակայանում

— Ձեր երկրի ակնառու հաջողություններ,— ասաց այնուհետև տիկին Զանդրասեկհարը,— խոսում են ձեր ժողովրդի մեծ ընդունակությունների մասին։ Խիստ ուրախալի է այն, որ բուն երկիրը սերտ կապ է պահպանում արտասահմանյան երկրներում ապրող հայերի հետ։

—Հայերի մասին,— շարունակեց պատվիրակության ղեկավարը,— ես լսել եմ դեռ մանկուց։ Գիտեմ, որ ձեր ժողովուրդը հին կուլտուրայի տեր ժողովուրդ է։ Այստեղ մասին՝ բացահայտելով իրենց բավական հիմնավոր գիտելիքները մեր երկրի ու ժողովրդի մասին։ Մենք մեծ գոհունակությամբ իմացանք, որ կան ժամանակակից հայ բանաստեղծներ, որոնք բարձր շնչով երգել են հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարը։ Այս ամենը վկայում է այն մասին, որ ինչպես հեռավոր անցյալում, այնպես էլ մեր ժամանակներում, հնդիկ ժողովրդի կյանքը հետաքրքրել է հայ ժողովրդին, նրա կուլտու-

բայի գործիչներին, մի բան, որը մեզ շատ է ուրախացնում։

Ընդունելությունից հետո Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում հնդիկ արվեստագետների համար տրվեց համերգ, որի ծրագիրը կազմված էր բացառապես հայկական երգերից ու հրաժշտությունից։ Համերգին մասնակցեցին Պետական օպերային թատրոնի մենակատարները, հայկական ժողովրդական երգի և պարի վաստակավոր անսամբլը, Ռադիոինֆորմացիայի գլխավոր վարչության ժողովրդական գործիքների

Հնդկական պրոֆեսորների և ուսանողների պատվիրակությունը Երևանի Լենինի հրապարակում

նվագախումբը։ Համերգը ունկնդիրների վրա թողեց շատ մեծ տպավորություն։

Նույն օրվա երեկոյան Օպերայի և բալետի թատրոնում կայացավ հնդկական արվեստի վարպետների հրաժեշտի համերգը, որը նույնպես անցավ մեծ հաջողությամբ։

Հնդիկ հյուրերը Երևանում մնացին երեք օր։ Այդ ժամանակամիջոցում նրանք դիտեցին քաղաքի տեսարժան վայրերը, եղան կուլտուր-լուսավորական և առողջապահական մի քանի հիմնարկներում, ուր ծանոթացան երաժշտական կրթության և ժողովրդական առողջապահության գործի դրվածքին։

Սեպտեմբերի 23-ին Հնդկաստանի կուլտուրայի և արվեստի աշխատողների պատվիրակությունը մեկնեց Երևանից։ Մեկնելուց առաջ պատվիրակության ղեկավար տիկին Ջանդրասեկհարը Հայաստանի հեռագրական գործակալության աշխատակցի հետ ունեցած զրույցի ժամանակ պատմեց Երևանից ստացած տպավորությունների մասին։

— Երեք օր մենք եղանք Սովետական Հայաստանի մայրաքաղաքում,— ասաց նա,— բայց այդ կարճ ժամանակամիջոցում մենք կարողացանք բարեկամական կապեր ստեղծել շատ երևանցիների հետ։ Նրանց բացառիկ ջերմ ընդունելությունը կարծեք թե լրացնում էր ժամանակի սղությունը։ Մեզ տրվեց լայն հնարավորություն՝ տեսնելու այն ամենը, ինչ-որ մեզ հետաքրքրում էր։ Բոլոր այն անձինք, որոնց հետ առիթ ունեցանք հանդիպելու, ամբողջ հոգով աշխատում էին, որպեսզի Երևանում անցկացրած մեր ժամանակը լինի ավելի հարուստ և բովանդակալից։

— Պատվիրակության բոլոր անդամները,— ասաց այնուհետև տիկին Ջանդրասեկհարը,— անկեղծորեն հիացած են հայ ժողովրդի արվեստով։ Այն ամենը, ինչ մենք տեսանք և լսեցինք Ֆիլհարմոնիայում տրված համերգի ժամանակ, երկար ժամանակ կմնա մեր հիշողության մեջ։ Համերգը ցույց տվեց, թե որքան հարուստ ու գունեղ է ձեր ժողովրդի ազգային արվեստը, որքան բարձր է ձեր կատարողների վարպետությունը։

Ինձ, որպես Հնդկաստանի ռեսպուբլիկայի առողջապահության ընագավառի աշխատողի, անձնապես հետաքրքրեց Հայաստանի բժշկական հաստատությունների գործունեությունը և ուրախ եմ, որ ինձ հաջողվեց այցելել այդ հաստատություններից մի քանիսը։ Հատկապես մեծ տպավորություն թողեց ինձ վրա այն ծննդատունը, ուր ես եղա։ Դա բժշկական մի օրինակելի հաստատություն է, որտեղ ստեղծված են հիանալի պայմաններ ծննդկան կանանց և նորածին մանուկների համար։ Այդ ամենը վկայում է մանուկների և ծննդկան մայրերի նկատմամբ գոյություն ունեցող սիրո և հոգատարության մասին։

Հետաքրքիր և ուսանելի շատ բան տեսանք մենք նաև այլ կարգի բուժական հաստատություններում, ինչպես օրինակ, Արզնի գեղատեսիլ կուրորտում, Ֆիզիկական բուժման և կուրորտոլոգիայի ինստիտուտում, մանկական սանատորիայում։ Ինձ վրա մեծ տպավորություն թողեց այն հսկայական հոգատարությունը, որը ցուցաբերվում է երիտասարդ սերնդի նկատմամբ։

Վերջում տիկին Ջանդրասեկհարը խնդրեց պատվիրակության անդամների անունից սրտագին շնորհակալություն հաղորդել այն բոլոր անձանց, որոնց հետ իրենք առիթ են ունեցել հանդիպելու, ինչպես նաև ողջ հայ ժողովրդին՝ ջերմ ու սիրալիր ընդունելության համար։

***

Սեպտեմբերի 28—30 Երևան այցելեցին Հնդկաստանի համալսարանների մի խումբ պրոֆեսորներ և ուսանողներ՝ Միրութի ինստիտուտի պրոֆեսոր Մադան Մոխանի գլխավորությամբ։

Հյուրերը եղան Պետական համալսարանում, ուր նրանց ցույց տրվեց ջերմ ընդունելություն։ Նրանք համալսարանում մանրամասն ծանոթություն ստացան կրթական գործի դրվածքի հետ։ Նույն նպատակով այցելեցին նաև Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան։

Հնդիկ պրոֆեսորները և ուսանողները եղան Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղում, որտեղ ծանոթացան գյուղացիների նիստ ու կացին, կուլտուրական կյանքին։ Հյուրերը դիտեցին Երևանում կատարվող շինարարությունը, ներկա եղան «Անուշ» օպերայի ներկայացմանը և Հայկական ժողովրդական երգի և պարի անսամբլի համերգին։

Սեպտեմբերի 30-ին հնդիկ պրոֆեսորները և ուսանողները մեկնեցին Երևանից։ Օդանավակայանում նրանց ուղեկցեցին քաղաքի բարձրագույն ուսումնական հաստատությունների և Արտաստանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության ներկայացուցիչները։



ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ.— Հայաստանի գրական և հասարակական կազմակերպությունները նշելու են հայ ականավոր գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ, դեմոկրատ Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակը։

Հոբելյանը նախապատրաստելու և անցկացնելու համար կազմված է կառավարական հանձնաժողով։ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Քալինյանի գլխավորությամբ։ Հոբելյանական հանձնաժողովի մեջ մտնում են Հայաստանի սովետական գրողների միության նախագահ, մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, նույն միության պատասխանատու քարտուղար Էդ. Թոփչյանը (հոբելյանական հանձնաժողովի նախագահի տեղակալ), գրողներ Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Նաիրի Զարյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը, Կուլտուրայի մինիստր Ա. Շահինյանը, ժողովրդական նկարիչ Մ. Սարյանը, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Գ. Պետրոսյանը և ուրիշներ։ Քվով 40 հոգի։

Իր առաջին նիստում հոբելյանական հանձնաժողովը մշակեց մի շարք միջոցառումներ նշանակալից տարեթիվը արժանավայել կերպով անցկացնելու համար։

Հոբելյանի կապակցությամբ Երևանում, Լենինականում և բոլոր շրջանային կենտրոններում տեղի կունենան հանդիսավոր նիստեր։ Նախորդ հոբելյանը արդյունաբերական ձեռնարկություններում, գյուղերում, ուսումնական հաստատություններում կարդացվելու են դասախոսություններ Մ. Նալբանդյանի կյանքի, գրական ու հասարակական գործունեության մասին, հրավիրվելու են Հայաստանի գրողների վարչության և Գիտությունների ակադեմիայի հոբելյանական նիստերը։

Եկող 1955ə թվականից սկսվելու է Մ. Նալբանդյանի երկերի ակադեմիական լրիվ հրատարակությունը 5 հատորով։ Նրա ընտիր երկերը հրատարակվելու են նաև ռուսերեն լեզվով՝ 2 հատորով։ Բացի այդ, այս տարվա ընթացքում առանձին գրքերով հրատարակվելու են Մ. Նալբանդյանի հետևյալ աշխատությունները. «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ», «Երկու տող», «Սոս և Վարդիթեր (կրիտիկա)», բանաստեղծությունների ժողովածուն, ինչպես նաև մի շարք բրոշյուրներ Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության վերաբերյալ։

Նախատեսված է սահմանել մշտական Նալբանդյանական մրցանակ, որը կշնորհվի հայ գրականության ասպարիզում լավագույն բանասիրական աշխատությունների։

Երևանում կազմակերպվում է Մ. Նալբանդյանի կյանքը և գրական-հասարակական գործունեությունը պատկերող մեծ ցուցահանդես։

ՎԱԼԵՐԻ ՅԱԿՈՎԼԵՎԻՉ ԲՐՅՈՒՍՈՎԻ ՄԱՀՎԱՆ 30-ԱՄՅԱԿԸ.— Լրացավ ռուս հայտնի բանաստեղծ-գրականագետ և հասարակական գործիչ Վալերի Յակովլևիչ Բրյուսովի մահվան 30-ամյակը, որը լայնորեն նշվեց նաև Սովետական Հայաստանի մամուլի և հասարակայնության կողմից։

Վ. Բրյուսովի, ռուսական կուլտուրայի 20-րդ դարի լավագույն գործիչներից մեկի, պայծառ հիշատակը խորապես թանկ է հայ ժողովրդի համար, որը հանձին Բրյուսովի ունեցել է հավատարիմ բարեկամ, իր բազմադարյան կուլտուրայի տաղանդավոր հետազոտողը և պրոպագանդողը։

1916 թվականին Վ. Բրյուսովի խմբագրությամբ Մոսկվայում լույս տեսավ «Հայաստանի պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» մեծածավալ ժողովածուն։ Այդ գիրքը հսկայական նշանակություն ունեցավ ռուս ընթերցողին հայ գրականության լավագույն նմուշների հետ ծանոթացնելու տեսակետից։ Քաջ ծանոթ լինելով տարբեր ժողովուրդների կուլտուրական կյանքին, Վ. Բրյուսովը ամենայն ուշադրությամբ ուսումնասիրել է հայ ժողովրդի կուլտուրան և պատմությունը։ Հայ պոեզիայի պատմությանը նվիրված նրա ակնարկը, որը զետեղված է հիշյալ ժողովածուում, «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարեգրությունը» աշխատությունը, ինչպես և տարբեր շրջանների հայ գրողների աշխատություններից կատարած բազմաթիվ թարգմանությունները պերճախոս կերպով վկայում են, թե ինչպիսի մեծ ուշադրություն է նվիրել Բրյուսովը հայկական կուլտուրային և պատմությանը։

Հայ ժողովրդի կուլտուրան և պատմությունը ուսումնասիրելու նպատակով Բրյուսովը Հայաստանի մասին կարդացել է բազմաթիվ գրքեր ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, լատիներեն, իտալերեն, շրջել է Հայաստանում, ուսումնասիրել հայերեն լեզուն։ Հայ բանաստեղծներից, հատկապես Սայաթ-Նովայից, Հ. Թումանյանից և ուրիշներից կատարած նրա թարգմանությունները մինչև օրս մնում են անգերազանցելի։

Բնորոշելով հին հայկական կուլտուրան, Բրյուսովը նշել է նրա խորիմաստ և հուզիչ առանձնահատկությունը, որն իր մեջ պարունակում է Արևելքի և Արևմուտքի կուլտուրայի լավագույն գծերը։ Հայաստանին նվիրված իր բանաստեղծության մեջ Բրյուսովը փառաբանում է հայ ժողովրդի կուլտուրան, որն իր մեջ պահպանել է Եփրատի նուրբ վարդերի երանգը և Հոմերոսյան կրակի փայլը։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ ՉԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ 5-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ— Հոկտեմբերի 1-ին Երևանի Օպերային թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո՝ նվիրված Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայի կազմվելու 5-րդ տարեդարձին։ Երեկոն կազմակերպել էին Հայաստա-

ն ի պրոֆիլիությունների խորհուրդը. Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերությունը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեն, Գրողների միությունը և Կոմպոզիտորների միությունը։ Թատրոնի մեծ դահլիճը լեփ-լեցուն էր հասարակությամբ։

Ներածական խոսքով երեկոն բացեց Հայաստանի պրոֆիլությունների խորհրդի նախագահ Հ. Այվազյանը, որը հայ ժողովրդի անունից ողջույն է հղում չինական մեծ ժողովրդին, ցանկանում նրան նորանոր հաջողություններ իր ստեղծագործական աշխատանքում, իր երիտասարդ պետության հետագա ամրապնդման գործում։

Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայի 5 տարվա նվաճումների մասին զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։

Վերջում տեղի ունեցավ ճոխ համերգ՝ մասնակցությամբ երևանի լավագույն արտիստական ուժերի։

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 10-ԱՄՅԱԿԸ.— Լրացավ ականավոր գիտնական-լեզվաբան, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Մանուկ Աբեղյանի մահվան 10-ամյակը։ Այդ առթիվ տեղի ունեցավ Ակադեմիայի Լեզվի ինստիտուտի և Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի գիտական խորհուրդների համատեղ նիստը, որտեղ Մ. Աբեղյանի կյանքի և գիտական գործունեության մասին զեկուցում տվեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ղանալանյանը։

Զեկուցողը նշեց Մ. Աբեղյանի բացառիկ ծառայությունները հայագիտության զարգացման բնագավառում։ Ականավոր գիտնականը հեղինակ է մի քանի ուսանելի ստվարածավալ արժեքավոր աշխատությունների, որոնք նվիրված են հայոց պատմությանը և գրականությանը, լեզվին և քերականությանը։ Այդ աշխատությունները խոշոր չափով հարստացրել են հայագիտության գանձարանը։

Երեկոյի վերջում Մ. Աբեղյանի մասին իրենց հուշերը պատմեցին գրող Դ. Դեմիրճյանը, բանաստեղծ Ն. Զարյանը, գրականագետ Ա. Կարինյանը և լեզվագետ Ա. Ղարիբյանը։

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇ-ԵՐԵԿՈ.— Հայ ականավոր բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի մահվան 25-ամյակի առթիվ Երևանում տեղի ունեցավ հուշերեկո, որին ներկա էր մեծ թվով հասարակություն։ Երեկոն բացեց բանաստեղծ Ն. Զարյանը, նշելով Հ. Հովհաննիսյանի ստեղծագործությունների ժողովրդական բնույթը, նրա դերը հայ գրականության մեջ։

Գրողի կյանքի և ստեղծագործությունների մասին զեկուցեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ռ. Զորյանը։ Մանրամասն վերլուծելով Հ. Հովհաննիսյանի գրական-ստեղծագործական ուղին, զեկուցողը կանգ առավ նաև հեղինակի թարգմանական բեղմնավոր գործունեության վրա, որի շնորհիվ հայ ընթերցողը հնարավորություն է ունեցել ծանոթանալու ռուս, ուկրաինացի և այլ ազգի հայտնի գրողների մի շարք լավագույն ստեղծագործությունների հետ։

Զեկուցումից հետո Հովհաննես Հովհաննիսյանի մասին իր հուշերը պատմեց գրող Ստ. Զորյանը։ Նա խոսեց գրողի հասարակական գործունեության մասին և նշեց այն ազդեցությունը, որը թողել է Հ. Հովհաննիսյանի ստեղծագործությունը իր ժամանակի առաջադիմական երիտասարդության վրա։

Երեկոյի վերջում տեղի ունեցավ համերգ։

ԲՈՒԼԳԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 10-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ.— Հայաստանի աշխատավորները մեծ բերկրանքով նշեցին բուլղար ժողովրդի ազգային տոնը՝ Բուլղարիան ֆաշիստական լծից ազատագրելու 10-րդ տարեդարձը։ Այդ առթիվ սեպտեմբերի 8-ին Երևանում կայացավ հանդիսավոր երեկո, որին ներկա էր մեծ թվով հասարակություն։

Երեկոն ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։ Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության վարչության նախագահ Գ. Սիունցը զեկուցեց անցած 10 տարում բուլղար ժողովրդի ձեռք բերած նվաճումների մասին։

Վերջում տեղի ունեցավ համերգ, որի ժամանակ սովետահայ բանաստեղծները հանդես եկան բուլգարական գրողներից իրենց կատարած թարգմանությունների արտասանությամբ, ինչպես նաև կատարվեցին բուլղարական երաժշտական ստեղծագործություններ։

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԵՍ ԳԵՈՂԵՐԻՄ.— Հայաստանի կերպարվեստագետների միությունը կազմակերպել է շրջիկ պատկերահանդես, որը բաղկացած է հայ հին և ժամանակակից նկարիչների ավելի քան 190 լավագույն գործերից։ Սեպտեմբերի ընթացքում պատկերահանդեսը մեծ հաջողությամբ ցուցադրվեց Արտաշատի շրջանի մի շարք գյուղերում։ Պատկերահանդեսը կցուցադրվի Հայաստանի տարբեր շրջանների գյուղերում։

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ.— Հայաստանի պետական գրադարանը լույս է ընծայել «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» ստվար աշխատությունը, որի ծավալը հավասար է մոտ 100 տպագրական մամուլի։ Բացի նախաստվերական շրջանի մամուլից, գրքում տրված է սովետական 210 անուն թերթերի և 200 անուն ամսագրերի, գիտական ժողովածուների և տեղեկագրերի բիբլիոգրաֆիան։ Գիրքը կազմել է բանասեր Հ. Պետրոսյանը։

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ.— Սույն թվականի սեպտեմբերին Մոսկվայից Երևան ժամանեց հայ մեծանուն կոմպոզիտոր, Սովետական Միության ժողովրդական արտիստ Արամ Խաչատրյանը։ Հայաստանում նա մնաց ավելի քան մեկ ամիս։ Այդ ժամանակամիջոցում նա տվեց հեղինակային մի

շարք համերգներ Երևանում, Լենինականում, Կիրովականում։ Բոլոր համերգներն անցան մեծ հաջողությամբ։

Տաղանդավոր կոմպոզիտորը համերգներով հանդես եկավ նաև գյուղական աշխատավորների առաջ։ Հայ-ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի մասնակցությամբ Ա. Խաչատրյանը համերգներ տվեց Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Արտաշատի շրջանների գյուղերում, Վեդիում և այլն։ Համերգների ծրագիրը բաղկացած էր Վեդիների լավագույն ստեղծագործություններից, այդ թվում «Գայանե» բալետի առանձին հատվածներից։ Ամենուրեք գյուղական աշխատավորները տաղանդավոր կոմպոզիտորին, որն անձամբ ղեկավարում էր նվագախումբը, ցույց տվին բացառիկ ջերմ ընդունելություն։

Իր շրջագայությունների ժամանակ Ա. Խաչատրյանը զբաղվում էր նաև հայկական ժողովրդական նոր երգերի ուսումնասիրությամբ, նպատակ ունենալով գործադրել այդ նյութերը իր նոր գրվելիք հայկական օպերայի համար։

ՆԿԱՐԻՉ Վ. Մ. ԳԱՅՖԵԼՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԸ.— Լրացավ նկարիչ Վ. Մ. Գայֆելյանի ծննդյան 75-ամյակը։ Այդ առթիվ Երևանի Արվեստի աշխատողների տանը կայացավ հոբելյանական երեկո։ Հոբելյարին ողջունեցին Հայաստանի արվեստի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Հոբելյարի անունով ստացվել էին ողջույնի բազմաթիվ հեռագրեր Մոսկվայի, Լենինգրադի, Ուկրաինայի, Լատվիայի, Լիտվայի, Վրաստանի, Ադրբեջանի և այլ ռեսպուբլիկաների նկարիչներից։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով, ծննդյան 75-ամյակի կապակցությամբ, նկարիչ Վ. Գայֆելյանին շնորհվել է արվեստի վաստակավոր գործիչի պատվավոր կոչում՝ նկարչական արվեստի զարգացման և երիտասարդ նկարչական ուժերի դաստիարակման գործում մատուցած ծառայությունների համար։

ՎՅՏՆԱՄԱ-ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Սույն թվականի հոկտեմբերի սկզբներին Հայաստան այցելեց Վյետնամա-Սովետական բարեկամության ընկերության պատվիրակությունը, որը ՍՍՌՄ էր ժամանել Արտաստմանի հետ կուլտուրական կապի Համամիութենական ընկերության հրավերով։

Պատվիրակությունը Հայաստանում մնաց 6 որ։ Հյուրերը ծանոթացան Երևանի շինարարությանը, եղան կրթական հաստատություններում, արդյունաբերական ձեռնարկություններում, թատրոններում, հանդիպում ունեցան կուլտուրայի և արվեստի աշխատողների հետ, այցելեցին Սևան, Արզնի, եղան Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում։

Ամենուրեք հյուրերին ցույց տրվեց բացառիկ ջերմ ընդունելություն և ընձեռնվեցին բոլոր հնարավորությունները ռեսպուբլիկայի տնտեսական և կուլտուրական կյանքի հետ ծանոթանալու համար։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԱՎԵՐԴՈՒՄ.— Ալավերդին Սովետական Հայաստանի արդյունաբերական կենտրոններից մեկն է։ Այստեղ են գտնվում պղնձաձուլական խոշոր գործարանը, քիմիական պարարտանյութերի գործարանը և մի քանի այլ ձեռնարկություններ։ Ամեն տարի խոշոր գումարներ են ծախսվում քաղաքի բարեկարգման, բնակարանային և կոմունալ շինարարության վրա։

Այժմ այստեղ կառուցվում են մի շարք բնակելի շենքեր քաղաքի գործարանների բանվորների համար։ Բացված է դեռևս մի նոր փողոց։ Քաղաքի կենտրոնում կառուցվում է պղնձաձուլական գործարանի բանվորների կուլտուրայի պալատը։ Նախատեսված է կառուցել երկաթուղային կայարանի նոր շենք։

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ՍԵՅՍՄՈԿԱՑՈՒՆ (ՇԱՐԺԱԴԻՄԱՑԿՈՒՆ) ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ.— Սույն թվականի սեպտեմբերի վերջերին Երևանում տեղի ունեցավ սեյսմոկայուն շինարարության հարցերին նվիրված խորհրդակցություն, որը հրավիրել էր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Շինանյութերի և կառուցումների ինստիտուտը։ Խորհրդակցությանը մասնակցում էր շուրջ 200 մարդ, այդ թվում Մոսկվայի, Թբիլիսիի, Բաքվի, Աշխաբադի, Տաշքենդի, Թիլիսիի, Ստալինաբադի և այլ քաղաքների գիտական տարբեր հաստատությունների ներկայացուցիչները։

Խորհրդակցությունում լսվեցին 17 զեկուցումներ նվիրված սեյսմոկայուն շինարարության տարբեր հարցերին։ Տեխնիկական ինչպիսի՞ կանոնների համաձայն պետք է կառուցվեն բնակելի, հասարակական, արդյունաբերական և այլ կարգի շենքերը այն վայրերում, որտեղ հաճախակի տեղի են ունենում կործանարար երկրաշարժեր, ահա այն հիմնական հարցը, որը վաղուց ի վեր զբաղեցնում է շինարարական գործի մասնագետներին, և որը խորհրդակցության մասնակիցների քննության առարկան էր։

Խորհրդակցությունը անհրաժեշտ համարեց ուժեղացնել հիշյալ բնագավառում տարվող հետախուզական աշխատանքները և նշվեց այդ աշխատանքների ուղղությունը։ Միաժամանակ առաջարկվեցին ուսումնասիրման մի քանի նոր եղանակներ։

ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐ ԱՐՎԵՍՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ.— Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության սույն թվականի սեպտեմբերի 25-ի Հրամանագրով, սովետահայ երաժշտական և թատերական արվեստի զարգացման գործում այլի ընկնող ծառայությունների համար, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում է շնորհված մի խումբ արվեստագետների։ Նրանց թվումն են Երևանի օպերային թատրոնի դերասանուհի Գոհար Գասպարյանը, Երևանի Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնի ռեժիսյոր Լևոն Քալանթարը, Հայֆիլհարմոնիայի երգչուհի Սուրիա Կաչարը և ուրիշներ։

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը զգալի աշխատանք է կատարում ժամանակակից հայկական գյուղի կուլտուրան, կենցաղը, ժողովրդական բանահյուսությունը ուսումնասիրելու ուղղությամբ։ Այս տարի ինստիտուտը այդ նպատակով մի շարք արշավախմբեր է գործուղել ռեսպուբլիկայի տարբեր շրջանները։ Այդ արշավախմբերից մեկը Դալինի, Ապարանի և Ստեփանավանի շրջաններում ազգագրական հարուստ նյութեր է հավաքել հին և ժամանակակից հայկական գյուղերի կենցաղի, ընտանեկան նիստ ու կացի, ժողովրդական երգերի ու հեքիաթների վերաբերյալ։ Մյուս արշավախմբերի կողմից հարուստ նյութեր են հավաքվել հայկական բարբառների վերաբերյալ։

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԾ ՊԱՀԱՆՋ.— Հայաստանի գյուղերում և քաղաքներում անդադար աճում է կենցաղային գործածության նորագույն էլեկտրական առարկաների պահանջը։ Այսպես, օրինակ, ընթացիկ տարվա անցած 9 ամիսների ընթացքում երևանի արդյունաբերական ապրանքների խանութները բնակչությանը վաճառել են մի քանի անգամ ավելի սառցարաններ, փոշեծծիչներ, արդուկներ, հատակ սրբող, լվացք անող մեքենաներ և այլ իրեր, քան անցյալ տարվա նույն ժամանակամիջոցում։ Նման իրերի մեծ պահանջ են ներկայացնում գյուղական վայրերի բնակիչները։ Նույն ժամանակամիջոցում էջմիածնի, Աշտարակի, Հոկտեմբերյանի և մի քանի այլ շրջանների բնակիչները գնել են ավելի քան 2.000.000 ռուբլու տնային գործածության զանազան էլեկտրական իրեր։

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ.— Ռեսպուբլիկայի ազգաբնակչության կողմից մեծ պահանջ է ներկայացվում նաև մարդատար ավտոմեքենաների նկատմամբ։ Այս տարվա անցած 9 ամսում գյուղական և քաղաքային բնակչությանը անհատական օգտագործման համար վաճառվել է 300 ավտոմեքենա։ Մինչև տարվա վերջը անհատ քաղաքացիներին վաճառելու համար կստացվի ևս 200 ավտոմեքենա։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Հայաստանի խոշոր գյուղերի մեծ մասում գոյություն ունեն հատուկ գրախանություններ, որոնք իրենց արժանի տեղն են գրավում գյուղական կուլտուրական հաստատությունների շարքում։ Այդպիսիներից մեկն է Վերին Արտաշատ գյուղի գրախանությունը։ Այն տեղավորված է վարդագույն տուֆից կառուցված մի կոկիկ շենքում։ Խանութից օգտվում են նաև մերձակա Դվին, Նորաշեն, Այգեստան գյուղերի բնակիչները։

Խանութում միշտ կարելի է գտնել բազմապիսի գրքեր։ Միայն վերջին երկու ամսում այստեղ վաճառվել են շուրջ 25.000 ռուբլու դասագրքեր, հայ և այլ հեղինակների աշխատություններ, գիտական հանրամատչելի գրքեր։ Խանութի աշխատողների օգնությամբ Վերին Արտաշատի բնակիչներից ավելի քան 70 հոգի ձեռք են բերել սեփական փոքրիկ գրադարան։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ.—Տեղի ունեցավ Հայաստանի արհեստագործական կոոպերացիայի երկրորդ լիազորական ժողովը, որը քննության առավ կոոպերացիայի վարչության 4 տարվա գործունեությունը, ընտրեց նոր վարչություն, ինչպես նաև պատվիրակներ՝ Արհեստագործական կոոպերացիայի համամիութենական երկրորդ համագումարի համար։

Հայաստանի արհեստագործական կոոպերացիան ներկայումս ընդգրկում է 129 արտադրական արտելներ՝ շուրջ 16.000 անդամներով։ Ընթացիկ տարում այդ արտելները կտան 470.000.000 ռուբլու արտադրանք։ 1950 թվականի համեմատությամբ գորգերի արտադրությունը աճել է 4 անգամ և այս տարի կկազմի մոտ 70.000 քառակուսի մետր։ Նույն համեմատությամբ կահույքի արտադրությունն աճել է 3 անգամ, տնային գործածության ամանեղենի թողարկումը 4 անգամ և այլն։

ԽԱՂՈՂԻ ԱՌԱՏ ԲԵՐՔ.— Այս տարի Հայաստանի այգեգործական շրջաններում խաղողի բարձր բերք է ստացվել։ Առանձին շրջաններում հեկտարից ստացվել է 100—120 ցենտներ բերք։ Կան շատ կոլեկտիվ տնտեսություններ, որոնք հեկտարից ստացել են մինչև 140—150 ցենտներ խաղող։ Բոլոր այգեգործական շրջանները ժամանակին կատարեցին խաղողի հանձնման պետական առաջադրանքը և մթերակայանները հանձնեցին նախատեսված պլանից 20-ից մինչև 50 տոկոս ավելի խաղող։ Միայն Արտաշատի շրջանի կոլտնտեսությունները, որոնք պլանից ավելի հանձնել են 30.000 ցենտներ խաղող, պետությունից ստացել են ավելի քան 50.000.000 ռուբլու եկամուտ։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԳԵՈՐԳ Զ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՇՎԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԵՋ

Կիրակի, հունիսի 27-ին, տոնն էր Կաթողիկե եկեղեցվո Սրբո Էջմիածնին։ Զուգադիպությամբ մը, այդ օրը, Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարին մեջ, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեցավ նորին Ս. Օծության Տ. Տ. Գեորգ Զ. երջանկահիշատակ Կաթողիկոսին մահվան քառասունքին առթիվ։

«Հայր մերնեն առաջ, օրվան պատարագիչը՝ հոգեշնորհ Տ. Հայկազուն վարդապետ Աբրահամյան, որ նոր վերադարձած էր Ս. Էջմիածնեն, հոգեցունց քարոզով մը բացատրեց օրվան տոնին իմաստը, բնաբան առնելով «Ինկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհիս» գեղեցիկ խոսքերը։ «Ս.Գրիգոր Լուսավորիչ,— ըսավ հոգեշնորհ հայրը ի մեջ այլոց,— երբ դուրս կելլեր խոր վիրապեն, լուսո խորաններ կանգնելու մասին խորհեցավ, վասնզի անոնցմով էր, որ պիտի լուսավորվեր Հայաստան աշխարհը։ Իրականացած էր իր ծրագիրը։ Կառուցվեցավ Ս. Էջմիածինը տ ապրեցավ այս ժողովուրդը Լուսավորչի հավատքով լեցուն։ Շատ փոթորիկներ անցուց մեր երկիրը, փառքի տ տառապանքի օրեր եկան տ անցան, սակայն Մեծ Սուրբին հավատքը կա տ կմնա, և դեռ պիտի շարունակվի դարերու ընթացքին...»։

Ակնարկելով Հայաստանի ժողովուրդին, հայր Հայկազունը ավելցուց. «Ավանդապահ և հավատացյալ են մեր Հայրենիքի հարազատները։ Ամեն կողմե եկած էին և ամենքը ի մի կուլային իրենց Հայրապետին կորուստը, եկեղեցին՝ իր պատվական Պետը, ժողովուրդը՝ իր իմաստուն Առաջնորդը։ Անոնց մեջ Լուսավորչի հավատքը ավելի զորավոր կապրի քան արտասահմանի հայության մեջ։ Հոգեկան հպարտություն զգացինք, երբ տեսանք կառուցվող շենքերու կողքին, եկեղեցվեր նաև հավատքը մեր ժողովուրդին մեջ։ Մեր եղբայրներն ու քույրերը հոն պինդ կառչած կմնան իրենց եկեղեցիներուն տ նախնիքներու հավատքին։ Այս բոլորը մենք տեսանք մեր աչքերով և ոչ թե լսեցինք միայն։ Եթե վերցվին լուսո խորանները, լույս չի կրնար ծագիլ Հայաստան աշխարհի վրա, և այսօր, հայկական կառավարությունը ձեռնարկած է վերանորոգելու մեր բոլոր եկեղեցիներն տ հիշատակարանները՝ իրենց հին փառքին հավասարության հասցնելով զանոնք։»

Ապա հանգուցյալ Վեհափառին ակնարկելով, ան ավելցուց. «Ան վերակազմած է Հոգևոր Ճեմարանը իր պաշտոնաթերթ «Էջմիածին»ով, միաբանական կյանք ստեղծած է Իր շուրջը, և կազմակերպած է Հայաստանի եկեղեցիները, և արտասահմանը կապած Ս. Էջմիածնին։ Թեև այսօր հեռացած է մեզմե, սակայն Անոր հոգին կսավառնի մեր վերև, կապրի տ կգործե մեր մեջ։ Ան կուզե, որ Ս. Էջմիածնա լույսը սփռվի ամբողջ հայության վրա։ Ան չէ ուզած որ, նույնիսկ օր մը մութին մեջ մնա համայն հայության լույսի այս կեդրոնը և անոր համար ալ, Իր կենդանության Տեղակալ նշանակած և վավերացուցած է մեր Պատրիարքական տեղապահ դերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, տ փափագ հայտնած, որ օր մըն ալ բաղմի Իր Աթոռին վրա։ Այսօրվան մեր Հայրենիքին շեն տ շող կյանքը և եկեղեցիներուն տ կրոնողներուն բարձրացումը, մեծ մասամբ, կպարտինք Գեորգ Զ.ի նման մեծ առաջնորդներուն։ Ու ողջույնները հղորդելով մեր հայրենի ժողովուրդին, հոգեշնորհ հայրը վերջացուց իր խոսքերը ըսելով. «Անոնք ես

կհետաքրքրվին ձեզմով և կմաղթեն, որ դուք ապրիք երջանիկ և մնաք հայ մինչև այն օրը, ուր ամենքդ միանաք Մայր Հայրենիքին ծոցին մեջ։ Արարատի փեշերուն, Աստված հաստատ թող պահե Հայաստան աշխարհը ոչ անփորձ՝ հայ ժողովուրդը, և անմար մնա լուսավորչի կանթեղը, Ս. Էջմիածինս։

Հավարտ սուրբ պատարագի, հոգեհանգիստի մասնավոր պաշտոն կատարվեցավ ի հանգիստ նորոգ հանգուցյալ երջանկահիշատակ Հայրապետին, նախագահությամբ Էջմիածնա Տեղակալ սրբազան Հոր։

Հավատացյալներու խուռն բազմություն մը կհետևեր սրտագրավ ու հոգեհույզ մեղեդիներուն, և շատերուն աչքերուն մեջ արցունքի կայլակներ կփայլեին։ Անոնք ծնրադիր, կարծեք կհաղորդակցեին Վեհափառ Հայրապետին հոգիին հետ։ Հոգեհանգստյան այս թախծալից ու տպավորիչ արարողությունն ետք, հուզումը որոշ կերպով համակած էր ներկաները և բոլորին սրտանց մաղթանքն էր բազմած տեսնել Ս. Էջմիածնի Գահին վրա Գեորգ Զ.ի արժանավոր հաջորդը, հանձին նորընտիր Տեղակալ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի։

ԹՂԹԱԿԻՑ

(Բեյրութ, «ՁԱՐԹՈՆՔ» օրաթերթ, 8 Ճուլիսի 1954 թ., № 239 (4931)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՎԱԽՃԱՆՄԱՆ ԱՌԹԻՎ

Ամբողջ աշխարհի հայությունը ցնցող բոթը՝ Էջմիածնա Ամենայն Հայոց Հայրապետ Գեորգ Զ. Զորեքչյանի վախճանումը խոր սուգի մատնեց նաև եթովպահայությունը։

Ծրանաշնորհ Հայրապետի վախճանման քառասունքին առթիվ մատուցվեցավ հանդիսավոր սուրբ պատարագ և հոգեհանգիստ։ Պատարագեց հոգևոր հովիվ Հովհաննես ավագ քահանա Կեհերյան, որ գրավոր կերպով ներկայացուց նաև հանգուցյալ Հայրապետը և Իր կրոնական արժանիքները։

Բացի հայ գաղութեն, ներկա էին նաև եթովպացվոց կրոնապետ Ամենապատիվ Տ. Վասիլիոս արքեպիսկոպոս և հույն համայնքի կրոնապետ Նիկոլա արքեպիսկոպոս իրենց հետևորդներով։

Հաջորդ կիրակին, 27 Հունիսին, «Արարատ» միության սրահին մեջ տեղի ունեցավ հիշատակի երեկոն։

Բացման խոսքը ըրավ պարոն Հ. Նագգաշյան։ Ան հակիրճ խոսքերով ներկայացուց վախճանյալ Կաթողիկոսը, որ Մեծի Տանն Կիլիկիո նույնպես հանգուցյալ Գարեգին Կաթողիկոսին հետ ձեռք-ձեռքի տված՝ հիմը դրավ երկու Աթոռներու միջև տիրող եղբայրական գործակցությանն։

Ապա «Մուրադյան» երգչախումբը, ղեկավարությամբ պարոն Ն. Նալբանդյանի, երգեց երկու շարականներ։ Պարոն Մ. Քյոշկերյան հարազատ ապրումով արտասանեց Վ. Թեքեյանի «Ինկեղեցին հայկականը», որմե ետք խոսք առավ օրվան առաջին բանախոս արժանապատիվ Տ. Վարդան քահանա Տ. Աստուրյան։ Տ. Հայրը խղճամիտ աշխատանքի մը արդյունքը եղող մանրամասնությամբ ներկայացուց երանաշնորհ Վեհափառին կենսագրությունը և անոր կրոնական գործունեությունը, հուզված շեշտերով ողբալով նաև մեծ կորուստը, որուն ենթարկվեցավ Հայ և միջազգային Եկեղեցին։ Այս բանախոսությունեն ետք պարոն Է. Ճեռահյան և օրիորդ Ա. Բաղդասարյան ջութակի ու դաշնակի վրա նվագեցին դասական ու հայկական երգու կտորներ։

Հետո բեմ բարձրացավ օրվան երկրորդ բանախոսը՝ պարոն Հ. Ուզունյան, որ շուրջ քսան վայրկյանի ամփոփ բանախոսությամբ մը և սահուն ու գեղեցիկ լեզվով մը ներկայացուց Ս. Էջմիածինը իբր պատմական արժեք, իբր հայուն հավատքին ու գոյատևման ոգիին խորհրդանշանը և հանգուցյալ Ամենայն Հայոց Հայրապետը իբր այդ Աթոռին արժանավոր Գահակալը։

«Մուրադյան» երգչախումբի կողմե դարձյալ երկու շարականներու երգվելեն ետք, գաղութիս հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Հովհաննես ավագ քահանայի «Պահպանիչ»ով վերջ գտավ այս հիշատակի երեկոն, որ մեծապես տպավորեց ներկաները։

Այս առթիվ կարժե նաև շնորհավորել ապագա խոստացող տաղանդավոր նկարիչ պարոն Ալեքս Պողոսյանը, որ ընդառաջ երթալով վարչության փափագին, գծած էր երանաշնորհ Հայրապետին մեծադիր նկարը։

ԹՂԹԱԿԻՑ

(Բեյրութ, «ՁԱՐԹՈՆՔ» օրաթերթ, 3 օգոստոսի 1954 թ., № 261 (2953)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԳԵՈՐԳ Զ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԱՌԹԻՎ

Նախորդ թղթակցություններես մեկուն մեջ գրած էի, թե մեծ պատրաստություններ կտեսնվին արժանավայել կերպով տոնելու համար երանաշնորհ մեծ Հայրապետին՝ Գեորգ Զ.ի քառասունքը։ Արդարև, մեր ակնկալությունները իրականացան. բոլոր հայրենասեր հայերը և Ս. Էջմիածնի հավատարիմ զանգվածը իր ամբողջությանը մեջ խուտներամ եկած էին Պրադոյի Ս. Սահակ-Մեսրոպ Թարգմանչաց եկեղեցին՝ հարգելու համար անմոռանալի հիշատակը մեծանուն Կաթողիկոսին։ Հոն էր Պրադոյի մայր եկեղեցվո վարչական կազմը ամբողջությամբ։ Հոն էին նաև զանազան կազմակերպություններու, թերթերու և հարանվանություններու ներկայացուցիչները։

Լուսաճակատ մեծ հարուն քառասունքի արարողության համար Փարիզեն մասնավոր կերպով հրավիրված էր Կաթողիկոսական նվիրակ Սերովբե ծայրագույն վարդապետ Մանուկյան, որ խոսեցավ իր լավագույն քարոզներեն մեկը։ Հոգեշնորհ վարդապետը վեր առավ հանգուցյալ Հայրապետին արժանիքները, հասնելով մինչև Հայրենական պատերազմի օրերը, և եզրակացուց ըսելով. «Տիտանները չեն մեռնիր։ Տիտան մըն էր նաև մեծ Հայրապետը, որուն անունը և հիշատակը վառ պիտի մնան հայության սրտին մեջ»։

ԹՂԹԱԿԻՑ

(Բեյրութ, «ԶԱՐԹՈՆՔ» օրաթերթ, 6 օգոստոսի 1954 թ., № 264 (4956)

ԳԵՐԱՇՆՈՐՀ ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ ՄԱՐՍԻԼԻՈ ՄԵՋ

Անցյալ կիրակի առավոտ, Պրադոյի Ս. Սահակ-Մեսրոպ մայր եկեղեցվո մեջ պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան։

Սրբազան հայրը շատ պերճմաստ կերպով իր տպավորությունները ներկայացուց հանրության՝ մեր Հայրենիքին մասին։ Շատ խանդավառ էր սրբազանը Հայրենիքի վերելքով, ըլլա այն շինարարական թե մշակութային մարզերու մեջ։ Բաղդատելով Մարսիլիան ու Երևանը, Մամբրե սրբազան գերիվեր գտավ Երևանը ոչ թե անոր համար, որ Հայրենիքի մայրաքաղաքն է, այլ անոր համար, որ իսկապես բարձր է Երևանը որպես քաղաք՝ Մարսիլիայեն։

Հանրությունը հետաքրքրությամբ հետևեցավ սրբազանին՝ երբ այս վերջինը կխոսեր հանգուցյալ մեծ Հայրապետին և Ս. Էջմիածնա մասին.—

«Կրոնական ազատության մասին շարախոսողներ կան արտասահմանի մեջ։ Կրոնքը ազատ է մեր Հայրենիքին մեջ. երբ գերաշնորհ Տիրան սրբազան Ներսոյան ուզեց Հայաստանյայց Եկեղեցվո վրան ավելցնել «օրթոդոքս» մակդիրը, երջանկահիշատակ Հայրապետը չվարանեցավ Իր ձայնը բարձրացնել՝ շեշտելու համար գործված սխալը, այսինքն մեր Եկեղեցին «օրթոդոքս» չէ՝ այլ Առաքելական և Հայաստանյայց, նկատի չառնելով ռուսական մեծազանգված օրթոդոքս հասարակությունը։

«Եկեղեցիները միշտ լեցուն են հավատացյալներով։ Ի՞նչ է պատճառը արտասահմանի մեջ, մանավանդ հոս, Մարսիլիո մեջ։ Մարսիլիո հայ հավատացյալները ո՞ւր են։ Քանի մը տասնյակ ներկա հայ մայրե՞ր են, որ կներկայացնեն մարսիլահայ հավատացյալ հասարակությունը»։

Հայրենիքի և Ս. Էջմիածնի հանդեպ հավատարմության հորդորներ տալով վերջացուց իր քարոզը Մամբրե սրբազան։

ԹՂԹԱԿԻՑ

(Բեյրութ, «ԶԱՐԹՈՆՔ» օրաթերթ, 7 օգոստոսի 1954 թ., № 265 (4957)

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՍՈՖԻԱՅԻ ՄԵՋ

Ինչպես հայտնի է, 2—3 շաբաթե ի վեր Բուկարեստ մեջ հյուր է Ռումանահայ թեմի առաջնորդ և Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պաշճյան, որ գաղութիս շարք մը քաղաքներուն մեջ այցելություններ կկատարե այս պահուս։ Իրեն կընկերանա Ռումանահայ թեմական խորհուրդի քարտուղար Հ. Գալֆայան։

Նորին սրբազնությունը հրապարակային բանախոսություն մը ըրավ սեպտեմբեր 7-ին եկեղեցիին մեջ, նյութ ունենալով «Հայաստանի պատմական հիշատակարանները»։

Սրբազանի այս բանախոսությունը առատ լույս սփռեց մեր մշակույթի դարավոր հնությունները վրա, որոնք անհափշտակելի գանձերը եղած են դարերու հոլովույթին մեջ, կուրծք տալով բոլոր տոնձգությունները և

պահպանելով զանոնք մեր աչքի լույսի պես։ Ան ամեն մի թանկարժեք հնության վրա կանգ առնելով, ունկնդիրներու սրտերը կլեցներ անհուն կարոտով դեպի այն բնակավայրը, ուր այդ արժեքները հպարտանքի առարկա կդառնային։

Իսկ սեպտեմբեր 10-ին, Հրեաներու տան մեջ, սրբազանը հանդես եկավ բանախոսությունով մը՝ «Տպավորություններ Սովետական Հայաստանէն»։

Հազվադեպ պետք է նկատել այս ելույթը հոգևորականի մը կողմե, որ մեր Հայրենիքի իրադարձություններուն կմոտենա մաքուր զգացումով, պատվավոր հայու գիտակցությամբ։

Իր ականատեսի տպավորությունները հայտնություններ էին, որոնց պատկերացումներում մեջ ան կշեշտեր մեր ժողովուրդի հոգեկան ապրումները, շինարար ոգին և բարձր հայրենասիրությունը։ Եվ այս բորբը դրվատելով ճշմարիտ դեպքերու լույսին տակ։

Սրահի խուռներում բազմությունը հայրենասեր հոգևորականի պարզ և համոզիչ խոսքին մեջ կզգար Սովետական Հայաստանի արագընթաց վերելքը և ժողովուրդին կյանքը՝ իր բոլոր հանգրվաններով։

Մեր Հայրենիքի վերելքը նկարագրելե, սրտերը հուզելե հետո, ան իր խոսքը ուղղեց նաև մեր ժողովուրդի հետևելիք քաղաքականության, որու սայթաքումներուն վրա իր մատը դրավ փաստացի կերպով, վեր հանեց ռուս մեծ ժողովուրդի փրկարար օժանդակությունը, դատապարտելով արևմտյան իմպերիալիստներու կորստաբեր և խարդախ վերաբերումը մեր ժողովուրդի հանդեպ։ Նորին Սրբազնությունը հորդորեց գնահատել՝ ժողովրդա-դեմոկրատական երկիրներու մեջ մեր դատած անսահման ազատությունը, գիտնալով, որ արևմտյան կապիտալիստական երկիրներու մեջ հայ հայրենասերները կհետապնդվին, ուր չի թույլատրվիր նույնիսկ խաղաղության մասին խոսիլ ու հորդորեց չխաբվիլ նույն այդ շրջանակներեն, երբ անոնք խարդախ նպատակներով մեզ կերկարեն մեզի։

Պալճյան եպիսկոպոսը մոտ երկու ժամ տևող իր խոսքը ավարտեց, փառաբանելով Սովետական Միության իշխանությունը, որ հնարավորություն տված է Սովետական մեր Հայրենիքի ծաղկման և զարգացման, ինչպես նաև պաշտպան կանգնելով ժողովուրդներու եղբայրության ու խաղաղության։

Ունկնդիր հասարակությունը սրտապնդված դուրս եկավ սրահեն, իր հավատքը ա՛լ ավելի զորացնելով դեպի Սովետական Հայաստանի երջանիկ կյանքը։

ԹՂԹԱԿԻՑ

(Բուխարեստ, «ԵՐԵՎԱՆ»,
17 սեպտեմբերի 1954 թ.)

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«ԱՎԵՏԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐ»

ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Բուենոս-Այրես, տպարան «Աբարատ», 1953 թ., 208 էջ)

Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյանը, 1953 թվականին, Բուենոս-Այրեսում, «Արարատ» տպարանից լույս է ընծայել կրոնալուսավոր հոգվածների մի բովանդակալից ժողովածու՝ «Ավետարանի պատգամներ» ընդհանուր խորագրի տակ։

Սիոն եպիսկոպոսը ողջունելի քայլ է կատարել, իր համեստ լուման մտցնելով մեր արդեն իսկ ազգատոս սուրբգրական մատենագրության ուսումնասիրական ու խոպան մնացած հոգևոր գրականության անդաստանը (էջ 9)։

«Ավետարանի պատգամներ» ժողովածուն կոչված է մասամբ լրացնելու հայ հոգևոր կյանքում վաղուց անտեսված «կրոնական դպրության սեռը», որը անցյալի մեր մատենագրության ամենատարածված ու մշակված գրական ժանրն է հանդիսացել։

«Ավետարանի պատգամներ» ժողովածուում Սիոն սրբազանը գեղարվեստական նոր վերամշակման է ենթարկել սուրբգրական ավետարանական նյութերը, նոր մեկնություն ու շունչ է տվել դրանց, այդ պատգամները տոգորել է հայ շնչով ու մտայնությամբ, հավատարիմ մնալով միշտ նրանց քնագրերի քրիստոնեական իմաստին ու բովանդակությանը «Էին, անմահական, անուշ դինին նոր տիկի մեջ կմատուցվի մեր ժողովրդին, նոր բաժակով կմատակարարվի հոգևոր սննդի պապակով տուրվող հոգիներուն»—գրում է սրբազանը (էջ 10)։

Եվ արդարև, «Ավետարանի պատգամներ»ի էջերից նորից են հնչում քրիստոնեական սուրբ կրոնի հավիտենական ճշմարտություններն ու սկզբունքները, սիրո մեծ քարոզը՝ «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս» (Յովհ., ԺԳ 34)։

«Ավետարանի պատգամներում» արտահայտված զգացմունքներն ու զարգացրած, խորացրած մտքերը հեղինակի ներքին աշխարհից, համոզմունքներից, հավատից են բխում, ահա թե ինչո՞ւ սուրբգրական այդ խորհրդածությունները, խոկումները, ընդհանրացումներն ու պատմումները անմիջական են, լեցուն, արտահայտիչ ու պատկերավոր։ Սիոն սրբազանը շատ ազնիվ ու վեհ նպատակ է դրել իր առաջ. «Հոգևնորոն անունդ յամրել... հավատացյալի սրտին խոսիլ քան մտքին...»։ Արդարև, ամբողջ գիրքը ուշադիր կարդալուց հետո համոզվում ես, որ «Ավետարանի պատգամները» «արտաքուստ խոսքեր են՝ ուղղված պարզ և բարի հոգիներու, հավատքի, սիրո, լույսի և հույսի աստվածային պատգամներ՝ վերջապես սրտերուն և Աստուծո խոսքին կարոտ ու ծարավի հոգիներուն»։

Սիոն սրբազանը մեր հավատավոր ու հայրենասեր հոգևորականներից մեկն է. նա միշտ գտնվել է իր հոգևոր կոչման և պարտականության բարձրության վրա, աշխատել ու գործել է, խոսել ու գրել՝ հայ հավատացյալ ժողովրդի առաջ իր ունեցած պարտքի և կոչման խորը գիտակցությամբ։ «Խոսեցարուք ի սիրտ Նիրուսաղեմիս։ Աստված իր հոգևոր սպասավորներից այդ է պահանջում, ժողովրդի սրտով, ժողովրդի սրտի համեմատ խոսեցեք և «Մխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդ իմ»։

Ահա 25 տարի է, ինչ Սիոն սրբազանը որպես «մշակ առանց ամաթոյր խոսել ու մխիթարել է հայ հավատացյալ ժողովրդին, «բանիւ և գործով», գրչով ու կյանքով, և «Ավետարանի պատգամները հնչեցրել միշտ ամեն տեղ, ուր պարտքի ձայնը և կոչման գիտակցությունը տարել են նրան, որպես հոգևոր հովիվ, կենաց բանին քարոզիչ, ուսուցիչ. Հայրապետական պատվիրակ «Ավետարանի պատգամներ»ի գաղափարական բովանդակությունը, դեկավար գաղափարը քրիստոնեական կրոնի ճշմարտությունն է, եղեղեցասիրության, հայրենասիրության, մարդասիրության զգացմունքը։

«Ավետարանի պատգամները» բաժանվում են երկու մասերի՝ տոնական օրերի առթիվ գրի առնված խորհրդածություններ (16 հոդված, էջ 15—102), և ընդհանուր հանգամանք կրող սուրբգրական խոկումներ (14 հոդված, էջ 107—206)։

Գրքի առաջին մասը բացվում է Քրիստոսի Ս. Մենդյան պատկերների շարքով («Մենդյան պատգամը», «Խաղաղության արքան», «Նոր Մնունդ», «Հաղթություն և խաղաղություն», «Ոգեներն ու հովիվները», էջ 18—37)։

Ս. Մենդյան պատգամը գերազանցապես խաղաղության պատգամն է, մարդկանց և ազգերի, ժողովուրդների միջև համերաշխության, համագործակցության պատգամը։ Բայց, դժբախտաբար, «Նոր ծնունդն մոտավորապես քսան դար վերջ, մարդկությունը այսօր կտատապի ի խնդիր խաղաղության, ու այժմ, ամեն ժամանակ ավելի, կարոտն ունի իրական խաղաղության, տևական խաղաղությանը (էջ 15)։

Ինչո՞ւ այս ողբերգությունն ու կործանարարությունը, որովհետև «այսօր մարդիկ մոռացած են Անոր Մենդյան պատգամը... չեն փափագիր լսել Անոր խաղաղության ավետիքը։ Այս չէ սակայն բովանդակ ողբերգությունը. կա ավելի տխուր պատկեր, հատկապես «քաղաքակիրթ» ԱՄՆ-ում, որի դեմ, իր հավատի ազգ կրակով և նախանձախնդրությամբ ընդվզում է սրբազան հեղինակը։ Այսօր ԱՄՆ-ում քրիստոնեական սուրբ կրոնը կորցրել է իր հոգևոր նկարագիրը և դարձել արտաքին չոր ու ցամաք ձևերի և արարողությունների մի կմախք. «մեծաշուք հանդեսներով կտոնախմբեն Անոր Մնունդը, մեծադղորդ երգերով ու ցույցերով կկատարեն Անոր Մենդյան տոնը։ Բայց այս բոլորը արտաքին ցույց է միայն և վայելք. մարդիկ նյութականացուցած են զայն, հեռացած են Անոր խորհուրդեն ու ոգիեն։ Մնունդը այլևս հաճույքի— մարմնական, նյութական հաճույքի— օր մըն է, կարձես, մանավանդ Ամերիկայի մեջ բարեկամներու նվեր տալու և ստանալու օր մըն է միայն, քան թե հոգևոր նորշնչումի ու վերածնունդի տոնը։ Հոգևոր բիզնես, ո՞չ ավելի, ո՞չ պակաս։ Մինչ Քրիստոսի Մնունդը համաշխարհային պատմության մեծագույն դեպքերից մեկն է, այն օրը, երբ, ըստ քրիստոնեական հավատի, «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա»։ Հարկ է նորից հիշեցնել Ս. Մենդյան պատգամը մարդկանց կարծրացած գիտակցության առաջ, որովհետև «մինչև որ խաղաղության Փրկիչը վերստին չծնվի մարդոց սրտերուն մեջ, աշխարհ չի կարող տևական խաղաղություն վայելել»,— եզրակացնում է սրբազան հեղինակը։

Սիոն սրբազանը «Ավետարանի պատգամներում» միշտ անդրադառնում է խաղաղության հրատապ հարցին այն պարզ համոզմունքով, որ խաղաղությունը հարկավոր է այսօր աշխարհում բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց, այդ թվում նաև հայ ժողովրդին։

Սրբազանը դեմ է «սրով և բռնությամբ» իրագործվող խաղաղության. նա չի հավատում այդպիսի խաղաղության. «սրդար ու տևական խաղաղությունը կարելի չէ հիմնել բռնության և սուրի ուժի վրա, այլ քրիստոնեական սիրո և արդարության վրա։ Սրբազանը արդար զայրույթ ունի այն մարդկանց և աշխարհի դեմ, որոնք հրահրում են ատելություն մարդկանց և ժողովուրդների միջև և որոնք «կուզեն շահագործել պատերազմը՝ «արյունի գինով» դրամ դիզելու և հղփանալու համար»։

Առաջին մասի արժեքավոր և բովանդակալից գլուխներից մեկն է նաև կորած կյանքի (անառակ որդու առակ), կորած արժեքի (կորած փողի առակ) և կորած ոչխարի կլասիկ առակների առթիվ արված կրոնա-փիլիսոփայական խորհրդածություններն ու ավետարանական դասերը (էջ 39—46)։ Սիոն սրբազանը այստեղ ձեռնհասորեն շոշափում է մեղքի և պատժի, զղջման և ներման, և մանավանդ աստվածային ներողամտության և սիրո հարցերը։ Մեր աչքերի առաջ, ինչպես պարզ ու վեհ շրի մեջ, պատկերվում է մարդկային կյանքը իր լույս ու մութ կողմերով, մարդու հոգեկան աշխարհը, նրա տատանումներն ու ընդվզումները, նրա վիշտն ու ուրախությունը, նրա հուսահատությունն ու հավատը. «երկնք սիրո երգեր են, որոնք հաջորդաբար զիրար կգերազանցեն»։

Անառակ որդու առակը մի չքնաղ ավետարան է ավետարանների մեջ։ Աստված չի ցանկանում մեղավոր մարդու մահը. արդարն «մարդը բարձր է հնչում» նաև Աստուծո համար։ «Անառակ» բայց «որդի», մարդ է նա. եթե զղջա անկեղծորեն, նրա սրտի խորքից բխած մի կաթիլ արցունքը բավ է հալեցնելու նրա մեղքի լեռները։ Գեղարվեստական վառ ու հմտագիր գույներով Սիոն սրբազանը կարողացել է մի անգամ ևս դեղեցկացնել այդ առակները և հրամցնել իր ընթերցողներին հոգևոր մխիթարության համար ուսուցողական նկատառումներով։

Գրքի հաջողված էջերից մեկն է Քրիստոսի Հարության շարքի խորհրդածությունը («Հարության», «Ցատկի պատգամը», «Լույսի հաղթանակը», էջ 63—74)։ «Հարության անխախտ հավատքի վրա է կառուցված քրիստոնեական նկեղեցին»։ Հարությունը դեպքը «պատմական ամենեն վավերական դեպքերեն մեկն է»։ Քրիստոսի Հարության տոնը գարնան, նոր կյանքի զարթոնքի հաղթանակն է մահվան վրա։ «Ցատիկը հայությունն տոնն է գերազանցապես, հայ հավատի հաղթանակի տոնը, հայ ազգի հարության ու վերանորոգման հանդեսը...։ Հայաստանը իր ավերակներեն հարություն առած, ավելի քան քառորդ դարե ի վեր սկսած ու վերաշինված, նորեն կպայքարի խիղախորեն վերապրելու համար...։ Հայ ազգը Քիստոսի Հարության տոնին մեջ իր կյանքի վերածնունդն է տեսած ու այդ հավատքով ապրած է ու այդ հույսով հարություն առած է իր չարչարանքներու գերեզմանեն»։

Նշված արժանիքներով չի սպառվում, իհարկե, գրքի առաջին մասի նշանակությունն ու կարևորությունը։

Առաջին մասում հանգամանորեն խոսվում է քրիստոնեական մեծ տոների՝ Համբարձման (էջ 77—79), Վարդավառի (էջ 85—87), Աստվածածնի (էջ 97—102), Խաչի (էջ 91—94) մասին, գեղտրիկ խոկումներով և սրտառուչ բացատրություններով։

Երկրորդ մասում (էջ 107—208) զետեղված են «ընդհանուր հանգամանք կրող սուրբգրական կրոնաշունչ խորհրդածություններ, քրիստոնեական կրոնի էության, քրիստոնեական կենցաղի, հասարակաց վար-

քի, քրիստոնեական էտիկայի և առհասարակ քրիստոնեական առաքինությունների մասին։

Ճառերն գրված կրոնաշունչ խորհրդածություններ միշտ էլ եկեղեցական հայրերի, քարոզիչների սիրած սուրբգրական ժանրն է եղել, որտեղում հաճագիրները շոշափել են որքան կրոնա-փիլիսոփայական խորը հարցեր, նույնքան ևս բարոյականության և քրիստոնեական կյանքի վերաբերյալ ընդհանուր հարցեր, գործնական նշանակություն ունեցող հարցեր։ Սրբազան հեղինակը մտահոգվում է ԱՄՆ-ում հասակ առած հայ նոր սերնդի կրոնա-ազգային դաստիարակության հարցով։ Քայքայվում է շատ բան նոր սերնդի հոգու և դաստիարակության մեջ. արժեքների տախտակները շրջվել են. հարկ է հայ հավատի, եկեղեցասիրության, հայրենասիրության շինումը ներարկել նրանց, ջերմացնել նոր սերնդի սիրտն ու միտքը քրիստոնեական կրոնի կրակով, մեր նախնյաց սուրբ հավատի լույսով, հայ ազգային-եկեղեցական արժանապատվությամբ։ «Հայ ժողովուրդ,— գրում է սրբազանը,— մեր երանաշնորհ նախնիքը, մեր պատվական հայրերը աշխարհի լույս ընդունողներուն մեջ առաքիններեն եղան, ինչ որ պատիվ կրեն հայ ցեղին... Մեր լուսախնդիր հայրերը լայն բացին իրենց հոգվույն և մտքին պատուհանները Արդարության Արեգակին ճառագայթներուն առջև... Արդ, խնդիր է քեզ, մենք, անոնց զավակները, և այդ քանկագին ավանդին ժառանգորդները, կուզե՞նք. կաշխատի՞նք զայն անշեջ պահել, վեհության կույսերուն պես գիշեր ու ցերեկ հսկելով անոր վրա՝ որ չմարի, ու ավելի բոցավառ մեր զավակներուն, մեր հայորդներուն հանձնենք մեր անդին հրիտակը» (էջ 111)։

Երկրորդ մասում սրբազանը նորից կանգ է առնում խաղաղության ու պատերազմի հարցերի վրա, և նա շատ ճիշտ կերպով է վերլուծում պատերազմ ծնող պատճառները։ «Ի՞նչ է պատճառը այս աշխարհավեր պատերազմներուն»,— հարց է տալիս սրբազանը և ինքը պատասխանում իր հարցին. «Ազգերն ու պետությունները կոչին, կկռվին իրարու դեմ, իրարու ձեռքեն հափշտակելու համար երկիրներ և քաղաքներ, հանքեր ու հողեր, որովհետև տիրելու տենչը, իշխելու և տիրապետելու փառամոլությունն ու գազանությունը, միշտ ավելին ուզելու կիրքը՝ անհագ է» (էջ 112)։

Կրոնա-փիլիսոփայական խորհրդածությանց շարքին են պատկանում «Աշխարհի լույսը» (էջ 107), որ ինքնին մի լուսերգություն է, «Ամենավեհությունն» (էջ 119), «Թարի կյանքը» (էջ 126), «Միտք և սիրտ» (էջ 168), «Հավատքով ընթանալ» (էջ 173), որտեղ ընդարձակ վերլուծության է ենթարկվել քրիստոնեական հավատի էությունն ու սկզբունքները. «Քրիստոնյան հավատքով կընթանա և ո՛չ թե տեսությամբ»։ Գրքի հաջողված և բովանդակալից էջերից մեկն է այս գուրքը։

Քրիստոնեական բարոյականության և առաքինության հարցեր է շոշափում հեղինակը «Ցալու առաքինությունը» (էջ 112), «Հպարտություն և խոնարհություն» (էջ 132), «Անձնազոհություն և ինքնաճանաչում» (էջ 153), «Մեծության չափանիշը» (էջ 191). «Ամատուծ որդեգիրները» (էջ 186) և այլ գլուխներում։

Երկրորդ մասի ամենաուշագրավ գլուխներից մեկն է «Նոր պատվիրան» (էջ 147) գլուխը, որտեղ հեղինակը խոր վերլուծման է ենթարկել հասարակական փոխհարաբերությունները, աշխարհն ու կյանքը, և հասել այն եզրակացության, որ այսօր էլ մարդկությունը կարիքն ունի լսելու նոր պատվիրանը, սիրո, արդարության, խաղաղության պատվիրանը, որը քրիստոնեությունը բերում է մարդկության. «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցք զմիմեանս։ Սիրո պատվիրանի դիմաց ինչ ենք տեսնում աշխարհում. «մեծ ճգնաժամն մը կանգնի աշխարհ այսր, կյանքի խոյ արշավը. հնիհն վազքը մարդկությունը կքշե դեպի կործանում», որովհետև աշխարհը չի լսում սիրո պատգամը և «մարդկությունը կուզե իր աչքերը հեռու դարձնել Հիսուսի սիրո և խաղաղության դրոշեն, և արյունի, ատելության, կռվի և մարդասպանության դրոշներ բարձրացուցած է անոր տեղ» (էջ 147)։ «Այս հին չարիքին համար ամենադեղ հարցը, հին դարմանը, քրիստոնեական սերն է, Հիսուսի սիրո և եղբայրության ավետարանը»,— եզրակացնում է Սիոն սրբազանը։

«Մահ և հավիտենական կյանք» (էջ 196) գլխով փակվում է «Ավետարանի պատգամներ» հոգեշահ և բովանդակալից գիրքը, որը միաժամանակ դեղագարդվել է արվեստագետ պարոն Այվազյանի «գեղեցիկ և ներշնչող պատկերներով»։

Սիոն սրբազանը ծանոթ և սիրելի մշակներից մեկն է մեր ազգային-եկեղեցական մատենագրության. նրա բեղուն գրչին են պատկանում մի շարք արժեքավոր սուրբգրական մենագրություններ, «Աստուծոյ վարդանաց», «Լուսաշող դեմքեր և կյանք ու խորհուրդ», «Հայ եկեղեցին և նրա վարդապետությունը» (անգլերեն) և մի շարք ուրիշ սնտիպ ուսումնասիրություններ։ Սիոն սրբազանը դտնվում է իր ուժերի լրիվ ծաղկման և հասունության շրջանում։ «Ավետարանի պատգամներ»-ը լեռի ընդունելություն գտավ հայ ընթերցասեր հասարակության կողմից. և դա մեծ երաշխիք է սրբազանին՝ շարունակելու սրանից հետո ևս իր բեղմնավոր սուրբգրական աշխատությունները հոգուս Հայ Եկեղեցու և ի պայծառություն հայ եկեղեցական մատենագրության։ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, ողջունելով Սիոն սրբազանի այս նոր երկը, ցանկանում է նրան հաջողություն՝ սուրբգրական արժեքավոր, կրոնաշունչ գրվածքներով հռչակաբերելու համար մեր արդեն իսկ էխոպան մնացած հոգեոր գրականության անդաստանը։

Ա. Հ.